45. Վախցէք այն օրէն , երբ ոչ ոք ուրիշին տեղը պատասխան պիտի տայ , և երբ , ոչ բարեխօսութիւն , ոչ փոխարինութիւն և ոչ ալ ակնկալելիք օդնութիւն մը պիտի ըլլայ :

46. Մենք ձեզ փրկեցինք Փարաւոնի ընտանիքէն և զձեզ ընկճող չարիքներէն . ձեր արու զաւակները կըսպանէին և միայն էգերը կը խնայէին . ձեր Տիրոջ կողմէ զրկուած դան փորձութիւն մըն եր այդ :

47. Զեզի համար համբայ բացինք ծովին ջուրերուն մէջէն , անդունդներէն փրկեցինք զձեզ , և դուք տեսաք որ Փարաւոնին ընտանիքը խեղդուեցաւ ծովին մէջ :

48. Մինչ մենք Մովսէսի հետ զաշնազրութիւն կը կնքէինք , քառասուն գիշեր գուք հորթ կը պաշտէիք , և դուք պարտազանց եւաք :

49. Մենք ձեզի ներեցինք , որպէս զի զլջում յայտնէք մեզի :

50. Եւ Մովսէսին առվինք գիրք մը , պատուեներով միտափին , որպէս զի ձեր գործերուն կանոնագիրքը ըլլայ անիկր :

51. Մովսէս ըսաւ Խորայէլացիներուն . Ո՛վ ժողովուրդս , ինչո՞ւ ազօթէնութեան մէջ կ'իյնաք հորթ պաշտերով . վերադարձէք ձեր Սրարիչն . զոհուեցէք միմևանց համար . այս զոհութիւնը իրեն աւելի

հաճելի պիտի ըլլայ . անիկա ձեզի պիտի ներէ , որովհետեւ զթած և անյիշաչար է :

52. Դուք պատասխանեցիք Մովսէսին . Մինչեւ որ բացէ ի բաց չտեսնենք զԱստուծած , իրեն չպիտի հաւատանք : Կայծակը ձեզ ըշապատեց և ձեր դժբաղդութիւնը լուսաւորեց :

53. Մենք ձեզ կենդանացուցինք , որպէս զի դուք երախտապարտ ըլլաք :

54. Մենք ամպերը իջեցուցինք , որպէս զի ձեր վրայ չուք ըլլայ . ձեզի մանանայ և լորամարզի զրկեցինք և ըստնք . մանանեցէք այն բարիքներով զորս ձեզի կը նուուիրենք : Զեր արտառնջները միայն ձեզի վնասեցին :

55. Մենք ըսինք Խորայէլի ժողովուրդին . այս քառարին մէջ մտէք . վայելեցէք այն բարիքները զորս հոն պիտի գանէք առատօրէն . հոն մտած ատեննիդ պաշտեցէք Տէրը . ըսէք՝ մեզի թողութիւն թող ըլլայ : Զեր մեղքերը պիտի ներուին և արդարները մեր հորհներով պիտի լցուին :

56. Զարերը փոխեցին այս խօսքերը , և մենք իրենց վրայ իջեցուցինք երկինքի վրէմը , որովհետեւ անոնք ոճագործներ էին :

57. Մովսէս ջուր խնդրեց իր ժողովուրդին ծարաւը անցրնելու համար , և մենք իրեն համայնցինք իր գաւազանը ժայռին զարնել . տաներկու ալղիւրներ բղիսեցան . ամէն մարդ հասկցաւ թէ ո՛ւրտեղէն իր ծարաւը պիտի անցրնէ : Մենք ըսինք Խորայէլացիներուն . կերէք և իպրմեցէք ինչ որ կուտայ ձեզի Աստուծոյ առատաձեռնութիւնը . երբէք պարտազանց մի՛ ըլլաք և աշխարհը մի՛ պղծէք ձեր ոճիրներով :

58. Ժողովուրդը զոչեց . Ո՛վ Մովսէս , միակ արունդ մը չի բաւեր մեզի . հայցէ Աստուծոյ , որ ձիթա-

պղտուղ, վարունգ, սխառ, ոսղ և սոխ բուսցնէ: Մալսէս պատասխանեց. Կուզէք լաւագոյն վիճակ մը ունենալ, վերադարձէք Եգիպտոս, ու հոն պիտի գրանէք ձեր ուղածը: Ստորնացումը և աղքատութիւնը իրենց բաժին ինկաւ: Երկնաքի բարկութիւնը ծանրացաւ իրենց վրայ, որովհետեւ անոնք բնաւ չի հաւատացին իր հրաշքներուն, և անարդար կերպով սպաննեցին մարդարէները. անոնք ըմբոստներ և պարապանցներ եղան:

59. Անապարակոյս, Խալաֆները, Հրէաները, Քրիստոնեաները և Սարէացիները (կոսպաշտ), որոնք Աստուծոյ և վերջին դատաստանին կը հաւատան, և որոնք բարիք կը գործեն, իր ձեռքերէն պիտի ստանան վարձատութիւնը. անոնք երկիւղէ և չարչարանքէ զերծ պիտի ըլլան:

60. Երբ մենք ընդունեցինք ձեր դաշինքը և ձեր դլուխին վերեւ բարձրացուցինք Սինա լեռը, ըսինք. Երախտագիտութիւնը ընդունեցէք մեր օրէնքները, և պահեցէք անոնց միշտակը, որպէս զի երկիւղի ճամբուն մէջ ընթանաք:

61. Բայց քիչ վերջ մոլորութեան մէջ ինկաք, և եթէ աստուածային գութը չըլլար, ձեր կորուստը անկակած էք. դուք կը ճանչնաք ձեր մէջէն անոնք որ օրինապանց եղան շաբաթ օրը, որով մենք զանոնք դժնէտեսիլ կապիկներու փոխեցինք⁽¹⁾:

62. Անոնք օրինակ եղան իրենց ժամանակակիցներուն, ապագայ սերունդներուն և անոնց՝ որոնք կ'երկնչին:

(1) Ապ-իւլ-Փէտա կը հազորդէ որ, Խալաֆները կը հաւատան թէ Կարմիր Ծովին եզերքը հաստատուած Այլա քաղաքին քնակիչներուն մէկ մասը շաբաթ օրը տան բռնել քարոզելուն համար, Դաւիթ զանոնք անիծեց և կապիկի վերածեց. Յ որ այս վիճակին մէջ մասցին. յետոյ բուռն փոթորիկ մը զանոնք ծովը:

63. Մոլսէս ըսաւ Խարայէլացիներուն. Աստուած ձեզի կը հրամայէ կով մը մատաղ ընել իրեն. բայց անոնք պատասխանեցին. դուն մեր գիւրախաբութիւնը չարաչա՞ր գործածել կ'ուղես: Մովսէս ըսաւ. ես կը դառնամ Աստուծոյ, որպէս զի անմիտներուն կարզը չի դառուիմ: Խնողը Աստուծմէ, յարեցին Խարայէլացիները, որ մեզի յայտնէ թէ ինչ տեսակ կով մը պէտք է մատաղ ընենք իրեն: Մարգարէն պատասխանեց. ո՛չ ձեր ըլլայ ո՛չ մատղաշ, այլ միջին տարիք ունենայ. ձեզի արրւած հրամանը գործադրեցէք:

64. Խարայէլի ժողովուրդը շարունակեց ըսել. խնորէ Աստուծմէ և խմացուր թէ ինչ զոյն պէտք է ունենայ կովը: Մովսէս պատասխանեց. թող ըլլայ բաց գեղին գոյնով և ակնանածոյ:

65. Խնորէ Աստուծմէ որ աւելի որոշակի ցոյց տայ իր ուղած մատաղին նկատմամբ. մեր կովերը իրարու կը նմանին, և եթէ Աստուած ուղէ, ցոյց պիտի տայ թէ ո՛րը ընտրելու հնք:

66. Եցր կովը պէտք չէ ծառացած ըլլայ հողը հերկելու, հոնձքերը ջրելու. անիկա արուի մերձեցումը կասած պէտք չէ ըլլայ, անա՛ այս է Տէրոջը պատաւէրը: Այն ատեն ժողովուրդը գոյցը. կիմա մեզի ճշմարտութիւնը ըսիր: Ու անոնք, անհնաղանդ ըլլալու քիչ մնացած, կով մը մատաղ ըրին:

67. Երբ դուք մարդ մը ապաննեցիք, և այդ ապանութիւնը վէճի դուռ բացաւ ձեր մէջը, Աստուած ձեր ծածկածը երեւան հանեց:

68. Մինք հրամայեցինք որ կովին անդամներէն մէկ կովը սպանեալին զարնէք. այս կերպով է որ Աստուած յարութիւն կուտայ մեռեալներուն և ձեր առջեւ կը շող-

չողացնէ իր հրաշքները, որպէս զի հասկնաք⁽¹⁾ :
69. Այս հրաշքնն ետք ձեր սիրաները քարեն աւելի
կարծր եղան. որովհետեւ Բարձրեալին ձայնէն ժայռը
ճեղբռւեցաւ և կիսարաց կողերէն գետեր սկսան հոսիլ:
Բայց Ամենակարովը ուշադիր կը նայի ձեր ըրածներուն:

70. Ո՞վ իպամիներ, կը կարծէք որ Հրէաները ձեր
հաւատքը ունենան. մինչ անոնք Աստուծոյ խօսքը մտիլ
կընէին, իրենց մէջէն մաս մը ինեղաթիւրեց անոր իմաս-
տը, զայն հասկնալէ ետք. և անոնք զիտէին այս բանը :

71. Հաւատացեալներուն քով անոնք կը սպարծենան
իրենց կրօնքով. բայց երբ իրենք իրենց կըլան, կըսն. կրիմէ մենք կրնանք իսլամներուն սպասմել ինչ որ Աստ-
ուած յայտնած է մեզի, որպէս զի մեզի հետ վիճաբանին
անոր առնեւը. միթէ մենք չենք տեսներ այս բանին հե-
տեւանքները :

72. Ուրեմն անոնք չեն զիտեր թէ Բարձրեալը կը
հասկնայ իրենց ծածկածը ինչպէս յայտնածը :

73. Անոնց մէջէն, ուսմիկը միայն տւանդութեամբ կը
հանչնայ Հնդամատեանը. միայն կոյր հաւատք մը ունի.
Բայց վայ անոնց որ զայն զրեցին իրենց տպականարար

(1) Մեծահարուստ Խորայէլացի մը սպաննուած էր. անոր աղ-
դականները Մովսէսին առջեւ տարին Ենթադրեալ սպաննիչները,
որոնք կ'ուրանային. վկոյ մկար. ճշմարտութիւնը երեւան հանել
դժուար էր. այս տաեն Աստուած հրամայեց կով մը մորթել մաս-
նաւոր պայմաններու տակ. մատաղին լեզուն դպցուցին սպաննեալին
դիմկին, որ կեանք տաւաւ, ոտքի ելաւ, զինքը սպաննողին անունը
տուաւ և կրկին մեւաւ. Այս զրոյցը Արարները քաղած են Հնդա-
մատեանէն, որուն մէջ կատուած կը հրամայէ մոտաղ ընել կար-
մըրօրակ և լուծ չկըած չսփահաս կով մը, որուն դիմկը կ'այ-
րուէր և ածիւնը ջուրի մէջ խառնուելով կը դործածուէր երբ
մաքրագործիչ:

ձեռքովը, անով ողորմնիի գումար մը շահելու համար:
Ահաւասիկ Աստուծոյ զիրքը, վայ անոնց որ զրամ ստա-
նալու համար զրեցին զայն:

74. Անոնք կըսն. մենք սահմանափակ թուով օրեր
միայն դժոխքի բոցերուն պիտի ենթարկուինք: Պատաս-
խանէ իրենց. Աստուած ատանկ խոստում մը տուած
ձեզի. արդեօք իր խոստումը ետ չպիտի՝ առնէ բնաւ,
կամ արդեօք ձեր չփացած բաներուն վրայ չէ որ կը
խօսիք դուք:

75. Անտարակոյս, անոնք որ միայն գէշ գործեր ը-
րած են, և մեղքերով չը կապատուած են, անոնք յաւիտ-
եանս պիտի ենթարկուին դժոխքի կրակներուն:

76. Բնդիակառակը, հաւատացեալները որոնք բարիք
կը գործեն, արքայութեան մէջ պիտի բնակին յաւիտ-
եանս յաւիտենից:

77. Երբ մենք գաշինք կնքեցինք Խորայէլի զաւակ-
ներուն հետ, անոնց ըսինք. միակ Աստուած մը պաշտե-
ցէք ձեր հայրերուն, աղքականներուն, որբերուն և աղ-
քամաներուն բարիք ըրէք. բոլոր մարդոց հետ մարդ-
կութեամբ վարուեցէք. աղօթք ըրէք. ողորմութիւն
տուէք. բայց, ի բաց առեալ ձեր մէջէն սակաւաթիւ մաս
մը, գուք չետեւեցաք այս պատուէրներուն և սիստ ձամ-
բէ զացիք:

78. Երբ ձեզի հետ դաշինք կնքեցինք, ձեր եղբայր-
ներուն արիւնը բնաւ. չի թափելու և անոնց ժառանգու-
թիւնները չըրաւելու համար, գուք վաւերացուցիք այս
զաշինքը և վկայ եղաք:

79. Բայց յետոյ ձեր եղբայրները կոսորեցիք. գա-
նոնք իրենց կալուածներէն վաստեցիք, իրենց ապաստա-
րաններուն մէջ փոխադրեցիք պատերազմը և անարդա-

բութիւնը։ Երբ ձեզի գերիներ ներկայանան, դուք դաշնոնք վերստին կը դնէք. բայց ձեզի արգիլուած էր թշնամութեամբ վարուիլ անոնց հետ. ուրեմն դուք կը հաւատաք օրէնքի մէկ մասին միայն, և միւաները կը մերժէք. այս ընթացքին պատիժը ի՞նչ պիտի ըլլայ. աշխարհի վրայ խայտառակութիւն և վերջին դատաստանի օրը՝ չարչարանք, որովհետեւ Աստուած բնաւ անտարբեր տէքով յի դիտեր ձեր գործերը։

80. Ահա այս է վիճակը անոնց որ հանդերձեալ կեանքը դուեցին աշխարհացին կեանքին. բայց իրենց սպասող պատիժը բնաւ չպիտի մնամանայ, և անոնք յոյսի ազբիւր մը չպիտի ուշենան։

81. Մենք Մովսէսին տուինք Հնդամտուեանը. անկէ ետք զրկեցինք Աստուծոյ պատուիրակները. Մարիամի որդի Յիսուսին չնորհեցինք հրաշք գործելու կարողութիւնը. մենք զայն զօրացուցինք որբութեան ողիով⁽¹⁾: Ամէն անզամ որ Բարձրեալին պատուիրակները ձեզի բերեն վարդապետութիւն մը, զոր ձեր աւդականած սիր, տերը մերժեն, դուք դուռզարաք դէմ պիտի դնէք, և զայն առւտ պիտի հոչակէք. ուրիշները պիտի կոտորէք։

82. Անոնք ըսին. մեր սրտերը անթրիստ են. Աստուած դանոնք անիծեց՝ խարերաց ըլլալիուն համար. ոչ, որքան փոքր է թիւը հաւատացեալներուն։

83. Աստուած անոնց զրկեց Քուրանը հաստատելու համար իրենց նուռիբական մատեանը (անկէ տուաջ անոնք երկինքի օգնութիւնը կը հայցէին անհաւատաներուն դէմ), Բայց անոնք այդ գիրքը ընդունելնէն ետքն ալ մերժեցին։

(1) Սըբութեան ոգի ըսելով իսլամ աստուածաբանները կը հասկնան Դարրիւլ հրեշտակապետը։

անոր հաւատ ընծայել, թէեւ անոնց ըսուած էր նախապէս թէ այդպէս զիրք մը պիտի ընդունին. բայց Աստուած անէծքով պատժեց անհաւատաները։

84. Անոնք թշուառաբար ծախած են իրենց հոգին անշահ գումարի մը փոխարէն. անոնք բնաւ չեն հաւատար, երկինքին զրկուածին, որովհետեւ նախանձու են. Աստուած չնորհ բրաւ զրկելու զիրք մը իր ծառաներէն անոր՝ որ իրեն հաճոյ եղաւ ընտրել։ Անոնք Աստուծոյ բարկութիւնը շարունակ իրենց վրայ կը հրաւիրեն. բայց ամբարիշանները նախասալից տանջանքներ պիտի կրեն։

85. Երբոր իրենց հարցնէք. կը հաւատաք այն բժնին զրի Աստուած զրկեց երկինքին. անոնք կը պատասխանին. մենք կը հաւատանք այն մատեանին զրի ընդունեցինք, բայց կը մերժեն ընդունիլ այն ծշմարիտ զիրքը որ անկէ ետքը եկաւ, իրենց նուռիբական մատեանին վրայ կնիք մը դնելու համար։ Ըսէք իրենց. ինչո՞ւ սպաննեցիք Աստուծոյ մարգարէնները, եթէ անոնց կը հաւատայիք։

86. Մովսէս ձեզի երեւաց հրաշներով, բայց դուք ամբարիշտ ըլլանուգ համար նորթ պաշտեցիք։

87. Երբ ձեզի հետ զաշինք կնքեցինք, և Ախնա լերան վրայ բարձրացանք, աս ըսուերը արտասանեցինք. մեր օրէնքները եռանդով ընդունեցէք. անսացէք անոնց։ Ժողովուրդը պատսախանեց. քեզ լսեցինք, բայց չպիտի հնազանդինք քեզի։ Ամբարիշանները իրենց սրտին մէջ տակաւին կը պաշտէին իրենց շնած հորթը։ Ըսէ՛ անոնց. ձեր հաւատքը, եթէ երբէք ունիք, ձեզի գէշ թերդութիւններ կընէ։

88. Ըսէ՛ իրենց. եթէ ճիշդ է որ արքայութեան մէջ առանձին բնակավայր մը ունիք, միւս մահկանացուներէն անջատ, համարձակեցէք մահուան ցանկալ։

89. Անոնք երբէք չպիտի ցանկան այս բանին . իրենց ոճիրները կ'ահարեկեցնէ զիրենք , և Աստուած կը ճանչ-նայ չարագործները :

90. Դուն պիտի տեսնես որ անոնք առելի յարած են կեանքին , քան մարդոց մնացեալ մասը , քան նոյն ինքն կրապաշտները . իրենցմէ ոմանք պիտի ուզէին հաղար տարի ապրիլ . բայց եթէ այսքան ալ երկար ապրին , դարձեալ չպիտի կարենան ճողովորի այն տամնջանքներէն որոնք կրապասեն իրենց , որովհետեւ Աստուած կը տեսնէ անոնց արարքները :

91. Բաէ . ո՛վ պիտի ինքզինքը թշնամի հոչակէ Գար-րիէլին , որ , Աստուծոյ թոլուութեամբ քու սրափդ վրայ զետեղեց Քուրանը , անկէ առաջ տրուած նուիրական մատ-եանները հաստատելու համար , և որպէս զի անիկա լվայ հաւատքին օրինագիրքը և հաւատացեալները երջանիկ լոնէ :

92. Ան , որ թշնամի է Աստուծոյ , իր հրեշտակնե-րուն , իր սրաշաօնեաներուն , Գարրիէլի և Միքայէլի , Աստուած ալ իրեն թշնամի պիտի լվայ , որովհետեւ անիկա կ'ատէ օրինապահցները :

93. Մենք քեզի զրկեցինք աչքադու նշաններ . մի-այն չարամիսները պիտի մերժեն անոնց հաւատայ :

94. Ամէն անգամ որ Աստուծոյ հետ դաշինք մը կրն-քեն , իրենց մէկ մասը չընդունիր . մեծ մասը հաւատ չունի :

95. Երբ Աստուծոյ պատղամաւորը իրենց մէջ երեւ-ցաւ , իրենց մասեանին ճշգրտութիւնը վաւերացնելու համար , իրենցմէ մաս մը արհամարհանքով մէկ կողմ նե-տեց աստուածային զիրքը , իրը թէ բնաւ ճանցած ջր-լար զայն :

96. Անոնք հետեւեցան այն բանին , զոր սաստանան

մտադրած էր Սոլոմոնի գէմ (1) . Սոլոմոնն իրաւացի էր , և սատանան անհաւասարիմ . անիկա մարդոց կ'ուսու-ցանէր մոգութիւն և զիտութիւնը երկու հրեշտակներուն , Հարութ և Մարութ (2) , որոնք զատապարտուած էին Բա-րելոնի մէջ ապրելու . ասոնք իրենց ուսումը ուեւէ մէկուն հաղորդելէ առաջ , կըսէին անոր . մենք փորձութիւնն ենք , զգոյշ կեցիր որ անհաւասարիմ չըլլաս : Անոնք կը սորվեցնէին թէ ինչ է տարբերութիւնը մարդուն և կոչ միջեւ , և առանց Աստուծոյ կամքին չէին կրնար վասակ . բայց անոնք կը սորվեցնէին միայն այն բանը որ վնա-սակար է , և ո՛չ թէ այն՝ որ օպտակար : Անոնք զիտէին , թէ ան որ մոգութեան զիրքերը գնած է , ապագայ կեան-քին մէջ տեղ չունի . անոնք , թշուառական առեւսուր մը ընելով իրենց հոգիները ծախսցին . եթէ զիանային :

(1) Ետակա հետեւեալ կերպով կը մեկնաբանէ այս հաս-ուածը . սատանաները կախարդական գիրքեր գրուծ էին և զանոնք թաղած էին Սոլոմոնի գահին տակը . անոր մահէլն վերջ հոնէկ հա-նեցին և ուզեցին հաւտացնել Սոլոմոնի բարեկամներուն , թէ ա-նոնց միջոցով էր որ անիկա կը հրամայէր ոգիներուն և հովերուն . այս հնաբը ապարդին մնաց , բայց ժողովուրդը հաւատաց իրենց և մոգութեան գիրքերը գնաց :

(2) Ել Հասան կը մեկնաբանէ թէ Հարութ և Մարութ , հրեշտակներուն մէջն ընտրուելով զրկուած էին Բարելոն , աշխար-հէ վրայ արդարութիւն ի գործ գնելու համար . անոնք մահկանա-ցուները արդարութեամբ զատեցին մինչեւ այն ժամանակը , երբ Աստղիկ , իր գեղեցկութեան ամենէն անթերի վիճակին մէջ , եկաւ անոնց առջեւ իր գատը պատշանել ընդդէմ իր ամուսնոյն : Երկու հրեշտակները Աստղիկի հրաշալի գեղեցկութենէն շացած , անոր ցանկացին և իրենց ցանկութիւնը յայտնեցին չաստուածուչին : Աստղիկ յանկարծ թռաւ . յանցապարտ հրեշտակները երկներէն աքսորուելով , գատապարտուեցան իրենց ոճիրը քաւելու Բարելոնի մէջ , մինչեւ յարութեան օրը :

97. Աստուծոյ հաւատաքը և ե միւզը լաւագոյն վարձապութիւնը պիտի ընծայէք իրենց . եթէ պիտնային :

98. Ո՞վ հաւատացեալներ . մի՛ ըսէք ընաւ՝ մեղի նայէ . այլ ըսէք՝ քու ակնարկդ մեր վրայ խոնարհեցուք : Լսեցէք . անհաւասանները ահաւոր տանջանիքներու . պիտի ենթարկուին :

99. Կռապաշանները , Քրիստոնեանները և անհաւատ Հրէանները պիտի ուղէին որ Աստուած ձեզի ո՛չ մէկ չնորհի արժանացնէք . բայց անիկա իր ողորմածութիւնը ըստ կամո կը յայսնէ , ու իր բարեսրատութիւնը անսահման է :

100. Եթէ Քուրանի մէկ հաստուածը գեղչինք , կամ եթէ անոր յիշասակը սրախիդ վրայէն ջնջէինք , ուրիշ լաւագոյն կամ նման հաստուած մը պիտի տայինք քեզի : Դուն չե՞ս զիտեր թէ Բարձրեալին իշխանութիւնը կը տարածուի ամբողջ տիեզերքին վրայ :

101. Դուն չե՞ս զիտեր թէ Աստուած երկինքի ու երկի թափաւորն է , և թէ դուք իրմէ միայն օգնութիւն պէտք է ակնկալէք :

102. Զեր Մարգարէին պիտի հարցնէք այն բանը զոր Հրէանները Մովսէսին հարցուցին (⁽¹⁾) : Ան որ իր հաւատաքը կը փոխէ անհաւատառութեան մէջ իյնալու համար , կրոյ է :

103. Շատ Հրէաններ և Քրիստոնեաններ , նախանձէ պրոտած , ուղեցին զձեղ հեռացնել ձեր հաւատաքէն և անհաւատ դարձնել զձեղ , երբ անասն որ ծշմարտութիւնը կը փայի : Փախէք անոնցմէ և ներեցէք անոնց , մինչեւ որ հրահանդ ատանաք Բարձրեալէն , որուն գօրութիւնը անսահման է :

(1) Հրէանները Մովսէսին ըսին որ՝ թող իրենց աչքին առջեւ տեսանելի ընէ Աստուածը :

104. Ազօթք ըրէք , ողորմութիւն տուէք , Աստուած պիտի հաստուցնէ ձեր ըրած բարիքը , որովհետեւ անփկա կը տեսնէ ձեր գործերը :

105. Հրէանները և Քրիստոնեանները կը պարծենան որ միայն իրենք պիտի մանեն արքայութենէն ներս . առ է իրենց փափաքք : Ըսէք իրենց . եթէ անկեղծ էք , ըստածնիդ ապացուցէք :

106. Ով որ ամբողջովին Աստուծոյ կը նուիրուի , և բարիք կը գործէ , Աստուածմէ պիտի վարձաարուի , և երկուզէ ու չարչարանքէ զերծ պիտի ըլլայ :

107. Հրէանները կը հաւասանեն թէ Քրիստոնեաններուն հաւատաքը ունէ հիմ չունի . միեւնոյն առարկութիւնը Քրիստոնեանները իրենք կընեն . և սակայն երկուքն ալ կարգացած են նուիրական զիրքերը . կռապաշանները , որոնք անծանօթ են աստիճ վիճականութեան , միեւնոյն յեղուն կը գործածեն : Երկնային Աստուած , վերջին դատասանի օրը , պիտի գաստէ զանոնք :

108. Ի՞նչ կայ աւելի յանցապարտ , քան արզիկի որ մարզիկ Տիրոջը տաճարէն ներս մանեն . անոնք կ'ուզեն իր անունին յիշասակը չնջել . ի՞նչ կայ աւելի ամբարիչո՞ւ քան չանալ որ տաճարը կործանի . անոնք պէտք է գողոջերով մանեն հոն . այս աշխարհին մէջ անոնք նախատինքի պիտի ենթարկուին , իսկ միւս աշխարհին մէջ ամենափաստ չարչարանքներու :

109. Արեւելքը և Արեւելուառքը կը պատկանին Աստուծոյ . ձեր նախուածքները մ'ը կողմ ալ ուղղէք , իր զէմքին պիտի հանողիպիք , անիկա իր անհունութեամբը և զիտութեամբը լիցուցած է արևորիքը :

110. Քրիստոնեանները կըսին՝ Աստուած միակ որդի մը ունի . հեռու իրմէ այս նախատինքը , որովհետեւ ա-

մէն ինչ որ կայ երկինքի և երկրի վրայ, Աստուծոյ կը պատկանի. բոլոր էակները իր ձայնին կը հնազանդին:

111. Սնիկա կազմած է երկինքը և երկիրը. եթէ ուղէ բան մը կերտել՝ կըսէ. եղիցի՛, և կըլայ:

112. Տգէսները կըսեն. եթէ Աստուծած մեղի չի խօսի, կամ եթէ մեղի հրաշք մը չցուցնես, մենք բնաւ չպիտի հաւատանք: Իրենց հայրերն ալ այսպէս կը խօսէին. անոնց սրտերը յար և նման են: Մեր ցոց տուած հրաշքները բաւական են հաւատաք ունեցողներուն համար:

113. Մենք քեզ զրկեցինք ճշմարտութեան հետ, որպէս զի քու միջոցով հազորդենք մեր խոստումները և մեր սպանալիքները. քեզի ուսէ հարցում չպիտի ուղղուի անոնց նկատմամբ, որոնք դժոխքին մէջ պիտի դաշնիմուին:

114. Հրէսները և Քրիստոնեաները միայն այն առեն քեզ պիտի գնահատեն, երբ իրենց հաւատքը ընդունիս: Բա՛ անոնց որ Աստուծոյ վարդապետութիւնը ճշմարիտ է: Եթէ իրենց բարձանքներուն գոհացում տաս, քեզի եղած յայտնութիւններէն ետք, ալ եւս ո՞վ պիտի պաշտպանէ զքեզ՝ Ամենակարողին քով:

115. Անոնք, որոնց տուինք Քուրանը, և որոնք կը կարդան իր ճշմարիտ վարդապետութիւնը, հաւատք ունին. իսկ չհաւատացողները աստուծամերժներու կարգը պիտի դասուին:

116. Ո՞վ իսրայէլի զաւակներ. յիշեցէք այն բարիքները որոնցմով աղողեցի զձեզ. յիշեցէք որ զձեզ բոլոր աղգերէն աւելի վեր բարձրացուցի:

117. Վախցէք այն օրը, երբ ոչ ոք ուրիշին համար պատասխան պիտի տայ, երբ ոչ փոխարինութիւն, ոչ բարեխօսութիւն և ոչ ալ ակնկալիիք օգնութիւն մը պիտի ըլլայ:

118. Աստուծած Արրահամը փորձեց, և Արրահամ արդար գանուեցաւ: Աստուծած ըստաւ անոր. զքեզ ժողովուրդներու պետ պիտի կարգեմ: Արրահամ պատասխանեց. այս չնորհը իմ ժառանգորդներուս ալ ըրէ: Իմ դաշնիքիս մէջ, յարեց Աստուծած, չարերը չեն մաներ բնաւ:

119. Մենք հաստատեցինք նուիրական տունը, որպէս զի հոն՝ իրը սպասառան՝ հաւաքուին ժողովուրդները: Արրահամի բնակած տեղը աղօթավայր մը պիտի ըլլայ: Արրահամին և Խսմայէլին հետ դաշնիք կնքեցինք⁽¹⁾: Մաքրեցէք իմ տաճարս զայն շրջապատող կուռքերէն, ներար զետեղուածներէն և զանոնք պաշտողներէն⁽²⁾:

120. Արրահամ սա աղօթքը ուղղեց Աստուծոյ. Տէ՛ր, այս երկրին մէջ տեւական հաւատք մը հաստատէ. քու չնորհներդ թափէ այն ժողովուրդին վրայ, որ պիտի հաւատայ միակ Աստուծոյ և վերջին դատաստանի օրին: Աստուծած պատասխանեց. իմ չնորհներս մինչեւ անհաւատաներուն վրայ պիտի տարածեմ. բայց անոնց վայեկքը ժամանակաւոր պիտի ըլլայ: Անոնք բոցերուն մէջ իշնարու պիտի դատապարտուին և իրենց վերջը ահաւոր պիտի ըլլայ:

121. Երբ Արրահամ և Խսմայէլ այս տաճարին հիմք

(1) Քաղիմիքաքի կատարած թարգմանութեան մէջ ըսուածէ՝ «սա պատուերը տուինք»:

(2) Մաքրեցէք իմ տաճարս՝ անոր համար կըսէ, որովհետեւ Արրահամի և Խսմայէլի յաջորդները միակ Աստուծոյ մը գաղափարը կորսնցուցին. անոնք դեռ կը յարգէին Մէքքէի տաճարը, իբրեւ գործ՝ այս երկու նահապետներուն. բայց կուռքեր զետեղած էին մէջն ու դուրս. Մուհամմէտ զանոնք տապալեց և միակ Աստուծոյ մը պաշտամունքը հաստատեց:

դրին, աչքերնին երկինք բարձրացուցած՝ գոչեցին. Ո՞վ Աստուած, գերազոյն իմացականութիւնն, հաճէ ընդունիլ այս նուիրական բնակարանը :⁽¹⁾

122. Տուր որ, ո՞վ Տէր, ճշմարիտ միւսիւլմաներ ըլրանք⁽²⁾. տուր որ մեր սերուղը քու հաւատպիդ յարած ըլլայ. մեր նուիրական պարտականութիւնները սորվեցուք մեղի. քու ակնարկի վիջանէ մեր վրայ դարձնել. դուն գթած և անվիշտաշար ես:

123. Անոնց ազգէն մարդարէ մը դրկէ⁽³⁾ որպէս զի իրենց յայտնէ քու սքանչելիքներդ, որ սորվեցնէ Քու-

(1) Մէքքէի Տաճարին հիմուրկէքը յայտնի չէ թէ ե՛րբ կատարուած է: Մահմետականները նուիրական պատմութիւններ կը հիւսեն այդ հիմուրկէքին շուրջ: Արար պատմագիրներ կըսեն թէ Քառապան, այսինքն բառակուսի տունը, զըս հրեշտակները երկինքեն բերուած էին, Մէքքէի մէջ զետեղուեցաւ. Հրեշտակները հոն կուգային իրենց պաշտամանքը կատարելու՝ Ադամի ծնունդէն 2000 տարի առաջ. Ադամ քառասուն անգամ ուխտի գացեր է հոն՝ Հնդկատանի խորեւէն: Երբ Աստուած ջրհեղեղը յառաջ բերաւ, Նուիրական Տունը չորրորդ երկինքը բարձրացուցերէ ուշ, հրեշտակ մը Աբրահամին և Խամբյէլին բերեր է անոր յատակագիծը, սուն վրայ անոնք շննեցին Հարէմի Տաճարը. մինչ անոր շնուրթեանը կ'աշխատէին, Գաբրէւլ երկինքն բերեր է հուշակաւոր սեւ քարը, որ այնքան նուիրական է հոլոմ ներուն համար: Ոկիզները այդ քարը ձերմակ յակինթէ էր, բոյց կին մը՝ որ մաքրագործուած չէր, այդ քարին դպած ըլլալով, եր Փայլը կորսնցուց և սեւցաւ:

(2) Թիւսիւլման կուգայ աբարերէն մէսլէմուն բառէն, որ կը նշանակէ Սօսուեօյ նուիրուած. բառին իսկական նշանակութիւնը ույս է, և հոս ալ այդ առումով դրուած է: Բառին իմաստը հետղէտէ ընդածակուած է և այսօր միւսիւման կը կուտին բոլոր անոնք որ Սաւհամմէտի կրօնին կը հետեւին:

(3) Քաղիմիրսքի կրու՝ «Մարդարէ մը հանէ»:

բանը⁽¹⁾ և իմաստութիւնը, և զանոնք մաքրագործէ: Դուն զօրեկ և իմաստուն ես:

124. Ո՞վ պիտի մերժէ Արրահամի կրօնքը. միայն անմիտ մարդը. անիկա այս աշխարհի մէջ մեր ընարեանն է, և միւս աշխարհին մէջ արդարներուն կարող պիտի դաստի:

125. Երբ Աստուած ըսաւ անոր՝ ընդունէ՛ իսլամութիւնը⁽²⁾, Արրահամ պատասխանեց. — ես ափեղերքի վեհապետին դաւանանքը ընդունած եմ:

126. Արրահամ և Յակոբ հրամայեցին որ իրենց սերունդը այդ հաւատքին հետեւի. — ո՞վ իմ զաւակներս, ըսաւ Յակոբ, Աստուած կրօնք մը ընարեց ձեզի համար, մինչեւ ձեր մահը անոր հաւատքիմ մնացէք:

127. Դուք ներկայ էիք, երբ մահը եկաւ այցելել Յակոբին: Անիկա ըսաւ իր զաւակներուն. — իմ մահէս վերջ ի՞նչ պիտի պաշտէք: Անոնք պատասխանեցին. — մինք պիտի պաշտէնք քու Աստուածդ, քու հայրերուդ, Արրահամի, Իսմայէլի և Յակոբի Աստուածը, միակ Աստուածը. մինք հաւատարիմ միւսիւլմաներ պիտի ըլլանք:

128. Անոնք այլ եւս վկան. իրենց հետ տարին գործերնուն պարզեւը. անոնց պէս դուք ալ ձերինը պիտի տանիք, և անոնց բրածին համար ձեզմէ հաշիւ չպիտի պահանջուի բնաւ:

(1) Քուրան, աբարերէն Քրաս բառէն կուգայ և կը նշանակէ «այն» զըս պէտք է կարգալ: » Քուրանին կըսեն նաեւ Ել Քիրապ (Գիբբը), Քիրապը Ս.լիս (Աստուծոյ Գիբբը), Քիրապը Ս.զիկ (Նուիրական Գիբբը), Կայլը, Կայլն:

(2) «Խալամութիւնն ընդունիլու պահանջու պէտք է առնել Աստուծոյ յանձնել ինքնինքը և ի իմաստով:

129. Հրէաները և Քրիստոնեաները կը սեն. — մեր հաւատքը ընդունեցէք, եթէ կ'ուզէք փրկութեան ճամբուն մէջ մանել: Անոնց պատասխանեցէք. — մենք պիտի հետեւինք Սրբահամի ճշմարիտ հաւատքին, որ մերժեց կուռքերուն առջեւ խոնակ ծիւել և միակ Աստուած մը պաշտօնեց:

130. Բուշք. — մենք կը հաւատանք Աստուծոյ, մեղի զրկուած Գիրքին, Սրբահամի, Խսմայէլի, Խսահակի և Յակոբի և տասներկու ցեղերուն եղած յայտնութեանց: Մենք կը հաւատանք Մովսէսի, Յիսուսի և մարգարէներուն վարդապետութեանց. մենք անոնց միջեւ ուեւէ տարբերութիւն չենք դներ և մենք միւսիւլմածներ ենք⁽¹⁾:

131. Եթէ Քրիստոնեաները և Հրէաները ձեզ հետ նոյն հաւատքը ունին, նոյն (յիսուսկ) ճամբուն մէջ կը գտնուին. Եթէ անկէ հեռանան, հերձուածող պիտի ըլլամ. բայց Աստուած քեզի ոյդ պիտի առաջ անոնց դէմ մարտնչելու համար, որպէսետեւ ամէն բան կը լոէ և կը համենայ:

132. Մեր կրօնքը երկինքէն իջած է, և մենք հաւատարիմ կը մնանք անոր: Աստուծոյ աւելի իրաւունք ունեցող մը կա՞յ մարդոց կրօնք մը տալու:

133. Բուշ անոնց. — մեղի հետ պիտի վիճաբանի՞ք Աստուծոյ մասին. անիկա ձեր ալ, մեր ալ տէրն է. մենք ալ արարքներ գործած ենք, դուք ալ. բայց մեր հաւատքը մաքոր է:

134. Կրնա՞ք ըսել որ Սրբահամ, Խսմայէլ, Խսահակ, Յակոբ և Խսրայէլի 12 ցեղերը հրէայ կամ քրիստոնեայ էին: Պատասխանէ. — դուք Աստուծոյ աւելի իմաստուն էք. կա՞յ աւելի ոճապարտ բան մը քան Աստուծոյ խօսքը

(1) Այսինքն՝ ինքնինքներ Աստուծոյ կը յանձնենք.

Ճածկելը. միթէ անիկա անուշաղբութեամբ կը դիտէ մարդոց արարքները: ⁽¹⁾

135. Այս սերունդները անհետացան. իրենց գործերը կը մնան սակայն, ինչպէս ձեր արարքները ձեզի պիտի մնան: Անոնց ըրածին հաշխուք դուք չպիտի տաք:

136. Անմիաները պիտի հարցնեն. — ինչո՞ւ Մուհամետ փոխեց այն տեղը, ուր կ'ուզէք իր աղօթքը: Պատասխանէ. — Օրեւելքը և Արեւմուաքը Աստուծոյ կը պատկանին, անիկա իր ուզածները չխտակ ճամբէն կ'առաջնորդէ:

137. Ո՞վ ընտրեալներու ժողովուրդ. մենք զձեզ հաստատեցինք, որպէս զի վկայ ըլլաք միւս ազգերուն, ինչպէս ձեր Մարգարէն վկայ պիտի ըլլայ ձեզի համար:

138. Մենք փոխեցինք այն տեղը որուն ուզգուելով կ'աղօթէիք, որպէս զի Աստուծոյ հետեւողները և անհաւատառութեան մէջ իշտողները իրարմէ զանազանուին. այս փոփոխութիւնը նեղացուցիչ է միայն անոնց համար որ լուսաւորուած չեն աստուածացին լոյսով, Աստուած պիտի վարձարիէ ձեր հաւատքը. անիկա ողորմած և անցիշաշար է:

139. Սրգէն, մենք տեսանք զքեզ՝ որ աչքերդ գէպի երկինք կը բարձրացնես. մենք կ'ուզենք, որ այն տեղը ուր պիտի ուզգես աղօթքգ, քեզի հաճելի ըլլայ. ճակատրդ գարձուրդ Հարէմի Տաճարին⁽²⁾. ուր որ ալ ըլլաս, ակնարկդ ուզգէ այս վեհափառ աղօթատեղիին: Հրէա-

(1) Մուհամետ կրսէ թէ իր առարելութիւնը նախադուշակուած է Հնդամատեանին մէջ՝ բայց Հրէաները, Նախանձէ գրդուած, Երկինքի պատգամները կը ծածկէին:

(2) Այսինքն՝ Մէքքէի Ցառարին, Հարէմ կը նշանակէ արդիուած:

ները և Քրիստոնեաները զիտեն թէ աղօթելու այս եղաւնակը, որ երկինքէն հրամայուած է, ձևարիստ է. Յաւիտենականը ուշադիր աչքերով կը նայի անոնց արարքներուն վրայ:

140. Երբոր հրաշքներ ալ գործես իրենց աչքին առջեւ, անոնք այս սովորութիւնը չպիտի որդեզրեն, դուն ալ անոնց սովորութիւնը չպիտի ընդունիս. իրենց մէջ ալ տարբեր տարբեր ծէսեր կատարողներ կամ. քեզի յայտնուածներէն ետք, երբ տակաւին անոնց փափաքները գոհացնել զիջանիս, ամբարիշաններուն կարգը պիտի դասուիս:

141. Քրիստոնեաները և Հրէաները կը ճանչնան Մարգարէն այնպէս, ինչպէս կը ճանչնան իրենց տղաքը, բայց անոնց մեծ մասը կը ծածկէ իր զիտոցած ճշմարտութիւնը:

142. Ճշմարտութիւնը Աստուծոմէ կուգայ, ամոր մասմին բնաւ կասկածի մէջ պէտք չէ իյնաս:

143. Ամէն մէկ ժողովուրդ աեղ մը ունի, ուր կ'ուզզէ իր աղօթքները. ջանացէք ընել այն բանը որ լսուազոյնն է, ամենուրեք որ ըլլաք: Աստուծ օր մը պիտի հաւաքէ ձեզ ամենքդ. իր զրութիւնը անսահման է:

144. Ուր աեղէն որ ալ եղես, երեսդ դարձուք Հարէմի Տաճարին. այս պատուէրը կը բզիս Աստուծոյ ճըշմարտութիւնէն. Աստուծ կը կշռէ մարդոց գործերը:

145. Ուր որ ալ ըլլաս, նայուածքդ ուզզէ դէպի այս նուիրական աղօթավայրը, որպէս զի մարդիկ չկարենան քեզ ամբաստանել. միայն չարերը պիտի համարձակին ամբաստանել. անոնցմէ մի՛ վախնար, բայց վախցիր ինձմէ, որպէս զի չորհներովս ողողեմ զքեղ և քու առջնորդդ ըլլամ:

146. Մենք ձեզի զրկեցինք ձեր աղզէն մարգարէ մը,

որպէս զի մեր պատուէրները քարոզէ ձեզի, որ ձեզ մաքրագործէ և ուսուցանէ Գիրքը⁽¹⁾ և խմասութիւնը, որ ձեզի սորվեցնէ ձեր չգիտցածները:

147. Պահեցէք իմ յիշատակս. ես ալ ձերինը պիտի պահեմ. ինձի չնորհապարտ եղէք. ապերախտ մի՛ ըլլաք:

148. Ո՞վ հաւատացեալներ, աղօթքով և յարատեւթիւններէն երկինքի օգնութիւնը հայցեցէք. Աստուծ համբերաստարներուն հետ է:

149. Մի՛ ըսէք, թէ անոնք որ օրէնքի զրօշին տակ⁽²⁾ կը սովոնուին, մեռած են. ընդհակառակը՝ կ'ապրին, բայց դուք չէք հասկնար:

150. Մենք զձեզ փորձութեան պիտի ենթարկնաք զձեզ երկիւղի մասնելով, անօթի ձգելով, ձեր կարողութիւնները և ձեր հոգին տկարացնելով, ձեր ինչքերը կորացնել տալով. երանի անոնց որ այս չարիքները համբերութեամբ պիտի տանին:

151. Երանի անոնց, որ թշուառութեան մէջ ըլլալով հանողերձ կը գոյնի. — մենք Աստուծոյ զաւակներն ենք, մենք մեր երեսը իրեն կը դարձնենք:

152. Այսպիսիները Տիրոջը օրհնութիւնները պիտի ընդունին. անոնց համար անիրա պիտի ցայտեցնէ իր ուղրութիւնը. և զանոնք պիտի առաջնորդէ փրկութեան ճամբաւն մէջ:

153. Սափա և Մէրվա⁽³⁾ Աստուծոյ յիշատակարաններն են. ան որ Մէքքը ուշափի պիտի երթայ և նուիրական տունը պիտի այցելէ, քաւութիւնն զոհ մը տալէ

(1) Քուրանը :

(2) Քաղիմրագի կը թարգմանէ և Աստուծոյ դատին համար :

(3) Մէքքէն քիչ հեռու, երկու ըլուներ են ասոնք, և կը քոնքով նուիրագործուած են :

գերծ ըլլայ պիտի, միայն թէ այս երկու լեռներուն շուրջը դառնալու է։ Ան որ այս պատուէքէն աւելի ընէ, Աստուծոյ երավատագիտութիւնը պիտի շահի։

154. Անոնք, որ մեր հրաշքները և մեր վարդապետութիւնը կը ծածկեն, Հնդամատեանին մէջ մեր ըրած յայտնութիւններէն վերջն ալ, թող անոնք անիծեալ ըլլան Աստուծոյ, հրեշտակներէն և (անիծել զիացող) բոլոր արարածներէն։

155. Ես պիտի ներեմ անոնց, որ մոլորութենէն կը հեռանան, ճշմարտութիւնը ուրիշներուն կը յայնեն, ուրովհետեւ (ես կը սիրեմ զղացող յանցաւորին ընդ առաջ երթալ) ես սորումած և անյիշաչար եմ։

156. Բայց այն օրինազանցները որոնք անհաւատութեան մէջ մնալով պիտի մեռնին, Աստուծոյ, հրեշտակներուն և մարդոց կողմէ պիտի անիծուին։

157. Անոնք յաւիտնապէս անիծապարտ պիտի մընան. իրենց կրած չարչարանքները բնաւ չպիտի թեթեւնան, և Աստուծած անոնց չպիտի դարձնէ իր ակնարկները։

158. Զեր Աստուծը միակ Աստուծն է։ Ուրիշ Աստուծած չկայ. անյիշաչար է անիկա։

159. Անոնց համար, որ լուսաւորուած են, Բարձրեալին զօրութեան նշաններն են երկինքի և երկրի սուեղծագործումը, ցորեկուան և գիշերուան յաշորութիւնը, մարդոց օգտակար բաներ բերելու համար ալիքները ճեղքող նաւը, ամսերէն եկող և անբարերեր հողը կենդանայնող անձրեւը, երկրիս երեսը ծածկող անասունները, հովերուն փոփոխութիւնները, երկինքի և երկրի միջեւ տաստանող ամսերը։

160. Անոնք որ կուռքերուն առջեւ խոնկ կը ծխեն, հաւասարցուցած կը լան։ Յախամանամութեան։ Բայց Աս-

տուծոյ հանդէսպ հաւատացեալներուն զգացած սէրը աւելի զօրաւոր և տեւական է։ Ամբարիշաները ի՞նչ տեսարան պիտի պարպեն, երբ իրենց սպասող տանջանքներուն առջեւ գտնեն ինքզինքնին. ամէն իշխանութիւն Աստուծոյ կը պատկանի և անիկա ահարկու է իր վրիժառութեանց մէջ։

161. Այն աղանդաւորները (⁽¹⁾) որոնք կապերնին պիտի խղեն իրենց հետեւողներուն հետ, երբ գժողովին չարչարանքները տեսնեն,

162. Պիտի լին որ իրենց հետեւողները կը գոչեն. — եթէ կարենացինք երկիր զառնալ, պիտի բաժնուինք անոնցմէ որոնք մեզ կը մոլորեցնէին, ինչպէս իրենք մեզմէ հեռացած են։ Աստուծած իրենց պիտի ցուցնէ իրենց արարքները, անոնք հառաջանքներ պիտի արձակեն և յաւիտենապէս բոցերուն մէջ պիտի բնակին։

163. Ո՞վ մարզիկ, աշխարհի բոլոր առողջարար և թոլատրուած պտուղները կերեք. Սատանապին փորձութիւններուն մի՛ անսաք. անիկա ձեր թշնամին է։

164. Անիկա ձեզի կը մէջ չարիք գործելու, ո՞իրի մէջ կը գահացիմէ և ձեզի կը զրգուէ որ յանդիմութեամբ խօսիք Բարձրեալին հետ։

165. Երբար անհաւատները ստիպէք որ Աստուծոյ յայտնած կրօնքը ընդունին, անոնք կը պատասխաննեն. մենք մեր հայրերուն կրօնքին կը հետեւինք։ Պարտաւո՞ր են հետեւիլ անոր, երբ իրենց հայրերը քալեցին տպիտութեան և մոլորումի զիշերին մէջէն։

166. Անհաւատները կը նմանին անոնց, որ կը լսեն խօսքին ձայները, առանց բան մը հասկնալու. խուլ, համը և կոյր, անոնք բնաւ իմաստութիւն չունին։

(1) Քաղիմիրգիք կը թարգմանէ և այն պետերը »

167. Ո՞վ հաւատացեալներ, սնանեցէք այն համեղ կերակուրներով զորս առունք իրը սնունդ, և գոհութիւն մասուցէք Աստուծոյ, եթէ զուք աստուածապաշտ էք:

168. Աստուած կ'արգիլէ որ ուտէք մեռած կենդանիները, արիւնը, խողի միար, և ուրիշ ամէն կենդանի որուն վրայ Աստուծոյ անսանին ասրբեր անուն մը կ'ոգեկոչեն: Անիկա որ անհրաժեշտութենէ բանազաստաւած, և ոչ թէ յագենարու բազձանգով, այս օրէնքին դէմ գործէ, քաւութեան պատիմ չափափ կրէ բնաւ, որովհեանեւ Աստուած ողորմած և անցիչաչար է:

169. Անոնք, որ գծուձ շահու մը համար կը ծածկեն այն բանը զոր Աստուած յայտնած է նուիրական մատեաններուն մէջ, իրը սնունդ պիտի ունենան գիշատիչ հուրը: Յարութեան օրը Աստուած չափափ խօսի անոնց, անոնց թողութիւն չափափ տայ, և անոնք չարչարանքներու որար պիտի ըլլան:

170. Անոնք մոլորութիւնը ճշմարտութեան տեղ առած են, և աննջանքը թողութեան տեղը: ինչ պիտի ըլլայ իրենց անձկութիւնը երբ բոցերուն մէջ նետուին:

171. Աստուած զրկեց այն Գիրքը որ ճշմարտութիւնը կը բովանդակէ: Անոնք որ անկէ հեռանան, մոլորութեան մէջ կրնիթանան:

172. Զի բաւեր, իր խղճին առջեւ արդարանարւ համար⁽¹⁾ երեսը զարձնել դէսլ Արեւելք կամ Սրեւմուաք, պէտք է նաեւ հաւատալ Աստուծոյ, վերջին դատաստանի օրին, հրեշտակներու, Քուրանին, մարգարէններուն, պէտք է ի սէր Աստուծոյ, օգնել մերձաւորներուն, որքերուն, աղքատներուն, ճամբարդներուն, զերիներուն և անոնց՝

(1) «Բարեկառաշուութիւնը չի կայսնար այն բանին մէջ»
(թարգմ. Քաղլիլիքի)

որ օգնութիւն կը հայցեն. պէտք է աղօթք ընել, խոստումը յարգել, պատերազմի ձախորդութիւնները և ցաւերը համբերութեամբ տանիլ. ահա ասոնք են ճշմարիտ հաւատացեալի մը պարտականութիւնները:

173. Ո՞վ հաւատացեալներ, ակն ընդ ականի պատիժը պատուիրուած է մարդասպանութիւնն համար. ազատմարդ մը պիտի մեսցուի ուրիշ (ոչ-կերի) մարդու մը համար. զերի մը՝ զերիի մը համար. կին մը՝ կնոջ մը համար: Ան որ իր եղբօրը⁽¹⁾ սովաննիշին ներէ, իրաւունք պիտի ունենայ բանաւոր առուգանք մը պահանջելու, որ իրեն պիտի վճարուի վարձքովը միասին: ⁽²⁾

174. Այս մեղմացումը նախախնամային գութի մէկ չնորհն է. բայց անիկա որ կրկին անգամ գործէ նոյն ոճիրը, չարչարանքներու զո՞ն պիտի ըլլայ:

175. Ո՞վ զուք որ սիրտ մը ունիք, ակն ընդ ականի պատիժին և անոր ներշնչած երկիւղին մէջ պիտի գանեք ձեր կեանքին ապահովութիւնը:

176. Պատուիրուած է որ, մեռած ատեննիդ ձեր հարաստութիւնը կտակով պիտի թողուք ձեր զաւակներուն (ծնողքին) և մերձաւորներուն, արգարամութեամբ մը զոր պարտաւոր են ունենալ Աստուծմէ վախցողները:

177. Ան որ կտակարտորին կարգադրութիւնները լըսելէ ետք զանոնք կը փոխէ, ոճրապարա յանցաւոր ըլլայ պիտի. Աստուած ամէն բան կը ականէ և կը լսէ:

178. Անիկա որ կտակարտորին կողմէ սիսալ մը կամ անիբաւութիւն մը եղած չըլլալու համար, ժառանգորդանիրուն իրաւունքը արգարութեամբ կը կարգազրէ, բնու-

(1) «Եղբայր ըսելով պէտք է հասկնալ և ուրիշ մարդ մը»

(2) «Հաւատացեալ զերի մը մահուամբ չէր պատժուեր, երբ անհաւատ մը պահանած ըլլայ»

յանցաւոր պիտի ըլլայ: Աստուած ողորմած և անյիշաւչար է:

179. Ո՛վ հաւասացեալներ, պատուիրուած է որ դուք ծովապահութեան ենթարկուիք, ինչպէս ենթարկուեցան ձեր հայրերը, որպէս զի Տիրոջմէն երկնչիք:

180. Ծովապահութեան օրերը հաշուուած են⁽¹⁾. անիկա որ հիւանդ կամ ճամբորգելու վրայ ըլլայ, վերջը ծոմ պիտի ըսնէ մի եւ նոյն թուով օրեր: Անտնք՝ որ ժուժեկարութիւնը տաներու կարող ըլլալով հանդերձ, չեն պահեր զայն, իբր քաւութեան պատիժ աղքատի մը մնունդը միայն պիտի ունենան⁽²⁾: Անիկա որ յօժարաբար պիտի ընէ ինչ որ բարի գործ է, համեմատական վարձատրութիւն մը պիտի ստանայ: Եթէ օրէնքը կը ճանչնաք, ծոմ պահելը աւելի արժանավարձ պիտի ըլլայ:

181. Ծովապահութեան սահմանուած ամիսն է Բռամազան ամիսը, որ ատեն Քուրանը երկինքն իջաւ⁽³⁾, որպէս զի մարդոց լոյսը և առաջնորդը ըլլայ և նաև՝ իրենց պարտաւորութեանց կանոնագիրքը: Ո՛վ որ այդ լու-

(1) Ծովապահութիւնը կարճ պիտի տեւէ: (Թարգ. Քաղիմիրաքի):

(2) Աղքատի մը կերպաւը պիտի տան: (Թարգ. Քաղիմիրաքի):

(3) Արաք պատմագիրները կըսն թէ Քուրանը գրուած էր եօթներորդ երկինքն սէջ պահուած սեղանին վրայ. Գաբրիէլ հրեշտակապեալ հատորի մը վերածեց զայն և Մուհամմէտին տարաւ, բայց անոր յայտեց զայն մաս առ մաս և 23 տարուան լնթացքն: Մահմէտական աստուածարանները համաձայն չեն այն կէտին վրայ թէ հրեշտակապեալ Բամազանի բանիներորդ օրը բերաւ զայն, բայց կը հաւաստեն թէ վերջին 10 զիշերներէն մէկուն միջնին բերաւ: Բամազան ամսուան մէջ երբ իսլամ մը հրապարակաւ իր ծոմը աւրեր, քարի կը բանուէր. հարուստները պատուէրէն կը խուսափէին:

սինը տեսնէ, պէտք է ծոմ պահէ. ով որ հիւանդ կամ ճամբորգութեան մէջ է, յետոյ ծոմ պէտք է պահէ նոյնքան օրեր. Աստուած կ'ուզէ զձեղ քաղցրութեամբ առաջնորդել, որպէս զի իր պատուէրը կատարէք և իր գովեստը փառարանէք: Անիկա ինքն անհնապէս ձեզ առաջնորդ կ'ըլլայ, որպէս զի զինքը պատուէք ձեր երախտագիտութեամբ:

182. Երբ իմ ծառաներս իմ վրաս խօսին, ես իրենց մօտը պիտի ըլլամ, ես մտիկ պիտի ընեմ զանոնք, որ իրենց ըլձանքները ինծի պիտի ուղղեն. բայց թող լսեն իմ ձայնս, թող հաւասան ինծի, որպէս զի իմ չնորհս լուսաւորէ զանոնք. (որպէսաղի ուղիղ ճամբէն ընթանան:)

183. Ծովապահութեան զիշերները կրնազ մերձենալ ձեր կիներուն. անտնք ձեր հագուստներն են և դուք՝ անոնցը⁽¹⁾: Աստուած գիտէր թէ դուք օրինազանց եղած էք այս մասին. անիկա իր ակնարկը ձեր վրայ դարձուց և ձեզի ներեց. տեսէք ձեր կիները և բաղձացէք քաղել այն պատուիները զորս Աստուած տուաւ ձեզի: Կրնազ ուտել և խմել ինչեւ այն վայրկեանը, երբ, արշալոյսին, կարենաք զանազանել ձերմակ թելը սեւ թելէն: Մինչեւ զիշեր ծոմ ընեցէք: Այդ միջոցին ձեր կիներէն հեռացէք, և ուղթելով անցուցէք օրը: Աստուածոյ հրամանը ալս է: Անիկա իր օրէնքները կը ծանուցանէ մահկանացուներուն, որպէս զի իրմէ վախճան:

184. Զեր հարստութիւնը երբէք մի մսիէք պարապ տեղը. զրամ մի առաջնորդէք դատաւորներուն, ձեր եղ-

(1) Այսինքն՝ իրարու ծառայութիւն կը մատուցանէք, կամ մէկզմէկու գաղտնիքը կը պահէք, և կամ զիրար կը գրկէք, ինչպէս որ կը հագնիք զգեստը (արաք մեկնիչներ):

բայրներուն (այլոց) ժառանգութիւնը անիրաւ տեղը խւրացներու համար : Դուք զիտակ էք :

185. Քեզի հարցումներ սիստի ուղղեն նոր լուսիններու մասին . ըսէ իրենց . մարդոց օգուածին համար հաստատուած ժամանակամիջնոցներ են անոնք : Մէքքեկ ճամբորդութիւնը կատարելու կը ծառայեն անոնք : Բարեսպաշտութիւնը չի կայանար ձեր տանը ետեւի գուռնէն մանելուն մէջ⁽¹⁾ այլ Աստուծմէ երկնչելուն մէջ . ձեր տուները մտէք ձեր սովորական դուռնէն և վախցէք Աստուծմէ , որպէս զի երջանիկ ըլլաք :

186. Կրօնքի համար (Աստուծոյ ճամբուն Շջ) մըղուած սրատերազմին կոռուցէք ձեր թշնամիներուն դէմ , բայց նախայարձակ մի՛ ըլլաք : Աստուած կ'ատէ յարձակողները :

187. Սպաննեցէք ձեր թշնամիները , ուր որ այ հանդիսական վանեցէք զանոնք այն տեղերէն ուրկէ որ ձեզ վանած ըլլան : Կրօնք փոխելու վտանգը⁽²⁾ աւելի վատթար է քան մարդասապանութիւնը : Սննոց հետ մի՛ մարդունչիք բնաւ . Հարէմի տաճարին մօտ , եթէ ձեզի չի մղեն այդ բանին : Եթէ ձեր վրայ յարձակին , անոնց արեան մէջ լողացէք . այդ է անհաւասներու ինկած վարձատրութիւնը :

188. Եթէ անոնք թողաւն մոլորութիւնը , Տէրը ուղորմած է և անցիշաշրա :

(1) Արաբները երբոր վերադառնույն Մէքքէի ուխտագնացութէնէն , ինքինքնին որբագործուած կը համարէին և որբազզութիւն կը նկատէին տուներնին մտնել նախկին դուռնէն , որով հակառակ կողմէն նոր դուռ մը կը բանային : Մուհամմէտ կը դատապարտէ աշաւ այդ սովորութիւնը :

(2) «Կռապաշտութեան փորձութիւնը» կը թարգմանէ Քաղեմիքաքի :

189. Մարանչեցէք ձեր թշնամիներուն դէմ մինչեւ որ այլեւս փորձութեան վախը չունենաք , մինչեւ որ ամէն տեղ Աստուծոյ կրօնքը հաստատուի : Պէտք է որ ամէն թըշնամութիւն դադրի ամէն անոնց դէմ որ կը թողուն կուպաշտութիւնը : Զեր ատելութիւնը պէտք է վասի միմիւնին խարդաբններուն դէմ :

190. Եթէ ձեր վրայ յարձակին նուիրական ամիսներու միջոցին և սրբազան տեղեաց մէջ , անոնց սիստիտաք ակն ընդ ականի սպատիմը . մի՛ յարգէք անոնց հանդէպ այն օրէնքները , զորս իրենք չեն յարգեր⁽¹⁾ . Երկնչեցէք Տիրոցմէն . յիշեցէք որ իրմէ երկնչողներուն հետ է անիկա :

191. Զեր ինչըլ գործածեցէք հաւատքի պաշտպանութեան : Զեր իսկ ձեռքով մի՛ պատրաստէք ձեր կորուսոր : Բարիք գործեցէք : Տէրը կը սիրէ բարիք գործողները :

192. Ուխտի գացէք Մէքքէ և այցելեցէք Տաճարը՝ ի պատիւ Աստուծոյ : Եթէ չէք կրնար երթալ , (թշնամիներէ պաշարուած ըլլանուգ համար) գոնէ դրյուն ընծայ մը նուիրեցէք : Զեր զլուխները մի՛ ածիկէք , մինչեւ որ վա՞ր իր մասաղ ըլլալիք տեղը չի հասնի : Անիկա որ հւանդութեան պատճառով կամ արկածով սափառուած է ածիկուելու , իրբեւ քաւութիւն պէտք է ծոմ բռնէ , ուղրմութիւն առյ կամ ընծայ տայ : Երբ վախու բան մը ըլլաց , անիկա որ Մէքքէ ուխտի կ'երթայ , պէտք է սոսկ սրբազան տեղերը այցելելէ յետոյ (եթէ ուխտագնացութիւնը ուրիշ ատենուան մը կը ձգէ) ընծայ տայ ըստ իր վիճակին . ան որ բան մը չի կրնար տալ , Յ օր ծոմ պէտք է պահէ ճամբորդութեան միջոցին , և Ղ օր ալ՝ իր վերա-

(1) «Եթէ մէկը ձեզ հարստահարէ , նոյն ձեւով աւ դուք զայն հարստահարեցէք » (Թարգմ. Քաղեմիքաքի) :

դարձին . ծոմապահութիւնը ընդ ամենայն 10 օր պէտք է տեւէ : Կը պարտապիենք այս ապաշխարութիւնը անոր որ փոխանորդ մը չունի Մէքքէի տաճարին մէջ : Երկնչեցէք Տիրոջմէն , քանզի ահաւոր են իր վրէժները :

193. Ուխտագնացութիւնը պէտք է կաստարել պատուիրուած (երեք) ամիսներուն մէջ . ունտի գացող անձը պէտք է հեռու կենայ կինսեին , ոճիրէ (¹) և երկպատակութիւններէ : Զեր ըրած բարիքը պիտի գիտնայ Աստուած . պաշար առեք ճամբորգութեան համար : Լաւագնն պաշարը՝ բարեալաշութիւնն է : Երկնչեցէք ինձմէ , դուք որ սիրու ունիք :

194. Բնաւ արգիլուած չէ ձեզ՝ ինդրել Աստուծմէ չորսներ : Երբ Արագած լեռնէն վերագառնաք . յիշեցէք Տէրը , Հարէմի կոթողին մօտ : Յիշեցէք զինքը , քանզի անիկա ձեզ լուսաւորեց և թէ ասկէ առաջ մոլորութեան մէջ էիք :

195. Սպա թափօր պարտեցէք հոն ուր ուրիշները կը պարտին , և Տիրոջը դութը հայցեցէք . ողորմած է անիկա և անյիշաչար :

196. Երբոր ձեր նուիրական արարողութիւնները աւարտէք , Աստուծոյ յիշատակը ձեր սրտերուն մէջ թող արթնցնէ աւելի մեծ սէր մը , քան այն զոր կը զգաք ձեր մերձաւորներուն համար : Կան մարդիկ որ կըսեն , Տէր , այս աշխարհի մէջ մեր ինչքերուն բաժինը տուր : Անոնք պապայ կեանքին մէջ ընտաւ բաժինն չպիտի ունենան :

197. Ուրիշներ ալ կըսեն . քու չորսներդ մեր վրայ թափէ , թէ այս և թէ միւս աշխարհին մէջ , և զմեղ ազատէ կրակի պատիժէն :

198. Անոնք բոլոր իրենց գործերը իրը ժառանգութիւն պիտի ունենան (¹) : Աստուած արդարագատ է իր վճիռներուն մէջ :

199. Նշանակուած օրերուն միջոցին յիշեցէք Տէրը : Ան որ իր ճամբորգութիւնը մէկ օր մը կանխէ կամ յապաղեցնէ , պատիժ չպիտի կրէ , եթէ Աստուծմէ կ'երենչի : Իր երկիւզը միշտ ձեզի հետ ըլլայ զիտցէք որ (օր մը) իրեն պիտի վերադառնաք :

200. Կան մարդիկ որ աշխարհային բաներու վրայ ճառերով , ձեր սքանչացումը կը շահին : Անոնք իրենց սրտերուն անկեզծութեանը զԱստուած վկայ կը կոչին , բայց միայն վիճարանելու մէջ եռանդուն են (²) :

201. Հազիւ ձեր քովէն կը հեռանան , անարդարութեան (անկարգութեան) մէջ կ'իյնան : Աւերումը իրենց քայլերուն հետ կ'երթայ : Աստուած կ'ատէ ապականեալ (անկարգ) մարդիկը :

202. Երբ իրենց խօսիք Աստուծոյ վախին վրայ , անոնք գոռողութեան և ամբարշտութեան մէջ կ'իյնան . բայց գեհենը բաւական է իրենց ոմիներուն : Անոնք հոն պիտի պառկին վիշտի անկողինի մը վրայ :

203. Մարդիկ կան որ ինքզինքին կը ծախսն Աստուծոյ համայ ըլլալու համար : Անիկա հայտ աչքով մը կը նայի իր ծառաներուն :

204. Ով հաւաացեալներ , ընդգրկեցէք իսլամութիւնը (³) իր ամբողջ տարածութեամբը . Սատանային հետ

(¹) « Օրինազանցութիւններէ » (Թարգմ. Քաղիմիրսկի) :

(²) « Բայց քու հակառակորդներուդ մէջ ամենէն կատաղիներն են » (Թարգմ. Քաղիմիրսկի)

(³) « Ճշմարիթ կրօնքը » (Թարգմ. Քաղիմիրսկի)

(1) « Օրինազանցութիւններէ » (Թարգմ. Քաղիմիրսկի) :

քերուն վլայէն մի՛ քալէք . անիկա ձեր յայտնի թրշ-նամին է :

205. ձշմարտութիւնը ճանչնալէ վերջ եթէ (մեղքի մէջ) իրապ, գիտցէք որ Աստուած խմաստուն և հզօր է :

206. Անհաւասները կը սպասեն արդեօք որ Ամենաշկարողը գայ ամսի մը ստուերին մէջ, իր հրեշտակներուն ընկերակցութեամբը : Այն ասեն ամէն բան կատարեալ պիտի ըլլայ . ամէն ինչ իրեն պիտի վերադանայ :

207. Հարցուր Խրայէլի գաւակներուն, թէ քամի՞ սքանչելիքներ շոշովացուցինք իրենց աչքերուն առջեւ : Ան որ Աստուծոյ չնորհները կը մերժէ, թող գիտնայ որ անիկա ահարկու է իր վրէմներուն մէջ :

208. Սշխարհային կեանքին մէջ ծաղիկներ ցանցընուած են անհաւասներուն համար (աշխարհային կեանքը անհաւասներուն համար է :) Անոնք կը ծաղրեն հաւատացեալները : Որոնք որ Տիրոջը երկիւղը ունին, անոցմէ վեր պիտի բարձրացուին յարութեան օրը : Ասուած ըստ կամս կը բաշխէ իր անհաշուելի ընծաները :

209. Մարդիկ կրօնք մը միայն ունէին⁽¹⁾ : Աստուած դրկեց մարդարէները, որոնց միջոցաւ կը խոստանայ և կը սպասնայ : Անոնց տուաւ նուիրական մատեանները ձշմարտութեան կնիքով, որպէս զի մահկանացուներուն անհամաձայնութիւնները դատեն : Անոնք որ ընդունեցին առաքեալները Տիրոջը գուշակութիւնները ճանչնալով, սկսան վլճարանիլ : Նախանձը անոնց ձեռքին մէջ զէնք դրաւ . բայց Աստուած սոտանորդեց հաւատացեալները դէպ ի ձշմարտութիւն որ իրենց վիճաբանութեանց առարկան էր : Անիկա իրեն հաճոյ թուածը ուղիղ ճամբան կ'առաջնորդէ :

210. կը կարծէք թէ՝ կընա՞ք արքայութիւն մտնել

(1) «Մարդիկ միակ ազգ մը կը կազմէին» (Քաղիմիքի)

առանց զգալու այն ցաւերը զրս ձեր հայրերը կրած են : Դժբաղդութիւնը այցելած է անոնց : Անոնք զգացին ձափողանքի ցաւերը այնպան որ իրենց մարդարէն ու անոր հաւատագը ունեցողները գոչեցին . — Տիրոջը օգնութիւնը ե՞րբ պիտի հանի մեզի . Տիրոջը օգնութիւնը մօտ չէ :

211. Քեզի պիտի հարցուի թէ ինչպէս պէտք է ողորմութիւն տալ . պատասխանէ իրենց . — Խնամեցէք ձեր զաւակները (ծնողքը), ձեր մերձաւորները, որբերը, աղքանները և ճամբարդները . բարիքը զրո պիտի գործէք, պիտի գիտնայ Ամենակարողը :

212. Գրուած է որ գուք կոխու պիտի մղէք, իսկ դուք պատերազմէն կը սոսկաք :

213. Բայց թերեւս գուք սոսկաք այն բանէն որ նպաստաւոր է ձեզի, և բաղձաք այն՝ որ վխասակար է ձեզի : Աստուած զիտէ թէ ինչ բան յարմար է ձեզի, ու դուք կ'անդիտանաք :

214. Քեզի պիտի հարցուի թէ՝ պէտք է կռուիլ նուիրական ամիսներուն մէջ . բաէ անոնց . — Այդ միշոցին պատերազմ մղելը ձանր մեղք մըն է, բայց հաւատացեալները վրկութեան ճամբէն հեռացնելը⁽¹⁾, Աստուծոյ անհաւատատարիմ ըլլալը, իր ծառաները նուիրական տաճարէն վտարելը ա՛լ աւելի անոելի ոճկրներ են իր աչքին առջեւ : Կուպաչալսութիւնը աւելի յոտի է քան մարդարապանութիւնը : Անհաւասները չպիտի զալլին ձեզ հալածելէ զշն ի ձեռին, մինչեւ որ ձեզմէ չի խլեն ձեր հաւատագը, եթէ կարենան : Զեր մէջէն անիկա որ իսլամութիւնը պիտի թողու և պիտի մեռնի հաւատատարաց, այս աշխարհին և հանդերձեալին մէջ իր գործերուն ար-

(1) Քաղիմիքի կը թարգմանէ սապէս . «Բայց Աստուծոյ ճամբէն հեռանալով ո այսինքն Աստուծոյ դատին համար չի կռուիլ»

ժամնիքը պիտի ոչնչանայ: Անիկա յաւլսենական բոցերուն պիտի զոհուի:

215. Այս հաւատացեալները որոնք իրենց հայրենիքը թողլով հաւատքին համար պիտի կոռովն, աստուածային գութը յուսալու իրաւունք պիտի ունենան. Աստուած ներողամիտ և ողորմած է:

216. Քեզի պիտի հարցուի զինիին և բազդախաղին մասին. բայ իրենց թէ՝ ասոնք օգտակար ըլլալէ աւելի աղետաբեր և ոճապարտ են⁽¹⁾: Քեզի պիտի հարցընեն նաև ողորմութիւն տալու մասին,

217. Պատափանէ իրենց. — Տուէք ձեզի աւելորդ եղածը: Այս կերպով է որ Աստուած կը գիտցնէ իր օրէնքները, որպէս զի պահէք իր յիշասակը այս աշխարհին և հանդերձեալին մէջ. (որպէս զի անոնց վրայ խորհիք⁽²⁾:

218. Քեզի պիտի հարցուի թէ ի՞նչ պարտաւոր են ընել որբերուն: Քաէ՛ անոնց. — Արդիւնաւորեցէք իրենց ժառանգութիւնները:

219. Եթէ ձեր ինչքերը անոնց հետ հասարակաց են, յիշեցէք որ անոնք ձեր եղբայրներն են, և թէ Աստուած պիտէ զանազանել յանցաւորը արդարէն: Անիկա կրնա ըստ կամ ձեզ վշտացնել: Հզօր և իմաստուն է ան:

220. Կուապաշու կիներու հետ մի՛ ամուսնանաք, մինչեւ որ անոնք հաւատացեալ չըլլան: Հաւատացեալ գերունի մը լաւագոյն է քան աղատ բայց անհաւատ կին մը, նոյնիսկ եթէ ան ձեզի աւելի հաճոյ թուի: Ձեր աղջկները մի՛ տաք բնաւ կուապաշոներուն, մինչեւ որ անոնք ձեր հաւատքը չ'ընդունին: Հաւատացեալ գերի մը

(1) Քաղիմերաքի կը թարգմանէ սապէս. «Թէ՛ մէկուն և թէ միւսին մէջ մարդոց համար բարեկ ալ կայ, չարեկ ալ կայ, բայց չարեկ աւելի մեծ է քան բարեկը»:

աւելի լու է քան անհաւատ մը, մինչեւ իսկ եթէ այս վերջինը աւելի հաճոյ թուի ձեզի:

221. Անհաւատները ձեզի կրակին կը կանչեն, և Աստուած ձեզի արքայութիւնը կը բանայ: Անիկա իր չորհին կ'արժանացնէ զայն որ իրեն հաճոյ է, և մարդոց ցոց կուտայ իր սքանչելիքները, որպէս զի պահեն իր յիշասակը. (իր պատուէրները մարդոց կը բացատրէ, որպէս զի վրան խորհրդածեն:)

222. Քեզի պիտի հարցուի կանանց գաշտանին մասին: Լսէ անոնց. — Ասիկա բնական արատ մըն է⁽¹⁾: Այդ միջոցին հեռու կեցէք ձեր կիներէն, և մի՛ մերձենաք անոնց մինչեւ որ չի մաքրուին: Երբոր անոնք մաքրուին, մօտեցէք անոնց ինչպէս Աստուած կը պատուիրէ ձեզի: Անիկա կը սիրէ զանոնք որ կ'ապաշխարեն և մաքուր են:

223. Ձեր կիները ձեր գաշտին նման են: Մշակեցէք զայն ամէն անգամ որ ուզէք: Բայց նախապէս ձեր հոգիին ի նպաստ բան մը ըրէք. վախցէք Տիրոջմէն և խորհեցէք որ իրեն պիտի վերադառնաք: Հաղորդէ հաւատացեալներուն այն երջանկութիւնը որ իրենց կը սպասէ: (Հաւատացեալներուն ուրախ լուրեր տուր, ո՛վ Մուհամմէտ:

224. Մի՛ երգնաւք բնաւ Աստուծոյ անունով թէ՛ պիտի ըլլաք արդար, բարեկաշտ և թէ ձեր նմաններուն մէջ խաղաղութիւնը պիտի պահպանէք: Անիկա զիտէ և կը լսէ ամէն բան:

225. Աստուած չափափի պատմէ ձեղ ձեր սնուտի երդումներուն միջոցին բերնէ վախտած մէկ խօսքին համար.

(1) Քաղիմերաքի կը թարգմանէ սապէս. «Ասիկա արգելք մըն է: »

անիկա ձեղ պիտի պատմէ եթէ ձեր որտերն ալ համաձայն ըլլան։ Անիկա ներողամիտ և դժած է։

226. Անոնք որ կ'երդնուն թէ իրենց կիներուն հետ յարաբերութիւն չեն ունեցած, չորս ամիս պայջանաժամ պիտի արուեփ իրենց (¹)։ Եթէ այս ժամանակամիջնոցին իրենց կիներուն վերաբառնան, Տէրը ներողամիտ և դժած է։

227. Եթէ ամուսնալուծումը հաստատապէս որոշուած է, Աստուած գիտէ և կը լսէ ամէն բան։

228. Արձակուած կիները երեք ամիս (երեք դաշտան) պիտի սպասեն կրկնն ամուսնանալէ առաջ. չպիտի կրնան ծածկել յդի ըլլանին (²), եթէ կը հաւատան Աստուծոյ և վերջին քատաստանի օրին։ Աւելի արդարադատէ, երբ ամուսնու զանոնք վերստին ընդունած միջնոցին, անկեղծ հաշտութիւն մը ցանկայ (³)։ Պէտք է որ կիները պատշաճ պարկեցառութեամբ մը վարուին (և փոխադարձարպար) և ամուսինները անոնց վրայ գերալզուութիւն մը ունենան։ Աստուած հզօր է և իմաստուն։

229. Արձակուումը միայն երկու անգամ պէտք է կատարուի։ Ամուսինները պիտի պ սինն իրենց կիները մարդարակութեամբ, և եթէ պիտի արձակին, վեհանձնութեամբ պէտք է վարուին։ Անոնց զրամօժիտէն բան մը չեն կրնար վար դնել, եթէ ամուսինները չեն վախնար

(¹) Երբ մահմետական մը երգնու թէ իր կնոջը հետ ոչլեւս յարաբերութիւն չունի, և ամիս միջոց կը տրուի իրեն անոր հետ հաշտուելու համար, եթէ չի հաշտուի, հարկադրուած է զայն արձակել. այն ատեն կինը կինայ կրկնն ամուսնանալ։

(²) «Անոնք պէտք չէ ծածկեն այն, զոր Աստուած ստեղծած է իրենց արդանդին մէջ»։ (Թարգմ. Քաղիմիրսկի)

(³) «Աւելի արդար է որ ամուսինները զանոնք վերստին առնեն, երբ յդի են»։ (Թարգմ. Քաղիմիրսկի)

սահնակով ընել Տիրոջ պատուէրները։ (Եթէ դուք չէք կը բնար բնաւ զանոնք յարգել, ձեզմէ ոչ սէկուն մեղք չպիտի համարի ամեմարուի ամէն ինչ որ կինը ընէ ինքզինքը փրկելու համար։) Այն ատեն այրը իրաւունք ունի օրէնքի նրաստութենէն ազատելու։ Աստուածային պատուէրները ասոնք են, ունակով մի՛ ընէք զանոնք որմնք որ կը բըռնաբարեն, ոճագործներ են։

230. Ան որ երեք անգամ կ'արձակէ կին մը, չպիտի կրնայ զայն վերատին առնել, մինչեւ որ այդ կինը չերթայ անկողինը ուրիշ ամուսինի մը և անկէ ալ արձակուած ըլլայ։ Այն ատեն իրենց պիտի թոյլատրուի միանալ, եթէ կարծեն թէ կրնան Աստուծոյ պատուիրանքները պահել։ Ասոնք են այն պատուէրները զորս Աստուած կուտայ զինքը լսողներուն։

231. Երբ կին մը արձակէք և զայն ճամբելու ժամանակը եկած է, մարդասիրութեամբ պահեցէք զայն, կամ բարութեամբ զրկեցէք։ Զայն բնաւ վար մի՛ զնէք բոնի կերպալ (անոր դէմ անարդարութիւն մը ընելու համար), գուցէ օրինալզնց ըլլաք։ Այդպիսի վարմանք մը անարդար է (¹)։ Աստուածային պատուէրներուն հետ մի՛ խաղաք։ Յիշեցէք այն չնորմները որոնցմով ողողեց ձեղ երլինք։ Յիշեցէք որ ձեղի զրկեց այն Գիրքը որ իմաստութիւնը կը բովանդակէ։ Վախցէք Տիրոջմէն։ գիտցէք որ իր գիտութիւնը անսահման է։

232. Զեր արձակած կինը երբ սպասէ նշանակուած ժամանակամիջնոցը, մի՛ արգիւէք զինքը օրինաւոր երկրորդ ամուսնութիւն մը կնքելէ։ Այս պատուէրները կը վերաբերին անոնց՝ որմնք կը հաւատան Աստուծոյ և վեր-

(¹) «Ուշ որ սցդպէս վարուի, ինքզինքին դէմ կը դորձէ»։ (Թարգմ. Քաղիմիրսկի)

Ջին գաստառանին : Արդար և խմաստուն պատուէրներ են ասոնք : Աստուած զիաէ և դուք չէք զիտեր :

233. Մայրերը (արձակուած) կաթ պիտի տան իրենց դաւակներուն ամբողջ երկու տարի, եթէ հայրը ուղէ որ աւելի պակաս չըլլայ : Կնոջը մնունզը և զգեստը զաւկին հայրը պիտի հայթայթէ : Պատշաճ կերպով և իր կարուղութեան համաձայն պէտք է ասպեցնէ զայն : Ծնողները հարկադրուած չպիտի ըլլան կրցածնէն աւելի բան մը ընելու իրենց տղոց, ո՞չ ալ խնամակալները՝ իրենց սաներուն⁽¹⁾ : Մօրը թոյլտորուած է իր երախան կաթէն կարել (ժամանակամիջոցին աւարտումէն ասուջ), ամուսնոյն հաւանութեամբը : Կրնան նսեւ ստնտու մը կանչել, պայմանաւ որ անոր վճարեն ինչ որ խոստացած են : Վախցէք Աստուծմէ . զիտցէք որ անիկա բաց աչքով կը նայի ձեր գործերուն :

234. Մեռած ատեննիդ ձեր թողած կիները պիտի սպասեն չորս ամիս և տասն օր : Այդ պայմանաժամը լմնալէն վերջ դուք բնաւ պատասխանատու չպիտի ըլլաք այն բաներուն համար, զորս անոնք պիտի ընեն օրինաւորապէս : Աստուած զիտակ է ձեր գործերուն :

235. Երբ (արձակուած) կնոջ մը հետ ամուսնանալու փափաք ունենաք⁽²⁾, այդ փափաքը յայնէք թէ ծածկեք ձեր սրտերուն մէջ, Աստուծոյ առջեւ յանցաւոր չպիտի ըլլաք : Անիկա զիտէ թէ դուք չէք կրնար չի խոր-

(1) «Թող ոչ ոք իր կարողութենէն վեր բեռան տակ չի մտնէ . թող հայրը և մայրը իրենց շահերը չի վտանգեն աղուն համար . չօրը փոխանորդը միեւնոյն պարտականութիւնները կը ստանձէ, » (Թարգմ. Քաղիմիքիքի)

(2) Զորս ամիս և տասը օրուան ժամանակամիջոցին :

իլ կիներուն վրայ . բայց զաղանապէս բան մը մի՛ խոստանաք անոնց, եթէ ձեր խօսքերուն պարկեշտութիւնը չի ծածկեր ձեր սէրը :

236. Ամուսնական կապ հաստատել մի՛ որոշէք, մինչեւ որ պատուիրուած ժամանակամիջոցը չի լրանայ : Դիտցէք որ Աստուած ձեր սրտերուն խորը կը ճանչնայ : Վախցէք իրմէ և մի՛ մոռնաք որ անիկա ողորմած և անցիշաշար է :

237. Ո եւ է պատիժի չպիտի ենթարկուիք⁽¹⁾ երբ արձակեք կին մը, որուն հետ յարաբերութիւն չէք ունեցած, կամ որուն ո եւ է զրամօժիտ նշանակած չըլլաք : Ձեր կիներուն տուէք պէտք եղածը, որ համապատասխան ըլլայ ձեր կարողութեան : Հարուստն ու աղքատը տարբեր տարբեր պիտի օժտեն զանոնք : Արդարութեամբ և բարերարութեամբ պէտք է տան իրենց ընծաները :

238. Անիկա որ կին մը կ'արձակէ անոր մերձենալէ առաջ գումօժիտին քանակը որոշելէ վերջ, կնոջ քով պիտի ձգէ կեսը . բայց այր և կնոջ կամ միայն առն հաւանութեամբ կինը կրնայ ստանալ ամրող օժիտը, ինչ որ աւելի պատշաճ է բարեկալչտութեան . մի՛ մոռնաք իրարու բարիք ընել . Բարձրեալը ձեր գործերուն վկան է :

239. Ճշգրտութեամբ պահեցէք աղօթքի ժամերը, մանաւանդ կէս օրուանը⁽²⁾, ելէք և ջերմեռանդութեամբ աղօթեցէք :

240. Երբոր տապնապի մէջ էք, քաղած ատեննիդ կամ ձիու վրայ աղօթեցէք . Երբ ապահովութեան մէջ էք,

(1) «Մեղք չպիտի համարուի : » (Թարգմ. Քաղիմիքիքի)

(2) Քաղիմիքիքի կը թարգմանէ : « մէջտեղի աղօթքը » և կը յարէ որ յայտնի չէ թէ, կէս օրուան թէ երեկնադէմի աղօթքին համար է . հաւանաբար իրեկնադէմին է :

յիշեցեք երկինքի չնորհները։ Մտածեցէք որ անփկա ձեզի սորվեցուց այն վարդապետութիւնը զոր դուք կ'ամողիւ տանայիք։

241. Անոնք որ մեռած ատենակն կիներ կը թողուն, կտակ մը պէտք է ձգեն անոնց, իրեւ մէկ տարուան ապրուատի դրամ, և պէտք է տան ապաստանարան մը իրենց տանը մէջ։ Եթէ կիները իրենց մեկնին, ձեր ժառանգորդները բնաւ պատասխանատու պիտի չըլան այն բաներուն համար, դրս անոնք պարկեշտօրէն պիտի ընեն։ Աստուած հզօր է և իմաստուն։

242. Արձակուած կիներուն պարտաւոր էք տալ համեստ թոշակ մը։ Ասիկա պարտականութիւն մըն է անոնց համար որ Աստուծմէ կ'երկնչին։

243. Այս կերպով է որ Աստուած կը բացատրէ իր պատուիրանները, որպէս զի դուք խորհրդածէք անոնց վրայ։

244. Զէք յիշեր զանոնք որ մահուան վախը դուրս հանեց իրենց տաւներէն, թուով մէկ քանի հազար (¹)։ Աստուած անոնց բաւ։ — Մեռէք. յետոյ անոնց կեանք տուաւ, որովհետեւ Աստուած մարդոց համար առաստածեանութեամբ լեցուն է։ Եւ սակայն մարդոց մեծ մասը անոր բարիքներուն փոխարէն չնորհակալ չ'ըլլար։

245. Հաւատքին պաշտամնութեանը համար մաքանեցէք, և գիտցէք որ Աստուած ամէն բան զիտէ ու կ'իմանայ։

(1) Ժանտախտը աւելը կը գործէր Հրէաստանի Տավարտան քաղաքին մէջ. բնակեներուն մեծ մասը փախաւ, Աստուած անոնց բաւ. մեռէք, և անոնք մեռան։ Տարիներ եւոք անոնց յարութիւն տուաւ Եղեկելի ինդրանկով, բայց անոնք իրենց գէմբին վրայ պահէցին մահուան հետքերը։ Մուհամմէտ Եղեկելի տեսիքին կ'ակնարկէ հսու։

246. Ան որ փառաւոր փոխատուութիւն, մը ընէ Աստուծոյ, հարիւրապատիկ (անհունօրէն) բազմապատկուած պիտի ստանայ զայն։ Աստուած ըստ կամս կը տարածէ և կը սահմանափակէ իր չնորհները։ Դուք ամենքդ իրեն պիտի վերագառնաք։

247. Յիշեցեք Խորայէլի զաւակներուն ժողովը Մոլուէսի մահէն վերջ, երբ անոնք իրենց մարգարէին ըսին։ — Մեղի թագաւոր մը ստեղծեցէք որպէս զի Աստուծոյ դասին համար կոռւնք։ Մարգարէն անոնց հարցուց։ — Կոռւելու պատրաստ պիտի ըլլաք երբոր ժամանակը գայ։ Անոնք պատասխանեցին։ — Ո՞վ պիտի կրնայ արգիլել մեղ հաւատքի գրօշին տակը քաղելէ. մնաք մեր տուներէն վտարուեցանք և մեր տղաքը ձեռքերնուս առին։ Բայց երբ կրիւի օրը հասաւ, մէկ քանի հոգիներէն զատ ամենքն ալ փախան (կարծիքնին փոխեցին), բայց Ամենակարողը կը տեսնայ նենդաւորները։

248. Մարգարէն ըստ անոնց. — Աստուած Սաւուղը ընարեց իրեւ ձեր թագաւորք։ Խորայէլացիները յարեցին. — Անիկա ինչպէս կրնայ մեր վրայ իշխանութիւն ունենալ. մենք իրմէ աւելի արժանաւոր ենք. առնիկա մինչեւ խոկ հարտառութեան առաւելութիւնը չ'անի։ Սամուէլ պատասխանեց. — Տէրը զայն ընարեց որ ձեզի հրամայէ. անոր միտքը լուսաւորեց և անոր բազուկը զօրացուց. Ամենակարողը իր ուղածին կուտայ իշխանութիւնը, որպէս իտեւ զիտութիւնը իր սեպհականութիւնն է, ու ո՛չ մէկ բան կը սահմանափակէ իր անսահմանութիւնը։

249. Ասմուէլ շարունակեց. — Անոր թագաւորութեան նշանը պիտի ըլլայ (զմնակցութեան) Տապանին գալուսոր. անիկա ձեր ապ առվութեան զրաւականը պիտի ըլլայ. Մովսէսի և Ահարոնի ընտանիքին թողած

մասունքները պիտի ստունաք . հրեշտակները պիտի կրեն զայն . հաւատացեալներուն համար անփկա նշան մը պիտի ըլլաց⁽¹⁾ :

250 . Սաւուղ իր բանակին հետ մեկնած ատեն ըստու . — Աստուած ձեզ փորձի պիտի ենթարկէ այս գետին եղը , ան որ անկէ ջուր խմելով ծարաւը անցընէ , իմին-ներէս չպիտի ըլլաց : Իսկ անոնք որ ժուժկալ պիտի մնան , կամ իրենց ափին փոսին մէջ քիչ մը ջուր առած պիտի խմն միայն , իմիններուս կարգը պիտի դասուկն : Մէկ քանիներէն զատ ամենքն ալ առատօրէն խմեցին : Երբ թագաւորը հաւատացեալներուն զլուխը կանգնած գետը անցաւ , իրմանց ծարաւը մարողները գոչեցին . — Այսօր բնաւ ուժ չ'ունինք Գողիաթին և իր զինուորներուն դէմ , բայց այն հաւատացեալները որոնք յարութեան օրին կը հաւատացին⁽²⁾ , գոչեցին . — Ո՞հ , քանի՞ քանի՞ անդամ-ներ Աստուծոյ չործիւ պլատիկ բանակ մը յաղթած է մեծ բանակի մը , Բարձրեալը կը զօրացնէ քաջերուն բա-ղուկը⁽³⁾ :

251 . Եւ երբ Գողիաթին և իր բանակին դէմ կուռե-լու վրայ էին , սա աղօթքը ուղղեցին երկինք . Տէր ,

(1) Այս հրաշալի տապանը որ երկինքն դրկուած էր Աղտամին , իսրայէլի զաւակներուն փոխանցուեցաւ , Ամաղեկացիները անոնց յաղթելով գրաւեցին զայն , իրենց բանակներուն առջեւէն կը տա-նէին , և յաղթութեան գրաւական մըն էր ան իրենց համար : Կը պարունակէր նուիրակոն խուց մը , Մովսէսի ոտնամանը և գաւա-զանը , ԱՀարոնի խոյրը , երկնային մանանայով լեցուն անօթ մը և օրէնքի սեղաններուն բնկորները : Հրեշտակները մթնողըտին մէջէն քերին այս տապանը և դրին Սաւուղի ոտքերուն առջեւ :

(2) «Որոնք Աստուծոյ երեսը տեսնալուն կը հաւատացին . » (Թարգմ. Բաղեմիրսկի)

(3) «Աստուած յարատեւողներուն հետ է: » (Թարգմ. Բաղեմիրսկի)

յարատեւութիւն և քաջութիւն տուր մեղի , մեր քայլերը հասաւատուն ըրէ , և օգնէ մեղի (յաղթելու) այս անհաւ-ւատ ժողովուրդին դէմ :

252 . Եւ անսնք յաղթեցին թշնամիին՝ Աստուծոյ կամ-քովը : Դաւիթ սպաննեց Գողիաթը , Աստուած անոր տուաւ խմաստութիւն և թագաւորութիւն⁽¹⁾ : Աստուած անոր սորվեցուց ինչ որ ուզեց : Եթէ Ամենակարողը չի հաւատարակչեր մէկ աղգը միւս աղգով , անտարակոյս ապականութիւնը պիտի ծածկէր երկիրը : Բայց Աստուած արարածներուն հանգէպ բարի է :

253 . Բարձրեալին պասուէրները ասոնք են . քեզի կը յայտնենք զանոնք որովհետեւ գուն իր մարգարէնե-րուն գասէն եւ :

254 . Մենք բարձրացուցինք մարգարէները մէկը միւսէն աւելի վեր . ամենէն բարձրները անոնք են , ու-րոնց խօսեցաւ Աստուած . իր մասնաւոր չորհներովը օդ-նեց անոնց : Մարիամի որդի Յիսուսը զրկեցինք , հրաշք գործելու զօրութիւնը տալով անոր , սրբութեան ողիով (Գարբիէլ հրեշտակապետ) հզօրացուցինք զայն : Եթէ Աստուած ուզէր , իր մարգարէներէն (և կատարած հրաշք-ներէն) ետք եկողները կուր չափափ ընէին իրարու հետ⁽²⁾ բայց երբոր ճշմարտութիւնը տեսան , սկսան վիճարանել և պառակտել , ոմանք հաւատացին , ոմանք անհաւատ

(1) Քաղիմիրսկի փոխանակ «թագաւորութեան» կըսէ «Գիրքը» այսինքն Սաղմոսագիրքը , և դիտել կուտայ թէ՝ Մուշամետ կը ճանչնայ միայն չորս աստուածային գիրքեր , որոնք են . Հնդամատ-եանը , Սաղմոսագիրքը , Աւետարանը և Փուրանը : Մարգարէներուն զրկուած միւս գիրքերը , ըստ Մուշամետի , կորսուած են :

(2) «Զիրար չպիտի սպաննեն » (Թարգմ. Բաղեմիրսկի)

մասցին։ Եթէ Աստուած ուզէր, անոնք չեխն պառակտեր (¹), բայց Աստուած ինչ որ ուզէ, ան կընէ։

255. Ո՞վ հաւատացեալներ, ողորմութիւն տուեք այն ինչքերով, զոր ձեզի չորհեցինք, երբ դեռ չէ հասած այն օրը, ուր այլեւս ո՛չ պայմանագրութիւն, ո՛չ բարեկամութիւն և ոչ ալ բարեխօսութիւն պիտի չըլլայ։ Անհաւասները չարութեան մէջ պիտի իշխան։

256. Աստուածը՝ միակ Աստուածն է։ Այդ կենդանի և յաւիտենական Աստուածէն զատ ուրիշ չկայ. (ո՞չ թշմրութեան և ոչ ալ քունի կ'ենթարկուի անիկա.) Երկինքի և երկրի մէջ եղածները իրեն կը պատկանին. ո՞վ կրնայ միջնորդել իր մօտ, առանց իր կամքին։ Անիկա զիտէ թէ ի՞նչ կաց ապագային և անցեալին մէջ։ Մարդիկ զիտնն իր գերագոյն իշխանութեան (²) այն մասը միայն, որ անիկա կ'ուզէ զիտացնել։ Իր վեհափառ դահը կը տարածուի երկինքի և երկրի վրայ։ անիկա առանց նեղութեան կը պահէ Գահը (³)։ Մեծ և բարձրեալ Աստուածն է անիկա (⁴)։

257. Մարդոց վրայ ճնշում մի՛ բանեցնէք բնաւ. իւրենց կրօնքին համար։ Փրկութեան ճամբան բաւական որոշ է մոլորութեան ճամբային (⁵)։ Ան որ կրասկաշտութիւնը լիք (⁶) և սուրբ կրօնքը ընդգրկէ, անխորսակելի

(1) «Զիրաք չեխն սպաններ» (Ժարդ. Քաղիմիրաքի)

(2) «Իր գետութեան»

(3) Այսինքն, արդարութեան դահը, Աստուածոյ ատեանը։

(4) Այս հասուածը աղօթք մըն է. հաւատացեալները երբ չմայեակ իրենց բազուկին վրայ կը կրեն զայն։

(5) Այս խօսքը կ'ուղղուեր այն իսլամներուն, որոնք կ'ուզէին բռնադատել իրենց կրուպաշտ մնացած աղաքը որ իսլամութիւնն ընդունին։

(6) «Ան որ թակութի (Կուռք մը) չի հաւատայ»։

բաղուկ մը բոնած պիտի ըլլայ։ Աստուած ամէն բան գիտէ և կը լոէ։

258. Աստուած հաւատացեալներուն պաշտպանն է. անիկա զանոնք մութէն՝ դէպի ի լոյս պիտի առաջնորդէ։

259. Սատանան (Թակութը) անհաւասներուն պաշտպանն է. անիկա զանոնք լոյսէն՝ դէպի մութը կ'առաջնորդէ. և յաւիտենական բացերուն մէջ պիտի գահավորմէ։

260. Կը յիշես այն թագաւորը (¹) որ Արբահամի հետ վիճաբանեցաւ թագաւորութիւնը տուող Աստուածոյ մասին։ Արբահամ ըստ էր. իմ Աստուածս այն է, որ կեանք և մահ կուտայ։ — Ես եմ, յարեց ամբարիչոը, կեանք և մահ տուող։ Արբահամ պատասխանեց. — Աստուած արեւելքէն ծագիլ կուտայ. դուն ալ արեւմուտքէն ծագեցուր տեսնեմ։ Ամբարիչոը չփաթեցաւ, որովհետեւ Ամենակարողը չի լուսաւորեր նենդամիտները։

261. Կը յիշես նաեւ այն ճամբորդը, որ աւերուած քաղաքի մը առջեւէն անցած միջոցին ըստաւ. — Աստուած ինչպէս յարութիւն պիտի տայ այս կործանած քաղաքին բնակիչներուն։ Աստուած զայն մեղցուց և հարիւր տարի եաք անոր յարութիւն տալով ըստաւ. — Հոս քանի՞ տարի բնակիցար։ — Օր մը կամ քանի մը ժամ, պատասխանեց ճամբորդը։ — (Ոչ, պատասխանեց Աստուած, հարիւր տարի կեցար հոս) Նայէ ուտելիքդ և խմելիքդ անեղծ մնացած են. իսկ աւանակիոդ ուկորները՝ միայն կան. այս հրաշքը գործեցինք, որպէս զի օրինակ ըլլաս մարդոց։ Տես թէ ինչպէս պիտի հաւաքենք ուկորները և միավ

(1) «Բան մը իմոցած չե՞ս այն թագաւորի մասին»

պիտի ծածկենք : Այս հրաշքին ի տես , ճամբորդը գոչեց . — Հիմտ կը խոստովանիմ որ Սատուծոյ զօրութիւնը անսահման է (1) :

262. Երբ Արքահան գոչեց՝ Տէր , ցոյց առւր ինձ թէ ինչպէս յարութիւն կուտաս մեռեաներուն , Սատուծ ըստ անոր . — Տակաւին չես հաւատար : Կը հաւատամ , պատասխանեց Արքահամ , բայց կ'ուզեմ որ հաւատաքս զօրանայ , Այն ատեն Սատուծ ըստաւ . — Զորս թուչուն առ և կտոր կտոր ըրէ և լեռներուն դադաթը տարտանէ կը տորները , յետոյ զամոնք քեզի կանչէ . ու անոնք դէպ ի քեզի պիտի թուչն . դիսցիր որ Բարձրեալլ հզօր և իմաստուն է (2) :

263. Անոնք որ իրենց հարստութիւնը կը գործածեն նույիրական դատին պաշտպանութեանը համար (3) կը նմանին այն ցորենահաստիկին որ եօթը հասկ կ'արտադրէ , և որոնց իրաքանչիւրը հարիւր հաստիկ կը պարունակէ :

(1) Քուրանի մեկնիչները կ'ըսեն թէ այս ճամբորդը Եստրազ կամ Օղոյին է , որ աւանակի մը վրայ չեծած և ձեռքը բանած կողով մը թուզ ու ամսն մը գինի , կ'անցնէր Երուսաղէմի աւերակներուն առջեւեն : Օզայիր այդ պահուն Աստուծոյ զօրութեան վրայ կասկածելուն համար Նախախնամութիւնը մահուամբ պատժեց զինքը : Հարիւր տարի ետք Աստուծ յարութիւն տուաւ անոր և ցոյց տուաւ իր սւաւելիքն ու խմելիքը , որոնք ժամանակի աղդեցութենէն զերծ մնացած էին : Յետոյ Աստուծ Օզայիրին ցոյց տուաւ իր աւանակին ոսկորները , որոնք հողը կը ճերմեցնէին . Ամենակարողին հրամանին վրայ , կենդանին մարմին առաւ և սկսաւ զաւալ

(2) Ան չըրս թռչունները , որոնցմավ Աստուծ գործեց այս հրաշքը , կ'ըսէ ձէլալէտոտին մեկնչը , չետեւեալներն են . սիրամարդ , արծիւ , ագռաւ և աքաղաղ . Մահմէտականները կը դաւանին թէ այս հրաշքին ծշգրտութիւնը անվիճելի է :

(3) «Աստուծոյ ճամբուն մէջ» (թարգմ . Քաղիմիրսք)

Սատուծ կ'աւելցնէ (1) հարստութիւնն անոնց որ աւզէ : Իր իմաստութիւնը հաւատար է իր անսահմանութեանը :

264. Անոնք որ նույիրական պատերազմին համար կը ծախսեն իրենց հարստութիւնը , և գանգատներ կոմ ապօրէն արարքներ չեն ընկը իրենց նույիրին փոխարէն , ապահովաբար պիտի , վարձասարութին Սատուծմէ : Երկիւլը և վիշտը իրենց վրայ չպիտի իջնէ երթէք :

265. Աւելի նախապատիւ է խօսքի և գործի մէջ մարդասէր ըլլալ , քանի թէ ողպրմաւթիւն մը տալէ եաք անարդարութիւն զործել : Սատուծ հարստու և գթած է :

266. Ո՛վ հաւատացեալներ , ձեր առուած ողպրմութեանց արժանիքը մի՛ չնչէք արտառնջներ ընելով կամ անարդարութեան մէջ իմնալով : Ան որ ցուցամութեամբ ողպրմութիւն կուտայ և չի հաւատար Սատուծոյ ու վերջն դատաստանին , կը նմանի փոչեպատ ժայռին (2) . Երբ հեղեղանան անձրեւ մը գայ , միայն իր կարծրութիւնը (ժայռը) կը մնայ : Յաւիտենականին աչքին՝ անոր գործերը ու է արժանիք պիտի չունենան (3) որովհետեւ Սատուծ չառաջնորդեր բնաւ անհաւատարիմները :

267. Անոնք որ իրենց ունեցածը կը ծախսեն Աստուծոյ հաճոյ ըլլալու համար , և որոնք առաքինութիւն գործելու մէջ հաստատակամ են , կը նմանին ըլլորի մը վրայ զետեղուած պարաէզի մը . բարերար անձրեւը և ցօլը կը ջրեն հողը և պատղները կ'անեցնեն . (Կթէ անձրեւ չգայ , ցոլ կ'իջնէ) Աստուծ ձեր գործերը կը տեսնէ :

(1) «Կը կրկնապատկէ» (թարգմ . Քաղիմիրսք)

(2) «Թարուտ ըլլուրի մը» (թարգմ . Քաղիմիրսք)

(3) «Այդ տեսակ մորդիկ իրենց գործերէն ու է օգուտ չպիտի քաղցին : » (թարգմ . Քաղիմիրսք)

268. Զեր մէջէն ս՛վ պիտի ուղէք սւնենալ պարտէդ մը՝ արմառենիներով լիցուն, այդիներով պճնաւած, գետակներով կարասաւած, ամէն տեսակ պառավներով բեղմնաւոր, ու (այս վայելքներուն միջային) յանկարծ ծերանալ, օրօրոցին մէջ երեխաներ սւնենալ և տեսնել որ բայերու յարձանք մը կ'աւերէ ձեր պարտէզք: Այս կերպով է որ Սատուած իր գալանիքները⁽¹⁾ կը բացատրէ ձեզի, որպէս զի իր վայ խորհիք:

269. Ո՛վ հաւատացեալներ, ոզսրմութիւն տուէք ձեր հարստութեամբ և բերքերով զար մենք կը բաւանմնք (ձեզ համար) և ձեր ինչքերուն ամենէն գէշ մասը մի՛ բաշխէք:

270. Մի՛ տաք այն բանք զօր չպիտի ուղէքիք ուրիշէն սահնակ, տարբեր իմոդիք է, ևթէ մասնաւոր համամածայնութիւն մը ըլլայ: Դիացէք որ Սատուած հարուասէ և փոռքով զեղուն:

271. Սատանան ձեր աչքին առջեւ կը ներկայացնէ աղքատութիւնը⁽²⁾, ամիկա ձեզի կը մղէ ոժիրի⁽³⁾: բայց Սատուած ձեզի կը խոստանայ թողութիւն և առատաշենութիւն: Անիկա իմաստուն և անսահման է:

272. Սատուած իմաստութիւնը կրուայ իր ուղածին: ան որ այս չնորդը կ'ընդունի, հարստութեանց ամենէն մեծը ընդունած կըլլայ, բայց միայն սիրա ունեցող մարդիկը կը զգան այս բանը:

273. Զեր ասիր ողորմութիւնը և ձեր ունեցած բազմանիքները Սատուած պիտի գիտնոյ: Պարսաւանիքը

(1) «Եր պատուերմանները» (Թարգմ. Քաղիմիքը)

(2) Այսինքն Սատանան կը համոզէ զձեզ առատաձեռն ըլլալ, որպէս զի անոր հետեւանքով աղքատութեան մէջ վիճաք:

(3) «Ամօթալի գործերու» (Թարգմ. Քաղիմիքը)

երբէք բաժինը չպիտի ըլլայ բարեկործներուն⁽¹⁾: Յարի գործերը հրապարակու ընելլ լաւ է, բայց բաւազոյն է ծածուկ բարերարելլ և աղքաներուն աղորմութիւն տալը: Յասկէսով պիտի կարենաք քաւել ձեր մեղքերը: Յարձրեալլ կը տեսնէ ձեր գործերը:

274. Դուն պարտաւոր չես բնաւ (ով Մահամիշտ) սնաւասաները սասանորդելու: Սատուած կը լուսուորէ իր ուղածները: Զեր գործելիք բարիքին արժանիքը ձերը պիտի ըլլայ և անոնց (Սատուածոյ զէմքը տեսնելու համար ձեր ըրածներուն) վարձատրութիւնը պիտի սասանաք, (և ձեզի զէմ անարդարութիւնն գործող չպիտի ըլլայ:) Կան (ձեր մէջ) հաւատադրիմ մարտիկներ, որոնք կը կոռուին հաւատքի զրօշին տակ⁽²⁾ և աղքատ ըլլանսուն համար իրենց պէտքերը չեն կրնաք հայթայթել: Անոնք համեստ և վերապահ ըլլանսուն համար չգիտացողները հարուաս կը կարծեն⁽³⁾: Դուն զանոնք պիտի ճանչնաս այս նշանէն⁽⁴⁾: ոմաններ երբէք ողորմութիւն չեն ուղեր տաղաւուկ պատճառակով: Այս մարդոց ինչ բարիք որ գործէք, Սատուած պիտի խմնայ:

275. Ողորմութիւն տուէք յորեկը, զիշերը, զալանապէս, յայսմասպէս: Յաւիտենականին ձեռքէն պիտի տուանաք վարձատրութիւնը և երկիւղէ ու զիշտէ զերծ պիտի ըլլաք:

(1) «Զարերը ոչ մէկ օժանդակութիւն չպիտի ունենան» (Թարգմ. Քաղիմիքը)

(2) «Որոնց միակ զբաղումն է կատառծոյ ճամբուն մէջ մաքառիը» (Թարգմ. Քաղիմիքը)

(3) «Ձեն կընաք հոս հոն երթաւ վաճառականութեամբ հարստանալու համար» (Թարգմ. Քաղիմիքը)

(4) «Իրենց համեստ երեւոյթէն»:

276. Անոնք՝ որ վաշխառութիւն կընեն⁽¹⁾ յարութեան օրը իրենց գերեզմաններէն դուրս պիտի եղեն նման այն թշուաստկաններուն որոնք Ստատուային հպումէն աղասասած են. որովհետեւ անոնք կըսեն. վաճառումին և վաշխառութեան միջնւ տարբերութիւն չկայ բնուա. Աստուած թոյլատրած է վաճառականութիւնը, բայց արգիլած է վաշխառութիւնը. Ով որ տեղեկանալ Տիրոջ այս պատուէրին, վերջ կը գնէ իր գործած անիրաւութեան, անցեալին համար թողութիւն պիտի ստանայ, և երկինք վկայ պիտի ըլլայ իր գործերուն⁽²⁾: Ան որ ոճիրի (վաշխառութեան) մէջ իմայ կրկին, յաւիտենական կրակին որպէս պիտի ըլլայ:

277. Աստուած իր օրհնութիւնը վերցուցած է վաշխառութեան վրայէն և ողորմութիւն ստուոյներուն վրայ թափած է: Անիկա անհաւատը և ամբարիչոր կ'ատէ: Իսկ այն հաւասարյաները որոնք բարիք կը գործեն, ազգօթք կընեն և ողորմութիւն կուտան, Աստուածմէ պիտի ստանան իրենց վարձատրութիւնը: Անոնք երկիւղէ և վիշտէ գերծ պիտի ըլլան:

278. Ո՞վ հաւասարյաներ, երկնչեցէք Աստուածմէ, և եթէ հաւասարիմ էք, ձեր ըրած վաշխառութիւնը դարձանեցէք⁽³⁾:

279. Եթէ մերժէք համակերպիլ, պատրաստուեցէք այն կոփեին զոր Աստուած և իր Մալգարէն պիտի մղեն ձեզի դէմ: Եթէ հաւալանդիք իր ձայնին⁽⁴⁾ ձեր զրամա-

(1) «Վաշխառութեան արդիւնքը կ'իւրացնեն» (Քաղմիրոքի)

(2) «Այն տաեն Աստուածմէ կախում պիտի ունենայ իր Ճակատագիրը» (Թարգմ. Քաղմիրոքի)

(3) «Վաշխառութեան ունեցած պահանջնիդ բաշխեցէք»

(4) «Եթէ զջում յայտնէք»

գլուխը քովիերնիդ պիտի մնայ: Ոչ ոքի դէմ անարդար մի՛ ըլլաք, ու ոչ ոք ձեզի դէմ անարդարութիւն չպիտի դորձէ:

280. Եթէ ձեր պարտապանը դժուարութիւն կը կրէ վճարելու համար, միջնց տուէք իրեն. բայց ա՛ւ աւելի արժանաւոր բան մը ըրած կըլլաք, եթէ իր պարտքը իրեն լաշխէք: Եթէ գիտնայիք:

281. Երկնչեցէք այն օրէն, երբ Աստուածոյ առջեւ պիտի եղեք. հոն ամէն ոք իր գործերուն վարձքը պիտի ստանայ. հոն ձգրիտ արդարագատութիւնը պիտի իշխէ վճիռներուն վրայ:

282. Ո՞վ հաւասարյաներ, երբ սուշ թուականի մը վճարելի վախառութիւն մը կընէք, թող գրազիր մը հաւասարմօրէն զրի տոնէ այդ պարտքը: Թող զրէ ամսպէս՝ ինչպէս Աստուած սորվեցուցած է իրեն: Ան թող զրէ և պարտապանը թող տուն տայ. Աստուածմէ թող վախնայ և վորասաւութեան պայմաններէն ո՛չ մին թող զանց ընէ: Եթէ պարտապանը տղէտ է, կամ հիւանդ է, և կամ տուն տալու վիճակի մէջ չէ, թող իր վոխանսորդը տուն տայ արդարութեան օրէնքներուն համաձայն: Զեր մէջէն ընտրուած երկու այր վկայ կանչեցէք. և եթէ երկու երիմարդ չդանէք, մէկ այր և երկու կին կանչեցէք (վկայութիւն տալու կարող) որպէս զի, երբ մէկը մոռացութեամբ սիալի, միւսը կարենայ ճշմորտութիւնը լիշեցընել: Վկանիերը թող չմերժեն վկայութիւն տալ, տանի անդամ որ իրենց զիմումը ըլլայ: Զանց մի՛ ընէք զրի տոնել ձեր վոխառութիւնը, մնձ ըլլայ թէ փոքր, և վճարման պայմանաւածանը նշանակեցէք: Այս նախազգուշութիւնը Աստուածոյ առջեւ աւելի արդար է, վկանիերուն համար աւելի պատշաճ է և կասկածները փարտաելու.

աւելի յարմար է : Հարկադրուած չէք զրի ասնել այն ատեն միայն, երբ վաճառումը կը կասարուի ներկայ եղող մարզոց միջեւ և փոխանակութեամբ⁽¹⁾ . (այս պարագան զրի չասնելը մեղք չպատի համարուի) : Զեր պայմանագրութեանց միջոցին վկաներ կանչեցէք, և ըսունութիւն մի՛ բանեցնէք ոչ զրագիրին և ոչ ալ վկաներուն վրայ . եթէ ընէք ոճիր գործած կը լաք : Երկնչեցէք Ասաւծմէ . ինքն է ար կ'աւսուցանէ ձեղ, և անիկա ամէն բան զիսէ :

283. Երբ ճամբարգրութեան մէջ ըլլալնուդ համար զրագիր չիմաք դանել, զրաւական մը պիտի տանէք : Այն պարասապանը սրաւն վասահութիւն ցոյց արուած է, թող խնամք տանի իր զրաւը ևս առնելու⁽²⁾ . Ասաւծմէ՝ իր տիրոջմէն թող վախնայ . Երբէք մի՛ մերժէք տալ վկայութիւնը . ով ար մերժէ, ապականած սիրտ ունի : Բայց Ասաւծած զիսէ ձեր գործերը :

284. Ասաւծած երկների և երկրի վեհապեսն է . ձեր սրաւերաւն մէջ եղածը յայնէք թէ ծածկէք, անիկա հաշիւ պիտի պահանջէ ձեղմէ . իր աւզածին թողութիւն պիտի տայ, և ուզածը պիտի պատմէ, սրավնեաւ ոչ մէկ բան կը ասհմանափակէ իր զօրութիւնը :

285. Մարդարէն հաւասացած է այն բանին զոր Ասաւծած զրկեց իրեն . հաւասացեաները ընդզրկած են իր հաւասաքր : Աննք բորբն ալ կը հաւասան Ասաւծոյ, իր հրեշտակներուն, իր նուիրական մասնաններուն և իր

(1) «Երբ ձեռքէ ձեռք կ'անցընէք ապրանքը» :
(Թարդմ. Քաղիմիրաբի)

(2) «Բոյց երբ մէկը միւսին առարկայ մը յանձնէ, այն որուն յանձնուած է զրաւականը, թող անեղծ վերադառնէ զայն» :
(Թարդմ. Քաղիմիրաբի)

մարդարէներուն : Կը ան, անսնց մը ջիւ ո և է տարրերութիւն չենք դներ . Տէր, մինք խօսքէ լսեցինք և հնաւ զանգեցանք . քու ներողամտութիւնդ կը հացյենք . յարութեան օրը ամենքս ալ քեզի պիտի զանք :

286. Ասաւծած ոչ մէկն պիտի պահանջէ իր կարուգութենէն վեր բան մը : Ամէն ոք իրեն ի նպաստ պիտի ունենայ իր բարի գործերը, և ընդդէմ իրեն՝ զէ գործերը : Տէր, մի՛ պատմեր մեզ մոռացութեամբ (կամ սխալմամբ) զործուած յանցոնցներու համար : Մեր վրայ մի՛ դներ ան բերը զոր մեր հայրերը⁽¹⁾ կրեցին . մեր ոյժէն վեր բեռ մի՛ աար մեզի . քու ծառաներուգ համար ներողամտութիւն և զթութիւն ցոյց տուր . զթա՛ մեր վրայ . դան մեր Տէրն ես : Անհաւատ աղքերուն զէմ յազմող հանդիսացուը զմեղ :

(1) «Մեղմէ առաջ ապրողները» (Քաղիմիրաբի)

ՎԵՐՋԻ Առաջ Ապրողները

ԵԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — Քուրանի Քրանաերէն Թարգմանութեանց մէշ, Սավարիի կատարածէն ոչ նուազ յաչոլ, թէեւ աւելի ազատ, Թարգմանութիւն մըն է Քաղիմիրաբի կատարածը : Մենք, պահելով հանդերձ Սավարիի Թարգմանութեան ծեւերը, օգսակար համարեցինք ծանօթագրել խմասի այն բռլու տարբերութիւնները զրս գտանք Քաղիմիրաբի Թարգմանութեան նես բազգատելով և եսկ Բ. զլուին հաւուածներուն մէշ փակազծով գրուած նախադասութիւնները՝ Սավարիի Թարգմանութեան մէշ բնորովին պակածներն են : Կային նաեւ մէկ բանի հաւուածներ, (Թիւ 9, 22, 25, 42, 73, 150) որոնց իմաստը կիմնավիճ տարբեր ըլլալով երկու Թարգմանութեանց մէշ, հարկադրուած ենք նոս զնել նաեւ Քաղիմիրաբի Թարգմանութիւնը՝ բաղադրութեան համար Սավարիի Թարգմանութեան նետ :

9. Անոնց սրտին մէջ հիւանդութիւն կայ (¹). Սառաւած պիտի մեծանէ այդ հիւանդութիւնը . զարժուրելի պատիճ մը վերապահուած է իրենց, սրովինաւեւ մարդարէնները ասախօսի աւել դրբն :

22. Բայց եթէ չընէք այդ բանը, և ապահովաբար չպիտի կրնաք ընել, վախցէք անհաւասներուն համար պատրաստուած կրակէն, կրակ՝ որան կեր պիտի ըլլան մարդիկ և քարերը (²) :

25. Անմաք որ կը խղեն Աստուծոյ հետ նախասպէս կրգուած գաշխքը, անմաք որ իրարմէ կը բամնեն ինչ որ Աստուծ հրամայած էր քով քովի պահել, անմաք որ երկրիս վրայ անկարգութիւններ կընեն, թշուառ պիտի ըլլան :

42. Ձեր օգնութեան կանչեցէք աղօթքը և համրերութիւնը . աղօթքը բնու մըն է, բայց ոչ խոնարհներուն համար :

73. Անոնց մէջէն, հասարակ մարդիկը չեն զիսեր Գիրքը (Հնդամատեանը) ոյլ միայն՝ սուա պատմութիւնները, և ասարամ գաղափարներ միայն ունին : Վայ աւնոնց՝ որ իրենց (առականարար) ձեռքերով գիրքը գրած ասենին կըսեն, աղորմենի շահ մը ըներու համար, ահաւասիկ Աստուծմէ եկած զիրքը : Վայ իրենց ձեռքով գըրսծին, և անկէ շահածին համար (³) :

150. Մենք ձեզ փորձութեան պիտի ենթարկենք երկեղով և անօթութեամբ, ձեր ինչքիրուն և ձեր մարդոց և ձեր հանձքին կորուստ պատճառելով : (Բայց գունը ով Մուհամմէտ) Ռւբախ լուրեր սուր անոնց որ համրերութեամբ կը սուկան :

(1) Այս բացատրութեամբ Մուհամմէտ Քուրանին մէջ միշտ Կ'ակնարկէ կեղծաւորները և թերահաւատները :

(2) Այսինքն՝ քարէ շնուռած կւուքերը :

(3) Մուհամմէտ ոյս խօսքերով՝ կը մեղադրէ Նէւաները, որ Հնդամատեանը կ'եղծանէին, որպէս զի կարենան ջնջել ոյն հատուածները որմնցնովն խաղուշակուած էր արար Մարդարէն առաքելութիւնը :

Գլուխ գ .

ԻՄՐԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ (¹)

Յանուն ողբամած եւ անիւշաչար Ասուծոյ .

1. Ա. Լ. Մ. (²) Կենդանի և յափանական Աստուծմէ զառ ուրիշ Աստուծած չկայ :

2. Անիկան քեզի զրկեց հշմորդութիւնը պարունակող Գիրքը, անկէ տուած զրկուածները հաստատելու համար : Նախասպէս երկինքէն իջեցոց Հնդամատեանը և Աւետարանը, սրգէս զի մարդոց առաջնորդ ըլլան : Անիկա զրկեց Քուրանը (³) :

3. Անմաք որ աստուծային կրօնքը ուրանան, ահաւասի չարչարանքներու պիտի ենթարկուին : Աստուծ հըզօր է և իր ձեռքին մէջ ունի վրէմինդրութիւնը :

4. Երկինքի և երկրի վրայ զանուած բաներէն ոչ մին իրմէ զարգանի կը մնայ . ան է որ իր ուզածին պէս զձեզ կը կազմէ ձեր մօրը արգանդին մէջ : Իրմէ ուրիշ Աստուծ չկայ : Հզօր և իմաստուն է անիկա :

5. Գիրքը ան զրկեց քեզի : Զայն կազմող սուներուն մէջ կան որ բացայաց պատճեններ են ու գործին :

(1) Կեմանի ընտանիք ըսեւով կը հասկցուի կամ ընտանիքը Մովսէսի և Ահարոնի՝ որդի իմրանի, և կամ ընտանիքը Ցիռուսի, որդի Մարփամի, որ իմրանի աղջիկն էր . իմրանի կինն է Անուա-

(2) Լլեթ, լոմ, միմ, խորհրդաւոր տառերը :

(3) Քաղիմի օքի կը թարգմանէ բառականօրէն « Որոշիչը » որ Քուրանին արուած տիտղոսներէն մին է, առ իմաստով որ Քուրանը կը ժառայէ որոշելու բարին չարէն :

հիմը կը կաղմեն (1)։ Կան ալ որ ազարանական վուստ-
բերութիւններ են։ Անոնք որ մոլորելու հակամէտ են,
փոխաբերութեանց յարելով հերձուած մը պիտի կազմնն,
երբ ուզեն զանոնք մեկնաբաննել (2)։ Բայց միայն Ասո-
ւած գիտէ անոր մեկնութիւնը։ Հասաւատ գիտութեան
տէր մարդիկ պիտի ըսեն։ մենք կը հաւասանք Քուրա-
նին։ Ինչ որ կը սրբունակէ անիկա, Աստուծմէ կուգայ։
Խմառունները այսպէս կը սեն (3)։

6. Տէր, թոյլ մի տար որ մեր սիրաերը ճշմարտու-
թենէ հեռանան, անուստ մը զմեզ առաջնորդելէ եաք.
Գյութեանդ գանձերը բայց մեր առջեւ։ դուն առասա-
ձեռնութեան մարդնացումն եռ (4)։

7. Տէր, դուն մարդկացին ազգը օր մը պիտի հա-
ւաքես ատեանիդ առջեւ։ ոյս մասին բնաւ կասկած չկայ.
որովհետեւ դուն ըստ չես զրժեր խստումներդ։

8. Անհաւասանները իրենց հարստութեամբ և աղոցմով
ու է առաւելութիւն չափափ անենան Աստուծոյ առջեւ.
անոնք բոցերուն զո՞ս պիտի ըլլան։

9. Նման Փարաւանի ընսանիքն և անոր նախանայ-
րերուն, անոնք սոււ հոչակեցին մեր վարդապետու-
թիւնը։ Աստուծ զանոնք յանկարծակիի բերաւ ամբա-
րշառութեան մէջ (5) և անիկա ահաւոր է իր պատիմնե-
րուն մէջ։

10. Բաէ՛ անհաւասաններուն։ քիչ ատենէն պիտի յաղ-
թուիք և զեհենին մէջ պիտի հաւաքուիք, չարչարանինե-
րու բնակալայրը։

(1) « Դիբին մայրն է » (Թարգմանիակիրաքի)

(2) « Անկարգութեան և մեկնութեան փափոքով » (Թարգմ. Քաղիմիրաքի)

(3) « Իմացականութեամբ օժառուած մարդիկը միայն կը խորհինա

(4) « Դուն գերտաղյն բաշխիչն ես »

(5) « Մեղքի մէջ » (Թարգմ. Քաղիմիրաքի)

11. Երկու բանակիներուն բաղիսումը միթէ ձեղի հա-
մար նշան մը երեւան չի բերա՞ւ։ այդ բանակներէն մին
հաւատքի համար կը կուտէր, և թուով միւսին կէմն էր,
բայց անհաւասաններուն բանակը կարծեց թէ հաւասար ուժ
ունի։ Աստուծ իր օգնութիւնը կ'ընծայէ անմոց որ հա-
ճոյ են իրեն։ Այս գէպքը ազգարարութիւն մըն է անմոց
համար որ կը տեսնեն։

12. Հաճոյքի սէրը կը շացնէ մահկանացուները։
կիները, տղաքը, հարստութիւնները, չքեղ ձիերը (1),
հօտերը, դաշտերը իրենց բուռն փափաքները կ'արթնցը-
նեն։ բայց ասոնք ախարհային կեանքի վայելքներն են։
ապաստանարանը, զոր Աստուծ կը սրտրաստէ, շատ
աւելի հաճելի է։

13. Բոէ՛ բարեսպաշտներուն կրնա՞մ իմացնել բան
մը որ լսւագոյն ըլլայ, անոնք իրենց Տիրոջ քով պիտի
գանեն պարտէզներ զորս կ'ոտոգեն դետերը, և որ պի-
տի ասպրին յաւիտենապէս։ պիտի գոնեն անարատ կիներ
և աստուծացին բարեհաճութիւն։ Աստուծ բայց աչքով
կը նայի իր ծառաններուն։

14. Աս պիտի ըլլայ ճակասապիրը անմոց որ կը սեն։
Տէր, մնիք հաւասացինք քեզի, մեր մեղքերուն թո-
գութիւն տուր և կրակի պատիմէն ազատ մեղ։

15. Եւ անմոց՝ որ եղած են համբերաստար, ճշմար-
տափսու, բարեպաշտ, բարերար, և որոնք աստուծացին
զութը կը հայցեն ամէն առառւ, արշալոյսին։

16. Յաւիտենականը ինքն խակ վիայեց ինքզինքին,
երբ ըստաւ։ ինձմէ զատ ուրիշ Աստուծ չի կայ։ Այս

(1) Քաղիմիրաքի կը թարգմանէ այսպէս։ Ամանուոր նշաններ
կրող ձիերը» այսնկըն այն ընտրեալ ձիերը զորս ինամքով կը պահէն
և թիւ մը կը գնեն վրան։

հրեսանկերը և մարդիկը որոնք զիտութեան և ձշմարտութեան տէր են, կրինեցին. հզօր և խմաստուն Աստուծմէ դաս ուրիշ Աստուած չի կայ:

17. Աստուծոյ կրօնքը խալամութիւնն է⁽¹⁾. անոնք որ ընդունեցին նուիրական մատեանները, այն առեն միայն պատականեցան երբ՝ անոնց սրարունակութեան տեղեկացան⁽²⁾: Նախանձը կը թունաւորէր զանոնք, բայց այն որ պիտի մերժէ հաւատալ Աստուծոյ նշաններուն, փորձալ պիտի հասասատէ թէ՝ ան որքան ձշգրիտ է⁽³⁾ իր վճիռներուն մէջ:

18. Անոնց, որ քեզի հետ պիտի վիճարանին, ըսէ. ինքզիքս Աստուծոյ յանձնած եմ, անոնք որ իմ հաւատաքիս կը հստեւին ինծի պէս կ'ընեն:

19. Ըսէ անոնց՝ որոնք նուիրական մատեանները ընդունած են, նաև կայրերուն⁽⁴⁾. ընդպիկեցէք խալամութիւնը⁽⁵⁾ և պիտի լուսաւորուիք. եթէ չի հստանողին, դան միայն պիտի քարոզես անոնց. Աստուած դիտէ որոշել իր ծասանները:

20. Իմաց առւր անոնց՝ որ կ'ուրանան ձշմարիտ հաւատքը, որ անիրաւ տեղը կը թափեն արփանը մարգարէներուն և ձշմարտութիւնը քարոզողներուն, թէ՝ չորչամնքներու որս պիտի ըլլանի:

(1) «Խլամութիւն» այստեղ կը նշանակէ «Աստուծոյ կամքին ապաւինիլ»: ձեւալէտանին կ'ըսէ թէ ըստ մահմէտականներուն, այն կրօնքը զոր բոլոր մարգարէները ընդունեցին երկնքէն, իսլամութիւնն է, և չիմուած է միակ Աստուծոյ գաղափարին վրայ:

(2) Այսինքն, գիտութիւնը կամ յոյսանութիւնը վիճարանութիւններ յասաշ բերաւ:

(3) «Արգադ. է» (Թարգմ. Քաղիմիրաբի)

(4) Քաղիմիրաբի կը թարգմանէ «տգէտներուն». Մուհամմէտ Կ'ալիսարկէ կուապաշտ Սրաբներուն:

(5) «Ինքինքնիդ Աստուծոյ յանձնեցէք» (Թարգմ. Քաղիմիրաբի)

21. Անոնք այս աշխարհին և հանգերձեալին մէջ իրենց գործերուն արժանիքը կրօնցուցին. այլեւս ակընկալելիք պաշտպանութիւն մը չունին:

22. Ուշադրութիւն չըրի՞ր Հրէաներուն որ Աստուծոյ Գրիգրին զիմնեցին իրենց անհամայնութիւնները դատերու համար. իրենցմէ մաս մը մերժեց հաւատալ և մուլութեան մէջ ինկաւ:

23. Անոնք ըսին. գմողքի կրակին պիտի ենթարկունք որոշ թուով օրեր միայն⁽¹⁾: Անոնք իրենց հարած սուտին զոհ պիտի երթան (2):

24. Ի՞նչ պիտի ըլլայ իրենց վիճակը երբ վերջին դատաստանի օրը հաւաքենք զիրենք. այդ օրը, որուն մասին չէ կարելի կասկածիլ, ամէն մարդ իր գործերուն վոխարէնը պիտի ստանայ. ոչ ոքի դէմ անիրաւութիւն չպիտի ըլլայ:

25. Ըսէ. Ո՞վ Աստուած, զիրագոյն թագաւոր, դռն ըստ կամս կուտաս և կ'անես թագերը⁽³⁾, ուզածդ պիտի բարձրացնես և ուզածդ պիտի խոնարհեցնես: Բարիքը ձեռքերուդ մէջն է, (որովհետեւ) զուն Ամենակարողն ես:

26. Դուն զիշերը ցորեկուան կը փոխես, և ցորեկը զիշերուան. դուն մահուան ծոցէն կեանք կը ստեղծես, և

(1) Երկու շնացող Հրէաներ Մուհամմէտի առջեւ տարուեցան գտատուելու համար. անիկա վճռեց որ յանցուորները քարկոծուեին, բայց անոնք վճիռը մերժեցին. ոյն առեն զնդամատեանը բերին և տեսնուեցան որ Մուհամմէտի սուած վճիռը հոն դրուած է. առոր վրայ քարկոծուեցան շնացողները:

(2) Հրէաները կը հաւատասոյին թէ՝ միոյն 40 օր պիտի մաս գժողքին մէջ, այսինքն այնքան օր որ սոկէ հորթը պաշտեցին:

(3) «Իրենց սուտերով չեն տեսներ իրենց հաւատքը» (Թարգմ. Քաղիմիրաբի)

(4) «Իշխանութիւնը»

կեանքի ծոցէն՝ մահ, գուն քու անս ոհման գանձերովդ կը գեղուս⁽¹⁾ քեզի հաճոյ թուղթները:

27. Անձաւատներէն ձեզի պաշտպան մի՛ ընտրէք բնաւ, եթէ վախի տակ հարկազրուած չէք. (ասոր հաւկառակ գործողները Աստուծմէ ոչինչ յուսուլու են;) Աստուծոյ զայրացմը թող ձեզ դողբացնէ, (որովհետեւ) իւրեն պիտի վերադառնաք: Բոէ անոնց. ձեր սրտերուն մէջ եղածը ծածկէք թէ յայտնէք, Աստուծած պիտի զիտնալ: Աստուծոծ զիտէ թէ ինչ կայ երկինքի մէջ և երկրի վրայ, որովհետեւ ոչ մէկ բան կը սահմանափակէ իր գօրութիւնը:

28. Այն օրը որ մէկը իր աչքերուն առջեւ ունենայ իր բարի և յոտի գործերուն պատկերը, այն օրը՝ պիտի փափաքի որ անհուն անջրպես մը բաժնէ զինքը իր յոտի գործերէն: Տէրը ձեզ կ'ազգաբարէ ստակալ իր բարկութինէն, որովհետեւ իր ծառաներուն կը նայի հաշտ աչքով մը:

29. Բոէ անոնց. եթէ Աստուծած կը սիրէք, ինձի հետ տեւեցէք, ան ձեզ պիտի սիրէ, ձեր մերքերուն թողարթիւն պիտի տայ. գթած և անցիշաչար է ան: Հնազանդեցէք Աստուծոյ և իր Մարդարէն: մի՛ հնասնաք իրմէ, ան կ'ատէ անհնազանդները:

30. Աստուծած բոլոր էակներուն մէջէն (նախապատուութեամբ) ընտրեց Ագամը և Նոյը, Աբրահամի և Իմրանի ընտանիքը: Այս ընտանիքները մէկը միւսէն ուերած են: Աստուծած գիտէ և կը լոէ (ամէն բան:)

31. (Յիշէ այն օրը երբ) Խմբանի կինը⁽²⁾ սա աղօթքը ուղղեց երկինք. Տէր, իմ արդանողիս պատուզը քեզի

(1) «Դուն անունդ կը բաշիես» (Թարգմ. Քաղեմբրեքի)

(2) Այսինքն Աննա, Մարիամի մայրը:

նուիրեցի, (ամբողջովին քեզի կը պատկանի ան.) բարութեամբ ընդունէ զայն, որովհետեւ ամէն բան զիտես և կը լսե գուն: Երբ զաւակը ծնաւ, ամիկա յարեց. Տէր, աղջիկ մը ծնայ, — Աստուծած զիտէր թէ ինչ ծնաւ անիկա, մասնաւոր նշաններ իրա մէկ կը զանազաննեն երկու սեռերը⁽¹⁾ — և զայն Մարիամ անտանեցի. զայն քու պաշտպանութեամով տակ կը զնիմ, զայն և իր սերունդը, որպէս զի գուն պահպանես Սատանային⁽²⁾ խարէութիւններէն:

32. Տէրը հաճութեամբ ընդունեց ընծան. Մարիամին ծնցընել տուաւ թանկապին էակ մը: Զաքարիա զայն (աղօն) իր պաշտպանութեան տակ տուաւ. ամէն անդամ որ Մարիամին այցելութեան կ'երթար, իր առանձին խուցն մէջ կը անմնէր որ անոր քով կերակուր կայ⁽³⁾: Ո՛վ Մարիամ, հարցուց անոր. այս մնանդը արկէ⁽⁴⁾ կուգաց քեզի: Երկնքի մէկ բարիքնէ, պատասխանեց Մարիամ, (որովհետեւ) անիկա առաստօրէն կը կերակրէ իր սիրածները, (և անոնց տուած կատրները չի հաշուեր):

33. (Այն ասուն) Զաքարիա սկսաւ աղօթել և գոչել, Տէր, քու առաստածեռնութեանդ գանձերը բա՛ց իմ առջեւս. օրհնեալ զաւակ մը տուր ինձի, որովհետեւ զուն

(1) «Մանչ աղջկան պէս չէ» (Թարգմ. Քաղեմբրեքի)

(2) «Իմրէկոծաւած Սատանային» կը թարգմանէ Քաղեմբրեքի և կը յարէ թէ Սատանային միշտ այս ածականը տրուած է, ուրովչետեւ, ըստ աւանդութեան, Աբրահամ օր մը քարով յարձակեցաւ Սատանային վրայ որ զինքը փորձել կ'ու զէր:

(3) Զաքարիա Մարիամին քովէն հեռացած միջոցին կը փակէր տաճարին եօթը դռները, ոյսու հանդերձ ամէն մէկ այցելութեան կը գտնէր որ ձմեռը ամսանորին պատուղներ և ամնուը ձմեռնային պատուղներ դրուած են չեն:

մար (քեզի զիմովներուն) լսողձանքներուն կ'ունինդրես։ Հրեշտակը կանչեց զայն երբ կ'աղօթէր սրբարանին մէջ։

34. Հրեշտակը ըստ անոր. Բարձրեալը քեզի կը յայսնէ Եանեայի (Յովհաննէս) ծնունդը. անիկա Աստուծոյ Բանին ճշմարտութիւնը պիտի հաստատէ. պիտի ըլլայ Եշխան, անրիծ, արդարներան գասէն մարդարէ մը։

35. Զաքարիւ պատասխանեց. այդ տղան ուսկից պիտի գայ ինծի. տարիքս եկած լեցած է, և կինս ամուլ է։ Հրեշտակը պատասխանեց անոր. Աստուծ կ'ընէ ինչ որ իրեն համոյ է։

36. Զաքարիա յարեց. նշան մը տուր որ քու խոստումիդ զրաւականը ըլլայ։ Հրեշտակը պատասխանեց. երեք որ համբ պիտի մնաս (¹). նշանը այդ պիտի ըլլայ։ Յիշէ Տէրը, և գիշեր ցերեկ իր գովեսալ փառաբանէ։

37. Հրեշտակը (²) ըստ Մարիամին. Աստուծ քեզ ընտրեց. անիկա քեզ մաքրագործեց. դուն (տիեզերքի) բոլոր կիներուն մէջ ընտրեալն են։

38. (Ո՞ւ Մարիամ) Տիրոջը նուիրէ ինքվնաքդ. պաշտէ զայն, ծնրադրէ իր առջեւ անոնց հետ որ կը ծնրադրէն։

39. Մենք քեզի կը յայանենք այս զաղանիքները։ Գուն անոնց հետ չէիր, երբ անոնք կը նետէին նուիրական գուտաղանը։ Երենցմէ ո՞վ Մարիամին խնաճք պիտի տանէր. դուն իրենց վիճականութեանց ներկայ չէիր բնաւ (³)։

(1) «Երեք որ նշաններով պիտի խօսիս» (Յարգմ. Քաղիմիքը)

(2) «Հրեշտակները» կ'ըսէ Քաղիմիքը։

(3) Քահանաները կը զինարանէին թէ՝ իրենց մէջէն ո՞վ ինտեք պիտի տանի Մարիամին. վերջապէս որոշեցին բաղդին դիմել. քը-անեւհինդ հոգի էին, ամենքն ալ եղէքներ նետեցն Յորդանանի ջուրերուն մէջ, եղէքներուն վրոյ կոյին Օրէնքէն քաղուած տրձաւ Նոտրութիւններ. միտին Զաքարիայի եղէքը ջուրին վրոյ մացած ըլլալով, Մարիամին հոդ տանիլը անոր վիճակեցաւ։

40. Հրեշտակը ըստ Մարիամին. Աստուծ քեզ կը յայսնէ իր Բանը. անոր անունը պիտի ըլլայ Յիսուս, Մարիան, Մարիամի որդի. մեծ՝ այս աշխարհին և հանգերձեալին մէջ, և Աստուծոյ մտերիմը։

41. Անիկա իր խօսքը պիտի լսեցնէ մարգոց, օրորոցի երեխային մինչեւ ծերերուն, և արդարներուն գաւաչն պիտի ըլլայ։

42. Տէր, յարեց Մարիամ, ես ի՞նչպէս զաւակ պիտի ունենամ. ոչ մէկ մարդ ինծի չէ մերձեցած։ Հրեշտակը պատասխանեց. այսպէս է որ Աստուծ ըստ կամս կը կազմէ արարածները, եթէ ուզէ որ բան մը գոյութիւն առնէ, կ'ըսէ՝ եղիցի՛, և կ'ըլլայ։

43. Աստուծ պիտի սորվեցնէ անոր Գիրքը և իմաստութիւնը, Հնգամատեանը և Աւետարանը, (Իսրայէլի զաւակներուն մօտ Յիսուս իր առաքեալը պիտի ըլլայ.) պիտի ըսէ անոնց. աստուծացին նշանները իմ առաքելութիւնս պիտի վկայեն. հողէն՝ թռչունի մը դէմքը պիտի կագմեմ. պիտի փէմ անոր վրայ, և Աստուծոյ կամքովը անիկա անմիջապէս կեանք պիտի տանէ. ի ծնէ կրցերը և բորսաները պիտի բժշկեմ, մեռեալները պիտի յարուցանեմ Աստուծոյ թողարուութեամբ։ Ես ձեզի պիտի ըսեմ թէ ինչ կերած էք, և թէ ինչ սրանած էք ձեր տուներուն մէջ։ Բոլոր ասանք նշաններ պիտի ըլլան ձեզի համար եթէ հաւատացեալներ էք։

44. Ես կուզամ հաստատել Հնգամատեանը, զոր ըստացաք ինձմէ առաջ. ձեզի պիտի թոյլատրեմ օրէնքին այն մասը որ արգիլուոծ էր։ Աստուծ ինծի տուաւ հրաշք գործելու կարողութիւնը։ Երկնչեցէք իրմէ և հնագաննեցէք ինծի. ան՝ իմ ալ ձեր ալ Տէրն է. պաշտեցէք զինքը. փրկութեան ձամբան այդ է։

45. Երբ Յիսուս հասկցաւ Հրէաներուն խարերայոււթիւնը, գոչեց . ո՞վ պիտի ըլլայ իմ օգնականա, ասուուածալին կրօնքը տարածելու համար: Առաքեալները պատասխանեցին . մենք պիտի ըլլանք Աստուծոյ պաշտօնեաները . մենք եր հաւատանք իրեն, և դուք վկայ պիտի ըլլաք մեր հաւատքին:

46. Տէր, մենք կը հաւատանք Գիրքին զոր զրկեցիր . քու Մարդարէիդ կը հետեւինք . զմեղ արձանազրէ դասին մէջ անոնց՝ որ քեզ կը ճանչնան:

47. Հրէաները Յիսուսի հետ խարդախութեամբ վարուեցան . Աստուծած անոնց խարերայութիւնը ի գերեւ հանեց . անիկա խարդախներէն առելի հզօր է (1):

48. Աստուծած ըստաւ Յիսուսի . մահը քեզի պիտի զրկեմ և զեզել իմ մօսա պիտի բարձրացնեմ . դուն անհաստարիմներէն պիտի բաժնուի . քեզի հետեւողները աւելի վեր պիտի բարձրացուին քան անոնք որ անհաւատ կը մնան մինչեւ վերջին դասաստանին օրը: Դուք ամենքդ իմ ասեանիս առջեւ պիտի ելլէք ու ես պիտի դատեմ ձեր անհամաձայնութիւնները:

49. Անհաւատարիմները ահաւոր կերպով պիտի պատժեմ այս աշխարհին և հանդերձեալին մէջ . անոնք ոչ մէկ կողմէ օդնութիւն չափալ գտնեն:

50. Անոնք որ կը հաւատան և բարիք կը գործեն, Աստուծոյ ձեռքէն պիտի ստանան իրենց վարձատրութիւնը, որովհետեւ ան չի սիրեր չարերը:

51. Մենք քեզի կը յայտնենք այս ճշմարտութիւն-

(1) «Ոնտարակոյս Աստուծած առելի Ճարտար է» . Պարգմ. Քաղիմիրսքի

ները, որ քաղուած են մեր հրաշալիքներէն և իմաստունին յիշատակէն (1):

52. Բարձրնալին համար Յիսուս մարդ մըն է Աղամին պէս: Աստուծած Աղամը ստեղծեց հողէն . անիկա ըստաւ՝ եղիցի՛, և եղաւ:

53. Այս խօսքերը երկինքէն եկած են . չըլլայ որ կանկածիս անոնց վրա:

54. Անոնք որ այս մասին պիտի վիճաբանին քեզի հետ, քու ընդունած (կատարեալ) ծանօթութիւններէդ վերջ, պատասխանէ իրենց . եկէք, կանչենք մեր (և ձեր) աղաքը, մեր (և ձեր) կիները, (ամենքս ալ զանք) և աւզօթենք, և ստախօններուն վրայ Աստուծոյ անէծքը հրաւիրենք:

55. Ինչ որ քարոզեցի ձեզի ճշմարտութիւնն իսկ է: Աստուծած մէկ է . հզօր և իմաստուն է անիկա:

56. Որոնք որ ամենազանդ ըլլան, Բարձրեալը կը ճանչնայ նենդամները:

57. Հրէաներուն և Քրիստոնեաներուն ըսէ . (Եկէք սա մէկ խօսքը մտիկ ըրէք) մեր միջեւ եղած ինոդիրները վերջացնենք . միակ Աստուծը պաշտենք . ոչ մէկ բան անոր հաւատար ընծայենք . թող ձեզմէ ոչ ոք իրմէ զատ Տէր չունենայ: Եթէ մերժեն հասպանդիլ, ըսէ իրենց . դուք իսկ կը վկացէք թէ մենք հաւատացեալներ ենք (2):

58. Ո՞վ գուք, որ սուրբ գիրքերը ընդունած էք, ինչո՞ւ համար կը վիճաբանիք Արքանամի մասին . Հնդամատեանը և Աւետարանը իրմէ վերջ միայն եկած են . այս բանը չպիտի՝ հասկնաք բնաւ:

(1) «Աչա այն պատուէները և իմաստուն աղդաբարութիւնները որ քեզի Կ'ընենք:» (Պարգմ. Քաղիմիրսքի)

(2) «Թէ մենք ինքնիքնիս ամբողջովին Աստուծոյ կամքին կը յանձնենք.» (Պարգմ. Քաղիմիրսքի)

59. Դուք որ կը վիճաբանիք այն բաներուն վրայ որոնց մասին լուսաբանուած էք, ինչո՞ւ կը վիճաբանիք այն բաներուն վրայ որոնց մասին ոչ մեկ ծանօթութիւն չ'ունիք: Աստուած դիմուէ, բայց դուք չէք գիտեր:

60. Սբրահմամ ո՛չ հրէայ էր և ո՛չ ալ քրիստոնեայ. անիկա ուղղափառ էր (¹), և Աստուծոյ կամքին ապաւմած էր:

61. Անոնք որ Սբրահմամի կրօնքը կը դաւանին, անոր հետքերուն մօտէն կը հետեւին. այսպէս կ'ընկն Մարգարէն և իր հաւատացեալները. Աստուած հաւատացեալներուն պեան է (²):

62. Սուրբ գիրքերը ընդունողներուն մէջ կան մարդիկ որ կը փափաքին մոլորեցնել զձեղ. բայց միայն իրենք կը մոլորին ու չեն զգար թէ կը մոլորին:

63. Ո՛վ դուք, որ Օրէնքի Գիրքը ընդունեցիք, ինչո՞ւ չէք հաւատաք Աստուծոյ նշաններուն, քանի որ անոնց ականատես եղած էք:

64. Ո՛վ դուք, որ Օրէնքի Գիրքը ընդունած էք, ինչո՞ւ կը ծածկէք ճշմարտութիւնը սուտի վերարկուալ. ինչո՞ւ կը ծածկէք զայն, քանի որ կը ճանչնաք:

65. Սուրբ գիրքերը ընդունողներուն մէջէն ոմանքը ըստ են. առաւօսուն հաւատացեալներուն զրկուած Գիրքին հաւատացէք, իսկ իրիկունը մի՛ հաւատաք, որպէս զի զանոնք անհաւատութեան տանիք (³):

66. Միայն ձեր կրօնքին հետեւողներուն հաւատ ընծացեցէք: Հուէ անոնց. ճշմարիտ լոյսը երկինքէն կուգայ.

(1) « Աստուածապաշտ էր . » (Թարգմ. Քաղիմիրսքի)

(2) « Պաշտպանն է . » . » . »

(3) « Այս եղանակով անոնք իրենց կրօնքը պիտի թողուն . » (Թարգմ. Քաղիմիրսքի)

Խւրաքանչիւր ոք այդ լոյսէն ստացած է իր բաժինը ձեզ նման: Յաւիտենականին առջեւ պիտի վիճաբանիքն միթէ անոնք ձեզի հետ: Հուէ անոնց. գանձերը իր ձեռքին մէջն են, կը բաշխէ որոնց որ ուզէ: Իր զիտութիւնը հաւասար է իր անսահմանութեան:

67. Անիկա իր զիտութիւնը պիտի չնորհէ անոր որ ուզէ: Իր առատածեռնութիւնը անսահման է:

68. Հրէաներ կան (¹) որոնց կրնաս վատահիլ մէկ քանքար. այդ գումարը հաւատարմօրէն քեզի պիտի վերաբարձնեն անոնք: Ուրիշներ ալ կան որոնց ձեռքէն զիտուրաւ միայն պիտի կրնացիր խել իրենց փոխ տուած մէկ գենարդ (²):

69. (Անոնք այսպէս կ'ընկն), որովհետեւ կ'ըսեն, մինք անհաւատաներուն հետ արդարութեամբ վարուելու սիկուած չենք: Անոնք երկինքի երեսին կը ստեն, և գիտակցարար:

70. Ան որ Աստուծոյ հետ իր ուխտը կը պահէ և բարեպաշտ է, պիտի գիտնայ որ Աստուծոծ կը սիրէ իրմէ վախցողները:

71. Անոնք որ Աստուծոյ հետ կնքած ուխտերնուն և իրենց երգումներուն փոխարէն բան մը կը ստանան, ուշնչ շահու մը փոխարէն կը կրոսնցնեն այն բաժինը որ իրենց անհմանուած էր հանդերձեալ կեանքին մէջ: Յարութեան օրը Աստուած անոնց չպիտի խօսի բնաւ. իր նայուածքները անոնց վրայ չպիտի խոնարհեցնէ բնաւ. թողութիւն չպիտի չնորհէ անոնց, չարչարանքներու որալ պիտի ըլլան անոնք:

(1) « Սուրբ գիրքերը ընդունողներուն մէջ մարդիկ կան » (Թարգմ. Քաղիմիրսքի)

(2) Մէկ գենարդ մէկ ոսկե էր . իսկ քանիքարը՝ չաղաք ոսկի:

72. Իրենց մէջէն ումանք (իրենց լեզուներով) սուրբ գիրքերուն իմաստը կ'եղծաննն, և կ'ուզեն ձեզի այնպէս կարծեցնել թէ ինչ որ կ'ըսեն իրօք գոյութիւն ունի սուրբ գիրքերուն մէջ: Անոնք կ'ըսեն ձեզի թէ Աստուծոյ խօսքըն է այն, մինչդեռ բնա՛ւ Աստուծոյ խօսքը չէ. Աստուծոյ մասին սուր կը խօսին, և գիտակցարար:

73. Անիկա որուն Աստուծ տուաւ Գիրքը և իմաստութիւնը և մարգարէութեան շնորհը, պէտք չէ որ ըսէ մարգոց, իմ ծառաներս եղէք, այլ պէտք է ըսէ. Աստուծոյ ծառաները եղէք, քանի որ կ'ուսումնասիրէք Գիրքին վարդապետութիւնը և չանք կ'ընէք հասկնալու գայն:

74. Աստուծ ձեզի չի հրամայեր պաշտել⁽¹⁾ հրեշտակները և մարգարէները, միթէ անիկա կրնա՞յ ամրաբըստութեան մղել զենք որ արդէն հաւասացեալ էք:

75. Երբ Ամենակարտողը ընդունեց մարգարէներուն ուխար, ըստ անոնց⁽²⁾. ահա թէ ինչ գիրք և ինչ իմաստութիւն բերի ձեզի, երկինքէն մարգարէ մը պիտի գոյ այս ճշմարտութիւնը հաստատելու համար. հաւասացեք իրեն, և օգնեցէք ձեր բոլոր կարողութեամբը: Աստուծ յարեց, այս պայմանը յարգելու պատրա՞ստ էք իմ գաշինքս այս դնով կ'ընդունիք: Մարգարէները պատասխանեցին. անրմանարարելի կերպով պիտի պահենք այդ

(1) «Տէր անուանել» (թարգմ. Փազիմիրսի)

(2) Երբ Աստուծ Ոինա լեռան գրոյ Մովեսի տուաւ Օրէնքին տախտակները, (76րդ էջին ծանօթութեան մէջ սխալմամբ ըստուած է Օրէնքի սեղանները) իր առջեւ բերաւ բոլոր մարգարէներուն հոգիները, ու անոնց հետ գաշինք կնքեց անոնք յանձն տիակ Աստուծ մը պաշտել, և Աստուծ անոնց խօստացաւ իր օգնութիւնը տալ միայն այս պայմանով (Օրալ մեկնիչներ):

դաշինքը: Տէրը յարեց. ուրեմն վկայ եղէք, և ես ալ վկայ եմ ձեզի նման:

76. Եյս գաշնազրութենէն վերջ ով որ անհաւատասարիմ գտնուի, նենդամիաններուն կարզը պիտի դասուի:

77. Աստուծոյ կրօնքէն դուրս ուրիշ կրօնք մը ունենալ կը փափաքին, (մինչդեռ) ամէն ինչ որ կը գտնուի երկինքին մէջ ու երկրի վրայ, իրեն կը հսազանդի կամաւորապէս կամ հարկազրեալ. դուք ամենքդ իր առջեւ պիտի ելլեք: Էսէ. մենք կը հաւասանք Աստուծոյ, կը հաւասանք այն բանին որ զրկեց մեզի, ինչ որ յայտնեց Սրբահամբին, իսամյէլին, իսահակին, Յակոբին և տասներկու ցեղերուն. մենք կը հաւասանք այն սուրբ գիրքերուն, զորս Մովսէս, Յիսուս և մարգարէները երկինքէն ընդունեցին. անոնց միջեւ ո եւ է տարբերութիւն չենք գներ. և մենք Աստուծոյ կամքին կ'ապաւինինք. (մենք իսլամ ենք:)

78. Ով որ իսլամութիւնէն տարբեր կրօնք մը կը դաւանի, ո եւ է օգուտ չպիտի քաղէ, և (հանդերձեալին մէջ) աստուծամերժներուն կարզը պիտի դասուի:

79. Աստուծ ինչպէս ուղիղ ճամրուն մէջ պիտի բերէք զանոնք՝ որ անզամ մը հաւասացեալ ըլլալէ ետք և Մարգարէին ճշմարտութեան ու աստուծային պատգամներուն վկայ ըլլալէ ետք, կրկին անհաւատութեան կը դառնան. Աստուծ նենդամիանները չ'առաջնորդեր ընաւ:

80. Անոնց վարձքը Աստուծոյ, հրեշտակներուն և բոլոր մարգոց անէծքը պիտի ըլլայ:

81. Անոնք այդ անէծքներով յաւիտենապէս ծածկուած պիտի ըլլան. իրենց տառապանքը չպիտի մնդմանայ բնաւ. և Աստուծ միակ ակնարկ մը իսկ չպիտի նետէ անոնց վրայ:

82. Իսկ անոնք որ զղջումով լաւ ճամբու մէջ պիտի մոնեն, Տիրոջը ներողամառութիւնը պիտի ստանան:

83. Անոնք որ հաւատուրաց կը դառնան և իրենց անարդար գործերը չարունակ կը շատցնեն, բնաւ թողութիւն չպիտի ստանան: Պարսաւանքը իրենց բաժինը պիտի ըլլայ (⁽¹⁾):

84. Անոնք որ անհաւատ են և անհաւատութեան մէջ կը մոռնին, չպիտի աղասին տանջանքներէն եթէ ունենան իսկ այնքան ոսկի որ երկիրը կրնայ պարունակել: անոնց համար այլեւս յոյս չիկայ:

85. Միայն այն առեն բարեպաշտ պիտի ըլլաք, երբ ողորմութիւն տաք այն բանը որ ամենէն առելի սիրելի է ձեզի: Ինչ որ կուտաք Աստուած կը գիտնայ:

86. Խորայէի զաւակներուն ամէն տեսակ անունդ թողարարուած էր ի բաց առեալ այն՝ զոր Յակոբ ինքզինքն արգիլեց Հնդամատեանին տրուելէն առաջ (⁽²⁾): Բոչ, բերէք Հնդամատեանը և կարգացէք, եթէ ճիշդ կը խօսիք:

87. Այն ամբարիչար որ այս ճշմարտութիւնները կ'ուրանայ, երկինքի առջեւ կը ստէ (⁽³⁾):

88. Բոչ անոնց. Աստուած գերազոյն ճշմարտութիւնն է, ուրեմն հետեւեցէք կրօնքին Աբրահամի, որ միակ Աստուածը պաշտեց, և կուտաշտութեամբ չ'աղարտուեցաւ:

89. Առաջին տաճարը (զոր մարդիկ կանփնեցին) Աս-

(1) «Անոնք մօլորութեան մէջ պիտի մնան» (Քաղիմիրսքի)

(2) Յակոբ հիւանդացաւ և ուղտի միս սկսաւ չ'ուտել, թէեւ շատ կը սիրէր:

(3) «Ով որ Աստութիւն մասին ուռւեր կը դարձնէ, անարդար ներուն հետ պիտի գասուի» (Թարգմ. Քաղիմիրսքի)

տուծոյ նուիրուած, Մէքքէի տաճարն է, օրհնեալ տաճարը, ուր կը փայլի ճշմարիս լոյսը:

90. Այս նուիրական վայրը հրաշքներով լեցուն է. հոն է որ կանգ առաւ Աբրահամ (⁽¹⁾) ով որ մանէ այդ տաճարին շրջապատին մէջ ամէն վտանգէ զերծ կ'ըլլայ. բոլոր անոնք որ կրնան ուխտի երթուլ, պարտաւոր են հոն երթալ և Յաւիտենականին պաշտամունք մասուցանել:

91. Թող անհաւատը գիտնայ որ Ամենակարողը պէտք չ'ունի մահկանացուներու խունկին (⁽²⁾):

92. Բոչ անոնց որ սուրբ գերքերը ընդունած են. ինչո՞ւ կը մերժէք հաւատալ Աստութիւն նշաններուն. աշխան ձեր գործերուն վկան է:

93. (Բոչ անոնց. ով դուք որ սուրբ գերքերը ընդունած էք) ինչո՞ւ համար հաւատացեալները գրկութեան ճամբէն կը մոլորեցնէք. դուք կը փափաքիք ճամբան խոստրեցնէլ, և սակայն գիտէք դուք. Աստուած անուշաղիր աչքերով չէ որ կը դիտէ ձեր արարքները:

94. Ո՞վ հաւատացեալներ, եթէ Հրէաներուն կրօնքին հետեւիք (⁽³⁾). ձեր հաւատոքը պիտի խլեն և զձեզ անհաւատ պիտի գարձնեն:

(1) ձեւալէտափն մեկնից կ'ըսէ թէ՝ այն քարը որուն վրայ Աբրահամ կեցաւ Մէքքէի տաճարը շինած միջոցին, կը կրէ եր ուղբերուն հետքերը զորս ժամանակը չէ կրցեր ջանել: Մ. Սավարի Գահիրէի մէջ այցելեր է մղկիթ մը ուր ցարդ կը պահուի նմանօրինակ քար մը զոր ցոյց տուող պահապան հոճան կը հաւասար թէ Մուհամմէտի ուղին հետքերը կան վրան:

(2) «Դալով անհաւատներուն, ի՞նչ փոյթ, Աստութիւն համար ամենով ամեղերը կարեւորութիւն չ'ունի» (Թարգմ. Քաղիմիրսքի)

(3) «Եթէ սուրբ գերքերը ընդունողներէն ումանց հետեւիք» (Թարգմ. Քաղիմիրսքի)

95. Բայց դուք ինչպէս կընաք հաւասառութաց ըլլալ, մինչ երկնքի պատղամները ձեզի կը յայտնուին, ու մինչ դուք ձեր մէջն ունիք իր Մարդարէն. ով որ հաստատապէս կը յարի Տիրոջ, ուղիղ ճամբէն կընթանայ:

96. Ո՛վ հաւասացեաներ, վախցէք Աստուծմէ այնպէս՝ ինչպէս արժան է երկնչիլ իրմէ, և դուք հաւասացեալ պիտի մեռնիք⁽¹⁾:

97. Աստուծային կրօնքը ընդգրկեցէք իր բոլոր տարածութեամբը: Հերձուած մի՛ կազմէք բնաւ. յիշեցէք այն չնորհները, որնք երկինքէն թափեցան ձեր վրայ. դուք իրարու թշնամի էիք, անիկա ձեր սրտերուն մէջ ներդաշնակութիւն դրաւ. և իրարու հետ եղբայր եղաք, ուրեմն չնորհակալ եղէք իր բարութեանն համար:

98. Դուք կրակի վիճին եղերքն էիք, անիկա զձեղքաչեց աղասից հոնկէ: Այս կրապավ է որ անիկա իր գութը կը ցայտեցնէ ձեր վրայ⁽²⁾, որպէս զի փրկութեան ճամբէն ընթանաք,

99. Եւ որպէս զի դուք նուիրական կապերով զօդուած ըլլաք իրարու և մարդիկը իրամութեան հրախրէք⁽³⁾ որպէս զի արդարութիւնը հրամայէք (բարի գործերը թոլլատրելով) և յոտի գործերը արդիկելով) անոնք որ այսպէս վարուին, երանութեան մէջ պիտի ըլլայ:

100. Բնաւ մի՛ նմանիք անոնց, որ ճշմարիտ լոյսը տեսնելէ եաք հերձուածներ կազմեցին և վիճաբանութեանց մէջ ինկան. այսպիսիներուն բաժինը տանչանքը պիտի ըլլայ:

(1) «Եւ մի՛ մեռնիք առանց ինքնինքնիդ Աստուծոյ յանձնելու»
(Թարգմ. Քաղիմիրսքի)

(2) «Իր նշանները ցաց կուտայ»

(3) «Բարի գործերու հրաւիրէք ուրիշները»

101. Օր մը (յարութեան օրը) մարգոց գէմքերը կա՛մ սեւ պիտի ըլլան և կա՞ ճառագայթարձակ⁽¹⁾ Աստուծ սեւերեաներուն պիտի ըսէ. դուք հաւասաքնիդ որացաք, բոցերուն զսէր եղէք, քանի որ հաւասաքնիդ կեցիք:

102. Ընդհակասակը, անոնք որոնց ճակատը չողարձակ պիտի ըլլայ, աստուծածային չորհներուն պիտի արժանանան և յաւիտենապէս պիտի վայերեն զանոնք:

103. Ասոնք են երկինքի պատղամները. քեզի կը յայտնենք զանոնք կատարեալ ճշմարտութեամբ. Աստուծած բնաւ չուզեր կորսնցնել իր արարածները⁽²⁾:

104. Երկինքի մէջ և երկրի վրայ գանուած ամէն բան իրեն կը պատկանի. ինքը կեղրոնն է, ուր պիտի միանայ ամէն ինչ:

105. Դուք ափեզերքին ամենէն սքամսչելի ժողովուրպըն էք. դուք կը թոյլատրէք ինչ որ բարի է, և կ'արգիլէք ոճիրը. դուք կը հաւասաք Աստուծոյ: Եթէ Հրէաները և Քրիստոնեաները⁽³⁾ ձեր հաւատքը ընդունէին, լաւագոյն վիճակ մը կ'ունենալին. անոնց մէջին մէկ քանիները կը հաւատան, բայց մեծ մասը նենդամիտ է:

106. Հրէաները⁽⁴⁾ անհշան վասաներ միայն կրնան պատճառել ձեզ. եթէ ձեզի գէմ կոխւ մղեն, շուտով կրնակին պիտի դարձնեն և ակնկալելիք օգնութիւն մը պիտի չ'ունենան:

107. Անոնց գլուխներուն վրայ կուտակուած նախատինքը արմէն տեղ պիտի հետեւի իրենց⁽⁵⁾. Աստուծոյ

(1) «Սպիտակ»

(Թարգմ. Քաղիմիրսքի)

(2) «Անոնց չարիք չի կոմենոր»

» »

(3) «Սուրբ գիրքերը ընդունողները»

» »

(4) «Անոնք»

» »

(5) «Ուր որ անոնք կանգ առնեն, նախատինքը վրանի մը պիտի ափամիտածուի անոնց գլուխին վրայ» (Թարգմ. Քաղիմիրսքի)

և (կամ) մարդոց հետ կնքուած դաշինք մը միայն կրնայ ապահովութեան մէջ դնել զամանք : Աստուած անոնց ճակատին վրայ զրոշմած է իր զայրոյթին կնիքը . աղքատութիւնը (վրանի մը պէս) ծանրացաւ անոնց վրայ, որովհետեւ մերժեցին հաւասար ընծայել նախախնամութեան նշաններուն և որովհետեւ անիրաւ տեղը սալաննեցին մարդարէները . իրենց անհնազանդութեան և անարդարութեան վարձքը այս պիտի ըլլայ :

108. Սուրբ գիրքերը ընդունողները բոլորը իրարու չեն նմանիր : Մէջերնին կան մարդիկ, որոնց սիրու շիտակ է . ասոնք գիշերը կը խորհրդածեն (¹) Աստուծոյ պատուիրաններուն վրայ և զԱստուած կը պաշտեն :

109. Անոնք կը հաւասառն Աստուծոյ և վերջին դատասանի օրուան . բարի գործեր կը հրամայեն և կ'արգիեն յուները : Բարեպաշտական գործերու կը վագեն եռանդով և արդարութիւնն ի գործ կը դնեն :

110. Իրենց ըրած բարիքը առանց վարձատրութեան չպիտի մնայ : Աստուած կը ճանչայ զանոնք, որ կ'երկնչին իրմէ :

111. Անհաւասաները ու եւ է առաւելութիւն չպիտի քաղեն Աստուծոյ առջեւ իրենց հարաստութեանց և զաւակներուն երեսէն . անոնք զո՞ն պիտի ըլլան կրակի մը որ բնաւ չպիտի մարի :

112. Անոնց տուած ողործութիւնները նման են այն աստենային հովին որ կը փչէ նենդամիտներու դաշտերուն վրայէն և կը փճացնէ բերքերը : Աստուած չէ որ անարդարութեամբ վարուեցաւ անոնց հետ . իրենք են որ իրարու գէմ անարդար եղան :

113. Ո՞վ հաւասացեալներ, միայն ձեւ միջեւ մը-

(1) «Կ'արտասանեն» (թարգմ. Քաղիմիրովի)

տերմական կապեր հաստատեցէք . անհաւասաները կը ջանան ապականել զձեզ . անոնք ձեր կրտսապը կը բաղձան :

114. Անոնց խօսքերը ըստ բաւականին կը յայտնեն արդէն իրենց առելութիւնը . իսկ ինչ որ ծածկուած է իրենց սրտերուն մէջ, յուեզոյն է : Մ՛նք արդէն յայտնի ապացոյցներ տուինք ձեզի այդ մասին, եթէ հասկնալ դիտէք :

115. Դուք զանոնք կը սիրէք, բայց անոնք կ'ատեն զձեզ : Դուք կը հաւասառք ամրող Գիրքին, իսկ անոնք երբ ձեզի հանգիպին, միեւնտյն հաւասաքը ունենալ կը կեղծեն : Բայց հազիւ թէ ձեզմէ հեռացած են, բարկութենէ մոլեգնած, մասերնին կը խածնեն : Էսէ անոնց . ձեր առելութեան մէջ պիտի մեռնիք, Յաւիտենականը կը ճանչնաց ձեր սրտերուն խորը :

116. Ձեզի եղած աղէկութիւնը զանոնք կը տըխրեցնէ . բայց երբ գժբախստութիւն մը հասնի ձեզի, ուշ բախութեամբ կը լցոււին անոնք, երբ դուք համբերասար և բարեպաշտ ըլլաք, անոնց չարութիւնը ձեզի չպիտի վնասէ բնաւ, որովհետեւ Ամենակարողը կը ճանչնայ անոնց գործերը :

117. (Յիշէ այն օրը) երբ, արշալոյսին, դուն ընտանիքիդ ծոցէն հեռացար, հաւասացեալներուն կռույց դաշտ մը պատրաստելու համար (¹) . Աստուած ուշազիր աշքով կը հետեւեր քու քաղկերուդ :

118. (Յիշէ այն օրը) երբ քու բանակէդ երկու գումարակ փախուստ պիտի տային, բայց Աստուած անոնց քաջութիւնը վերարձարձեց (²): Թո՞ղ ուրեմն հաւասացեալները իրենց վասահութիւնը Աստուծոյ վրայ դնեն :

(1) Կանարկէ այն բանակետղին, զոր Մուհամմէտ պատրաստեց Աչէտ լերան կողին վրայ, Մէտինէէն Յ մղոն չեռու :

(2) «Աստուած անոնց պաշտպանը եղաւ : » (Քաղիմիրովի)

119. Ամենակարողը փութաց օգնել ձեզ նաեւ Պէտրի օրը, երբ դուք թուով քիչ էիք: Ուրեմն երկնչեցէք իրմէ և երախտապարտ եղէք:

120. Դուն (այն առենը) կ'ըսէիր հաւատացեալներուն. չի բաւեր այն երեք հազար հրեշտակները զորս Աստուած ձեզի կը զրկէ երկնչեցն:

121. Անտարակոյս այս թիւը բաւական է, բայց եթէ դուք ունենաք բարեպաշտութեան հետ նաեւ յարատեւութիւն, և թշնամիները գան յանկարծ ձեր վրայ խոյանան, Աստուած ձեր վրայ պիտի թոցնէ հինգ հազար հրեշտակ իրը օգնական:

122. Անիկա ձեզի կը զրկէ այն երկնային զինուորները, որպէս զի ձեր սիրուերը հրճուին և վասահ ըլլան: Ամէն օգնութիւն (յաղթութիւն) Աստուածմէ կուգայ, անիկա հզօր է և իմաստուն, բատ կամս կրնայ տապալել անհաւասները, զանոնք ի փախուստ դարձնէլ և կամ բնաջինջ ընել:

123. Տէրը անոնց ներէ թէ զանոնք պատժէ, քեզի հետ վերաբերութիւն չ'ունի: Անոնք անհաւաստութեան մէջ ինկած են:

124. Աստուած երկնաքի և երկրի վեհապեսն է, կը ներէ և կը պատժէ զան որ ուղէ: բայց զթած և անցիշչաչար է ան:

125. Ո՛վ հաւատացեալներ, ձեր հարստութիւնը մի՛ բազմապատկէք վաշխառութեամբ⁽¹⁾: Երկնչեցէք Տիրոջմէն ու երջանիկ պիտի ըլլաք:

126. Անհաւասներուն համար պատրաստուած կրա-

(1) « Ինքնինի վաշխառութեան մի՛ տաք գումարը կը նապատկելով: » (Թարգմ. Քաղիմիրսքի)

կէն վախցէք. Հնազանդեցէք Աստուածոյ և Մարգարէին, որպէս զի աստուածային գութին արժանանաք:

127. Զանք ըրէք արժանի ըլլալու Տիրոջը զթութեան, և արքայութեան ժառանգումին, որուն տարածութիւնը հաւասար է երկինքի և երկրի, և որ յատկացուած է աստուածավախներու բնակութեան,

128. Նաեւ անոնց որ ողորմութիւն կուտան թէ յաջող և թէ ձախող օրերու մէջ, և որոնք իրենց բարկութեան վայրկեաններուն ինքպինքնին չլ կորանցնելով գիտեն ներել իրենց նաններուն: Աստուած կը սիրէ բարեպահները:

129. Անոնք որ մողավեան և անսարդարութեան ճամբուն մէջ ընթանալէ վերջ Տէրը կը լիչեն, իրենց ոճիքներուն համար թողութիւն կը խնդրեն, — որովհետեւ ովկի իրաւունք ունի թողութիւն տալու Աստուածմէ զատ — և որոնք կը լիչեն մեղքերը զանոնք ճանչնալէ վերջ,

130. Բոլոր անոնք Տիրոջը զթութիւնը պիտի վայեւին, և յաւիտենապէս պիտի բնակին գետերով ոտոգուած սլաքակներու մէջ. այս պիտի ըլլայ վարձատրութիւնը անոնց որ կը ասառապին⁽¹⁾:

131. Զեղմէ առաջ Աստուած պատուէրներ տուածէր⁽²⁾: Շրջեցէք աշխարհը և տեսէք թէ ինչ եղած է վախճանիը անոնց որ զմնի⁽³⁾ ասախօս կ'անուանեն:

132. Այս Դիրքը աշխարհի լոյսն է⁽⁴⁾. հաւատքին առաջնորդն է, և բարեպաշտներուն՝ խրատատուն:

(1) « Որքո՛ն գեղեցիկ է վարձատրութիւնը անոնց որ բարի գործեր ըրած են: » (Թարգմ. Քաղիմիրսքի)

(2) « Զեղմէ առաջ շարերուն պատիժներ տրուած էին: » (Թարգմ. Քաղիմիրսքի)

(3) « Աստուածոյ առաքեալները » (Թարգմ. Քաղիմիրսքի)

(4) « Մարգաց ուղղուած յայտարարութիւն մըն է: »

133. Բնաւ մի՛ կորսացնէք ձեր կորովը . մի՛ արտօմիք , եթէ հաւատացեալ էք՝ յաղթական պիտի հանդիսանաք :

134. Եթէ մահացու երկաթը⁽¹⁾ զծեղ վիրաւորէ , էն , ձեր թշնամիներէն քաննիները սիեւնոյն վէրքերը ստացած են . մահկանացուներուն յաջողութիւնները (և ձափորդութիւնները) պիտի փափոխնք , որպէս զի Աստուած ճանչայ հաւատացեալները , և ձեր մէջէն ընարէ իր մարտիրոսները . անիկա կ'առ! չարերը .

135. Եւ որպէս զի , հաւատացեալները փորձութեան ենթարկէ և անհաւատոնները ընաջինջ ընէ :

136. Կը յուսոք արքայութիւն մտնէլ , մինչ Աստուած չէ զիսցած թէ ձեր մէջէն որո՞նք մաքառած ու յարատեւած են :

137. Դուք մահուան կը ցանկայիք անոր գալէն տռաջ , բայց երբ զայն տեսաք , սկսաք վարանիլ⁽²⁾ :

138. Մուհամմէտ Աստուածոյ մէկ առաքեալն է . իրմէտ առաջ ուրիշ մարգարէներ ալ եկած են . եթէ անիկա մեռնէր կամ սպաննուէր , իր հաւատքը պիտի ուրանացի՞ք արդեօք : Ձեր հաւատուրացութիւնը չի կրնար վնասել Աստուածոյ . անիկա կը վարձատրէ զինքը պաշտողները :

139. Մարզը (կենդանի հոգին) միայն Աստուածոյ թողտութեամբ կը մեռնի . Գիրքին մէջ գրուած է իր ասպինիք օրերուն թիւը : Ո՞վ որ ուղէ սուանալ այս աշխարհի մէջ իր վարձատրութիւնը , պիտի ունինայ ո՞վ որ յաւիտենական կեանքի բարիքները պիտի բաղձայ , պիտի սուանայ : Մենք պիտի վարձատրենք զանոնք որ երախտագէտ են :

(1) Սուրը կամ տէգը :

(2) Պէտքի յաղթութեան օրը շատ իմաներ ցաւեցան որ երենք ալ կուտած չէին , բայց երբ Աչէտի պատերազմին անոնք տեսան որ թշնամի կռապաշտներուն բանակը աւելի ուժով է յուռահատեցան : Մուհամմէտ այս վաստութիւնն է որ երեսնուն կուտայ :

140. Քանի՛ մարգարէներ կոռւեցան ստուար բանակներու դէմ , առանց երբէք յուսահատելու այն ձախուղանքներէն զրոս կրեցին Աստուածոյ դատը պաշտպանած տաեննին . գժբաղբութիւնը երբէք չ'ընկճեց զիրենք . անոնք երբէք չը ստորնացան (թշնամիին առջեւ) վաստութեամբ : Աստուած կը սիրէ զանոնք որ կը յարաւեւեն :

141. Անոնք սաշափ միայն կ'ըսէին . Տէր , ներէ մեր յանցանքները և մեր պարատկանութեանց մէջ ըրած զանցառութիւնները . մեր քայլերը հաստատուն ըրէ , և օգնէ մեղի անհաւատ ազգերուն դէմ : Աստուած զանոնք առատորէն վարձատրեց այս աշխարհին մէջ , և հանգերձեալին մէջ երջանկութիւն տուաւ անոնց . անիկա կը սիրէ բարիք գործողները :

142. Ո՞վ հաւատացեալներ , եթէ հետեւիք անհաւատներուն , անոնք զծեղ պիտի վերադրձնեն մոլորութեանց ու դուք կորուստի պիտի մատնուիք :

143. Աստուած ձեր պաշտպանն է , իրմէ աղէկ ո՞վ կրնայ ձեղի օգնել :

144. Մենք կռասլաշներուն սրտին մէջ սարսափ պիտի սիսենք , որովհետեւ անոնք Բարձրեալին քով զըրին ապիկար աստուածութիւններ⁽¹⁾ : Կրակը իրենց ըրնակարանը պիտի ըլլայ . որքան անաւոր է ամբարիշտներուն ընակալայրը :

145. Աստուած արդէն իրավործեց իր խոստումները երբ (իր թողտութեամբ) դուք նարածեցիք պարատած թշնամիները , բայց վաստութեան խորհուրդներուն անսարդ վիճարանեցաք Մարգարէն հրամաններուն վրայ : Դուք չի հսազանդեցաք անոր , ձեր բաղձանդներուն առարկան⁽²⁾ ձեղի ցոյց ապէն վերջն ալ :

(1) (Առանց որ Աստուած ուեւ է զօրութիւն տուած ըլլար իշենց այս մասին) (Քաղիմրաբի)

(2) Այսինքն՝ յաղթութիւն և աւար :

146. Զեր մէջէն ոմանք աշխարհային կեանքին ա՛խը կը քաշէին, իսկ ուրիշներ ապագայ կեանքին կը բաղձատ- յին: Աստուած ձեր թշնամիներուն բազուկը գործածեց զձեղ ի փախուստ դարձնելով փորձութեան ենթարկելու համար, բայց յետոյ ներեց սրովհետեւ հաւասացեալնե- րուն համար բարութեամբ լիցուն է:

147. Մինչ դուք կը փախչէիք խառն ի խուռն, (և իրարու չէիք սպասեր) դուք չվ լուցիք ձայնը Մարգա- րէին (ձեր ետեւէն) որ ձեզ կոփուի կը կոչէր վերսովին: Երկինք ձեզ կը պատժէ ձեր անհնազանդութեանը համար: աւարին կորուստը և ձեր չնորհազրկումը թող անմիխթար չի դարձնեն զձեղ: Աստուած տեղեակ է ձեր բոլոր գոր- ծերուն:

148. Այս աղէատի դէպքէն վերջ Աստուած ապա- հովութիւնը և քունք իջնցաց ձեր մէջէն ոմանց վրայ: միւսները՝ անհնանդխատ, իրենց յիմար մասածումներուն մէջ կը համարձակէին Աստուծոյ վերազգել սուտ մը: անոնք կ'ըսէին: ասոնք Մարգարէին խոստումներն են (1): Պա- տասխանէ իրենց: Բարձրեալլ հեղինակին է այս աղէտ- քին (2): անոնք իրենց հոգիին խորը կը պահէին ի՞նչ որ քեզի չէին յայտներ: Եթէ, կ'ըսէին, մեզի տրուած խոս- տառմները հիմ մը ունենային, մեզմէ ոմանք պէտք չէր որ հոս մեռած իյնային: Պատասխանէ անոնց: Եթէ ձեր տու- ներուն մէջ ալ մնացած ըլլայիք, անոնք՝ որոնց մահը վե- րէն գրուած է, պիտի զային մեռնիլ ճիշդ այս տեղը, որպէս զի Տէրը ճանչնար և փորձէր թէ ինչ կայ (ծած- կուած) ձեր սրտերուն խորը: միայն ինքը զիտէ ձեր սր- տերուն գաղտնիքը:

(1) «Այս գործէն ի՞նչ պիտի շահնք» (թարգմ. Քաղիմիքիք)

(2) «Ամէն գործ Աստուծմէ կախում ունի»

149. Անոնք որ երկու բանակներուն բազմաման օրը նահանջնցին (1), Աստանայէն հրապուրուեցան ի պատիժ իրենց գործած յանցանքին: Աստուած ներեց անոնց, ո- րովհետեւ իր գթութիւնը անասանման է:

150. Ո՛վ հաւասացեալներ, մի՛ նմանիք անոնց որ անհաւատ ըլլալով՝ կ'ըսէն: մեր ելլայրները կորսուեցան պատերազմի ելթալով կամ կոռւելով: Եթէ մեր մէջը մը- նացած ըլլային չպիտի մեռնէին, (չպիտի սպաննուէին.) այս ամբարիշտ խօսքերը հառաջանքներ պիտի պատճառեն անոնց (2): Աստուած կուտայ կեանքը և մահը ու կը տես- նէ ձեր գործերը:

151. Եթէ մեռնիք կամ սպաննուիք հաւասաքը պաշտ- պանած ժամանակնիդ, խորհեցէք որ աստուածային գթու- թիւնը (ձեզի կը սպասէ) և լաւագոյն է քան ձեր հաւա- քելիք հարաստութիւնները:

152. Թէ որ մեռնիք (բնական մահով) և կամ թէ սպաննութիք, Աստուած պիտի հաւաքէ զձեղ իր գասա- տանին առջեւ:

153. Դուն (ո՛վ Մուհամմէտ) անոնց առջեւ ներկա- յացուցիր հրապուրիչ կերպով մը, աստուածային գութը: Եթէ սակայն աւելի խիստ և սասափկ ելլած ըլլայիր, քեզմէ պիտի բաժնուէին: ուրեմն գթութեամբ վարուէ անոնց հետ: ինպէս Աստուծմէ որ ներէ անոնց, իրենց ձեռնարկ- ներուն միջոցին խորհուրդ տուր, և երբ գործի մը վրայ խորհիս յայտ Աստուծոյ վրայ գիր: Սնիկա կը սիրէ զա- նոնք որ իրեն կը վստահին:

(1) Աչէտի պատերազմին օրը Ապտուլլահ և երեք զինուորներ սոսկալով թշնամիին բազմութենէն, առանց կոռւելու ետ դարձան:

(2) «Աստուած ուզեց որ պատահածը դառն վեշտեր պատճա- ռէր անոնց սրտին» (թարգմ. Քաղիմիքիք)

154. Եթէ Աստուած ձեր օգնութեան հասնի, ո՞վ
կընայ յաղթել ձեզի. Եթէ անիկա լքէ զձեզ, զ՞վ պիտի
կանչեք օգնութեան, ուրեմն թող հաւատացեալները իրենց
յոյսը Աստուծոյ վրայ դնեն:

155. Մարգարէն չի կընար խարել զձեզ. ո՞վ որ կը
խարէ՝ իր խարեբայսութեան հետ պիտի դատուի յարու-
թեան օրը: Այդ օրը իւրաքանչիւր ոք իր գործերուն
վարձքը պիտի ստանայ և վճրուները ճշգրիտ արդարու-
թեամբ պիտի տրուին:

156. Կը կարծէք թէ միեւնո՞յն վարձքը պիտի ստա-
նան անոնք որ Աստուծոյ կամքը գործադրած են և անոնք
որ յանցանք գործած ըլլալով իր զայրցիմն պիտի են-
թարկուին դժոխքի չարչարանքներուն մէջ, յուսահատու-
թեան բնակավայրը.

157. Ամենակարողը տարբեր կերպերով պիտի վարուի
անոնց հետ. անիկա կը կշռէ մահկանացուներուն արարք-
ները:

158. Աստուած արդէն փայլեցուց իր բարութիւնը
հաւատացեալներուն համար, անոնց զրկելով Մարգարէ մը
իրենց մէջէն, որպէս զի յայտնէ իր հրաշալիքները, որպէս
զի զանոնք մաքրագործէ, ու անոնց սորվեցնէ Գիրքը և
իմաստութիւնը: Եթէ աւելի կանուխ եկած ըլլային, մո-
լորութեան մէջ պիտի ապրէին (¹):

159. Երբ ձեզի դժբաղդութիւն մը կը պատահի, և
զուք նախապէս ձեր թշնամիներուն պատճառած կ'ըլլաք
կրկնապատիկ աւելի դժբաղդութիւններ, դուք կ'ըսէք.
այս դժբաղդութիւնը ուրեմն՝ կուգայ մեզի: Պատասխանէ
իրենց, ձեզմէ կուգայ: Աստուծոյ գորութիւնը անսահման է:

(1) «Իրենք՝ որ գեռ քիչ առաջ ակներեւ մնլորութեան մէջ
էին» (Թարգմ. Քաղիմիքը)

160. Երկու բանակներուն իրարու զարնուած օրը
Աստուած ուզեց որ պատահի (ձեզի հասած դժբաղդու-
թիւնը,) որպէս զի ճշմարիտ հաւատացեալները զանա-
զանուին կեղծաւորներէն: Երբ հաւատացեալներուն ըսուե-
ցաւ. (յառաջ,) հաւատարի զրօշին տակ եկէք, կոււեցէք
և վանեցէք թշնամին, անոնք պատասխանեցին. Եթէ
կոուիլ զիտնալինք, ձեզի պիտի հետեւէինք: Այդ օրը ա-
նոնք աւելի մօտ էին անհաւատութեան քան հաւատարի:

161. Անոնց շրթունքները կ'արտասանէին այնպիսի
բառեր, որ իրենց սրտերուն մէջ չի կոյին. բայց Աստ-
ուած գիտէ անոնց ծածկածը:

162. Անոնց՝ որ իրենց օճախին մէջ մնալով կը գո-
չեն՝ եթէ մեր եղանակները մեր խօսքը մտիկ ընէին, մե-
ռած չպիտի ըլլային, չպաշտամխանէ. Եթէ ճիշդ են ձեր
խօսքերը, մահուանէ զերծ մնայէք տեսնեմ:

163. Մի՛ կարծէք թէ անոնք որ (Աստուծոյ ձամբուն
մէջ կառւելով) ինկան՝ մեռան. ընդհակառակը, անոնք
կ'ապրին Աստուծոյ քալ և անկէ կը ստանան իրենց մնունքը:

164. Երջանկութեամբ զինովցած և Տիրոջը չնորհ-
ներով ողողուած անոնք կը բերկրին որ իրենց հաեւէն
եկողները, թէեւ տակաւին չի հասած իրենց, ու կումէ և
տանջանքէ զերծ պիտի ըլլան:

165. Անոնք կը բերկրին որ Տէրը զիրենք ողողած է
իր բարութեան գահներովը, և թէ անիկա ընաւ զանց
չըներ վարձատրել հաւատացեալները:

166. Անոնք որ իրենց կրած ձախորդութիւնն վերջ
Աստուծոյ և Մարգարէին կը նախանդին, բարիք կը
գործէն և Տիրոջմէն կ'երկնչին, չքեզ վարձատրութիւն մը
պիտի ստանան:

167. Անոնք որ երբ լսեն թէ թշնամին իր ուժերը

կը հաւաքէ, վոխսանակ վախնալու կը գոչեն՝ Աստուած բաւական է մեզ, ամէն բանի բաշխիչն է ան⁽¹⁾,

168. Անոնք կոխւէն պիտի վերադառնան երկինքի չորսներովը ողողուած : Ո եւ է ձախորդութիւն չի հանդիպիր իրենց, որովհետեւ անացին Աստուծոյ կամքին, անոր առասաձևնութիւնը անսահման է :

169. Աստանան պիտի ջանայ ձեզի ներչնչել զինքը պաշտողներուն վախը⁽²⁾, մի՛ վախնաք իրմէ, այլ երկրնչեցէք ինձմէ, եթէ հաւասացեալ էք :

170. Անոնք որ անհաւասառթեան ճամբուն մէջ կ'ընթանան, (գահավէժ ընթացքով մը) թող քեզի վիշտ չպատճառեն բնաւ . անոնք Աստուծոյ չեն կրնար տալ ամենափոքր վնաս մը, Աստուած ապագայ կեանքէն ո եւ է բաժին չպիտի տայ անոնց . սարսափելի տանջանքներ պիտի կրեն :

171. Անոնք որ շահու ազդեցութեան տակ հաւասուրաց կ'ըլլան, Աստուծոյ ո եւ է վնաս չեն կրնար պատճառել . այսպիսիներուն բնակալայրը դժոխքը պիտի ըլլայ :

172. Անհաւասները թող չկարծեն բնաւ . թէ երկար ապրիլ բարիք մըն է (գոր կը չորսնենք) իրենց համար . եթէ կ'երկարենք իրենց կեանքը, որատճառն այն է որ կ'ուղենք որ իրենց անօրէնութիւնները լրացնեն, և դարհուրելի տանջանքներու որսը գառնան :

173. Աստուած կը ձգէ հաւասացեալները այն վիճակին մէջ ուր դուք կը գանուիք, մինչեւ այն ժամանակը երբ չարերը բարիներէն զանազանէ :

174. Աստուած իր գաղտնիքները չպիտի պարզէ ձեր

առջեւ . անիկաս զանոնք կը վատահի իր ընտրած առաքեաներուն : Ուրեմն հաւասացէք Աստուծոյ և իր մարդարէներուն, եթէ հաւասառք և երկնչիք, պիտի վարձարաւիք :

175. Ագահը Աստուծոյ առաստաձեռնութենէն ստացած իր ինչքերէն օգուա մը չպիտի քաղէ, վասն զի⁽¹⁾ անոնք իր դժբախտութեանը պատճառ պիտի ըլլան :

176. Իր պահութեան տեղի տուող առարկաները (իր մանեակ) իր վեցն պիտի կախուին յարութեան (իրը⁽²⁾ : երկինքի և երկրի ժառանգութիւնը Աստուծոյ կը պատկանի . ձեր բախը գործերուն տեղեակ է ան :

177. Աստուած լեց ձանը անոնց՝ որ կ'ըսէին . Աստուած աղքատ է և մենք՝ հարուստ (⁽³⁾) : Մենք նկատութեան պիտի առնենք անոնց խօսքերը և անիրաւ տեղը անոնց թափած մարդարէի արիւնները, և պիտի ըսենք իրենց . կրակին պատիժը ճաշակեցէք :

178. Անոնք կրակին մէջ պիտի գահավիժին, ի պատիժ իրենց գործած ոժիրներուն, որովհետեւ Աստուած երբէք անարդար չէ մարզոց հանողէպ :

179. Կան մարդիկ որ կ'ըսէն . մենք Աստուծոյ երդում ըրբնեք հաւասառ միայն այն մարդարէին, որուն հուկած ողջակէզը երկինքի հուրը պիտի սպառէ :

(1) «Ընդհակառակ» (Թարգմ. Քաղիմիրաքի)

(2) Մուհամմէտ կ'ակնարկէ այն Արաբներուն, որոնք տուրքերն չեն վճարեր . այսպիսիներուն վզն օձ մը պիտի կախուի վերջին դատաստանի օրը, կըսէք :

(3) Մուհամմէտ կ'ակնարկէ այն առարկութեան զըր Քայխօքայի Հրէաները ըրին՝ ըսելով «ուրեմն Աստուած շատ աղքատ որ իրեն փոխատուութիւն մը ընկըու է» Նրէաները այս առարկութիւնը ըրին ի պատասխան Մուհամմէտի սա այլաբանական հըաւերին . «առատաձեռն փոխատուութիւն մը ըրէք Աստուծոյ :

(1) «Աքանչելի պաշտպան մըն է ան» (Թարգմ. Քաղիմիրաքի)

(2) «Յաճախ սատանան կ'աշաքեկէ իր չետեւորդները :

180. Պատասխանէ ասոնց . ինձմէ առաջ մարդարէներ եկան ձեզի . անոնք հրաշքներ գործեցին , նոյն իւլ այն հրաշքը՝ որուն մասին կը խօսիք . ուրեմն ինչո՞ւ ձեր ձեռքերը անոնց արիւնով ներկեցիք , եթէ հիմակուան ըստածնիդ ճշմարտութիւնն է :

181. Եթէ անոնք ուրանան քու առաքելութիւնդ , քեզմէ առաջ եկած մարդարէներուն ալ նոյնը ըրին , թէև այդ մարդարէները հրաշք գործելու ձիրքովը օժտուած էին , և բերած էին Սաղմոսագիրքը և Գիրքը որ կը լուսաւորէ (Աւետարանը :

182. Ամէն ոք մահը պիտի ճաշակէ . ամէն ոք իր գործերուն վարձքը պիտի ստանաց յարութեան օրը . ով որ կրակէն աղասելով արքայութիւնն մտնէ , ճշմարիս երջանկութիւնը պիտի ճաշակէ սրովհետեւ այս աշխարհի կեանքը խարեսատիր վայերք մըն է միայն .

183. Զեր ինչերը և ձեր անձերը փորձութեան պիտի ենթարկուին . Հրէաները և կռապաշաները անարգանքներ պիտի ուղղեն ձեզի . բայց դուք համբերութիւն ունեցէք և երկնչեցէք Աստուծմէ . բոլոր ասոնք երկինքի պատուեներու կարգէն են (¹) :

184. Աստուծ բնագունեց Հրէաներուն դաշինքը , պայմանաւ որ անոնք մարդոց ցոյց տան Հնդկամատեմնը և բնաւ չի ծածկին անոր վարդապետութիւնները . բայց անոնք արհամարհանքով (իրենց ուսմին վրայէն) նետեցին դայն և զծուծ շահու մը փոխարէն ծախեցին . վայ անոնց որ ծախեցին դայն (²) :

(1) «Բոլոր ասոնք իրաց վեճակին մէջն են :

(2) «Ի՞նչ գծուծ ապրանք ստացան փոխարէն : »
(Թարգմ. Քաղիմիքի)

185. Մի՛ կարծէք թէ , իրենց արարքներով հաղարտացողները կամ իրենց չըրած մէկ գործին համար գովեստ ակնկալողները պատիժէ զերծ պիտի ըլլան . խոտորէն պիտի պատժուին անոնք :

186. Երկինքի և երկրի կայսրութիւնը կը պատկանի Աստուծոյ . ամիկա ամէն բանի վրայ իշխանութիւն ունի :

187. Իմաստուն մարդիկ Աստուծոյ զօրութեան նըշանները կը տեսնեն երկինքի և երկրի ստեղծագործութեան , և ցերեկին ու զիշերին յաջորդականութեանը մէջ :

188. Անոնք որ , սաքի վրայ , կամ հստած , կամ պառկած ատենայն Աստուծոյ վրայ կը խորհին և տիեզերքի ստեղծագործութեան մասին կը խորհպածեն , կը գոչեն . Աստած բոլոր ասոնք պարապ տեղը չը ստեղծեց . գովեալ ըլլայ անունդ , ով Աստած :

189. Տէր , զմեղ զերծ պահէ կրակի պատիժէն (¹) . Տէր , ան զոր բոցերուն մէջ պիտի նետես , անարգանքներու սակէ պիտի ծածկուի . նենդամիաներուն համար ու և յոյս չկայ :

190. Տէր , մենք բացինք քու Մարդարէիդ ձայնը որ մեզ հաւասարի կը կանչէր և կը գոչէր՝ հաւասացէք Աստուծոյ . և մենք հաւասացինք :

191. Տէր , ներէ մեր յանցանքներուն , մեր մնջերը սրբէ , և ըրբէ որ արդարներուն ձամբաւն մէջ մենոնինք :

192. Տէր , չորհէ մեղ ինչ որ խստացար Մարդարէիդ միջոցով , և ամօթով մի՛ ծածկեր զմեղ վերջին դա-

(1) Քաղիմիքի թարգմանութեան մէջ այս տողը գրուած է 188րդ տունին վերջը : Նաեւ՝ Ասվարիի թարգմանութեան 77րդ տունը՝ Քաղիմիքիթին մէջ վերածուած է 77րդ և 78րդ տուներու . այս շփոթութիւնը շարունակուած է մինչեւ 114րդ տունը , ուր երկու թարգմանութիւնները կը միանան : լ. լ.

սասասանի օրը, որովհետեւ դուն քու խոսառութիւներդ չես
դրժեր բնաւ:

193. Տէրը լսելով անոնց աղաջանքը՝ կրոէ. ձեր
մէջէն ո՛չ մէկուն (ո՛չ մարդոց, ո՛չ կիներուն) գործը
չպիտի կորսուի. ամէն ոք իր վարձքը պիտի ստանայ.
(կիները մարդոցմէ սերած են:)

194. Ես պիտի սրբեմ մեզքերը անոնց՝ որ իրենց
տուներէն դուրս վտարուեցան (¹), անոնց՝ որ իմ գատիս
պաշտպանութեանն համար տառապեցան, կոռւեցան և
մեռան: Զանոնք պիտի մոցնեմ պարտէզներու մէջ, ուր
գետեր կը հոսին:

195. Աստուածային վարձասրութիւնն այս է. (և
անտարակոյս) Աստուծոյ պարզեւները հրաշալի են:

196. Մէքքէ բնակող անհաւասներուն յաջողութիւն-
ները թող չհրապուրեն զքիզ. անոնց վայելքը կարձատեւ
պիտի ըլլայ. գեհենին մէջ պիտի բնակին անոնք, թշ-
ուառականներու բնակավայրը (²):

197. Իսկ Աստուծմէ երկնչողները պիտի բնակին
հեշտալի պարտէզներուն մէջ (որոնք գետերով ոռոգուած
են.) յաւիտենապէս հնու պիտի բնակին. Աստուծոյ հիւ-
րերը պիտի ըլլան. Աստուծմէ աւելի ո՞վ կրնայ չնորհնե-
րով ողողել արդարները:

198. Հրէաներուն և Քրիստոնեաներուն մէջ կրն ո-
րոնք կը հաւասան Աստուծոյ, սուրբ զիրքերուն և Քուրա-
նին (³) որոնք Աստուծոյ կ'երկրապատկեն և գձուձ շահու մը
փոխարէն չեն ծախսեր իր վարդապետութիւնը:

199. Այսպիսիները Յաւիտենականէն պիտի ստանան
իրենց վարձքը. անիկա ծչզրառութեամբ (⁴) կը կշռէ մահ-
կանացուներուն արարքները:

200. Ո՞վ հաւասացեալներ, համբերասար եղէք,
յարատեւութեամբ մաքառեց'ք (⁵) վախցէ՛ք Աստուծմէ,
որպէս զի երանութիւնը վայելէք:

(1) « Արագութեամբ »

(Բարգմ. Քաղիմիրաքի)

(2) « Համբերութեան մէջ իրարու չետ մըցեցէք »

ՎԵՐՋ Գ. ԴԼՈՒԽԻ



(1) « Անոնց՝ որ գաղթեցին կամ իրենց երկրէն վտարուեցան: »

(2) « ի՛նչ աշուելի հանգստավայր: » (Բարգմ. Քաղիմիրաքի)

(3) « Զեղե և իրենց զրկուած գիրքերուն: »

ԳԼՈՒԽ Դ.

Կ Ի Ն Ե Ր Ը

Տրուած՝ Մէտինէի մէջ . — 175 տուն⁽¹⁾

Յանուն ողօրմած եւ անյիշաշար Աստուծոյ .

1. Ո՞վ մահկանացաւներ , վախցէք Տիրոջմէն որ զձեղ բոլորդ ստեղծեց միակ մարդէ մը , և որմէ կազմեց (անոր) կինը և յեսոյ երկիրը լցուց անոնց սերունդներով : Երկրնեցէք Տիրոջմէն որուն անունով փոխադարձ խընդրանքներ կընէք⁽²⁾ : Արիւնի կապերը յարգեցէք . Ասուած կը դիմէ ձեր արարքները :

2. Որբերուն (երբ չափահաս ըլլան) վերադարձուցէք ինչ որ իրենց կը պատկանի . (անոնց վերաբերած) լաւ մէկ բանին անձլ գէշ բան մը մի՛ տաք . անոնց ժառանգութիւնը մի՛ խլէք , ձերինը խոշորյժելու համար⁽³⁾ . այս արարքը (մէծ) ոժիր մին է :

3. Եթէ կը վախնաք որ արդարութեամբ չէք վարուիր որբերուն հանդէպ , ձեր կիներուն հանդէպ ալ անարդար ըլլարէ ալ վախցէք . միայն երկու , երեք կամ

(1) Քուրանի իւրաքանչիւր գլուխին վրայ նշանակուած է այսպէս՝ ո՞ւր արուած ըլլալը , և քանի՛ տուն պարունակելը . մենք զանց ըրեր էինք յիշատակել թէ և . գլուխը արուած է Մէքքէի մէջ , իսկ թ . և դ . գլուխները՝ Մէտինէի մէջ : լ. լ.

(2) Արաբները սովորութիւն ունէին , բան մը ինդրած ատեն-նին՝ միշտ ըսկելու . «Յանո՛ւն Աստուծոյ աս բանը ըրէ : »

(3) «Զերինին հետ շփոթելով» (թարդմ. Քաղիմիրսբի)

չորս կին առէք⁽⁴⁾ . ձեզի հաճելի եղածները ընարեցէք : Եթէ չէք կրնար զանոնք պահել արդարութեամբ . մէկ կին միայն առէք , կամ գերունդով մը դո՞ւ եղէք⁽⁵⁾ : Այս իմաստուն վարժունքով արդար ըլլալու միջոցները պիտի դիւրանան , և (աղատօրէն) ձեր կիներուն դրամօժիաը⁽⁶⁾ պիտի յատկացնէք : Տուէք անոնց այն օժիար , որուն մասն համաձայնութիւն դոյցած է . եթէ անոնք վեհանձնութիւնն ունենան այդ գումարէն (մաս մը) ձեզի վերադարձներու , ձեր կեսներին պէտքերուն հայթայիշմանը յատկացուցէք :

4. Անմիտի մը⁽⁷⁾ մի՛ յանձնէք այն ստացուածքը որոնց պահպանումը ձեզի յանձնած է Աստուած . (այլ զանոնք անձամբ յանձանցեցէք) և անոնցմով մոտնդ և զգեստ հայթայիշնեցէք ձեր պաշտպանեալներուն . անոնց պարտաւորէք ատլ պարկեշտ դաստիարակութիւն մը⁽⁸⁾ :

(1) Ձէլալէտաին կըսէ որ՝ այն ատենը երբ Քուրանի այս հատուածը երկինքէն իջաւ , արաբները 8—10 կին առնել սովոր էին և յաճախ անարդարութեամբ կը վարուէին անոնց հետ : Բազմակիւնութիւնը միշտ գյուղթիւն ունեցած է Արեւելքի մէջ , ու Մուհամետա ջանացած է սեղմել զայն քիչ մը :

(2) Քաղիմիրսբի կըսէ թէ՝ արաբերէն բնագրին մէջ գրուած է ստպէս . «Ձեր աշ ձեռքին ստացածնը գոչ եղէք . » ասիկա նուիրագործուած բացատրութիւն մըն է և կը նշանակէ «դրամով գնուած կամ պատերազմի մէջ շահուած գերուհի մը : »

(3) «Դրամօժիս» թարգմանած ենք Քրանսերէն ծօտ բառը , որուն արաբերէնն է ստատվա : Արեւմտեան ըմբռնումով ամուսնացող աղջիկն է որ դրամօժիտը կը բերէ , բայց Քուրանին մէջ ամենուրեբ ուր գրամօժիտա բառը գործածուած է , պէտք է հասկընալ այն գումարը , զոր այրը կուտայ իր հարսին ծնողացը :

(4) «Անկարողի մը» այսինքն անչափահասի մը , կըսէ Քաղիմիրսբի :

(5) «Քաղցը և պարկեշտ լեզուով մը խոսեցէք անոնց հետ :

5. Զանոնք (որբերը) մեծցուցէք⁽¹⁾ մինչեւ որ առուանանալու տարիքը թեւակոխեն, և երբ տեսնէք թէ կարող են պարկեշտօրէն ընթանալ, իրենց ստացուածքին մասակարարումը իրենց ձեռքը տուէք: Զգոյշ եղէք զանոնք շոայլութեամբ չփացնելու կամ մի՛ աճապարէք որբերուն յանձնելու, երբ գեռ շատ երիասարդ են անտնք:

6. (Երբոր անոնք մեծնան) Ըլլայ որ հարուստ իրնամակալը իր պաշտպանեալին ստացուածքին դպչի. երբ որ աղքատ է, ինայուրութեամբ պէտք է ծախաէ:

7. Այն միջոցին որ իրենց ստացուածքին հաշիւը պիտի տաք (գանոնք վերադարձնելով) վկաներ կանչեցէք. Աստուած ձեր արարքներուն դատաւորը պիտի ըլլայ:

8. Այրերը և կիները պէտք է ստանան մէկ մասն այն հարասութեան զոր թողած են իրենց հայրերը (և մայրերը) և իրենց աղքականները: Ժառանգութիւնը մեծ ըլլայ թէ փոքր, օրէնքով սահմանուած մաս մը իրենց պիտի տրուի:

9. Երբ ժառանգութիւնը բաժներու համար կը հաւաքուիք, աղքատ ծնողքներուն օգնելու հոգ տարէք և մարդասիրական խօսքերով միսիթարեցէք զանոնք⁽²⁾:

10. Սնոնք որ գուցէ իրենց ետին պզտիկ աղաք ձըգելով պիտի մնանին, թո՛ղ Տիրոջը երկիւզը և գութ ունենան իրենց որտին մէջ, և իրենց ձայնը որբերուն ի նըպատ բարձրացնելով թո՛ղ անսնց բաղդը արդարութեամբ տնօրինեն:

11. Սնոնք որ անօրէնութեամբ կը լավեն որբին

(1) «Անոնց մտային կարողութիւնները փոքեցէք»:

(2) «Երբ ծնողքները, որբերը և աղքատները ներկայ են ժառանգութեան բաժանմանը ...»

Ժառանգութիւնը, մսած կ'ըլլան կրակով մը որ իրենց աղքները պիտի փողոտէ⁽¹⁾:

12. Աստուած ձեզի կը հրամայէ, որ ձեր ստացուածքը ձեր զաւակներուն միջնեւ բաժնած ատենախով, մանչերուն ապա աղջկանց ստացնուուդ կրկնապատիկը. եթէ միայն աղջիկ զաւակ կուց, ու անոնք երկուքն աւելի են, պիտի ստանան (հօրենական) ժառանգութեան երկու երբորդը. եթէ մէկ աղջիկ միայն կայ, կէսը պիտի ստանայ: Երբ մեռեալ մարդը մէկ մանչ զաւակ միայն կը թողու, մարդուն ծնողքը պիտի ստանայ մէկ վեցերորդը. եթէ բնաւ զաւակ չըլլայ, և իր ծնողքը իրեն յաջորդեն, իր մայրը պիտի ստանայ ժառանգութեան մէկ երբորդը. իսկ եթէ եղ շայրներ կը թողու, մայրը պիտի ստանայ մէկ վեցերորդը միայն, կտակարարին պարագերը և հրիտակը վճարելէ ետք: Դուք չէք գիտեր թէ ձեր հայրերէն և զաւակներէն ո՞րս աւելի օգտակար է ձեզի: Ասոնք են Աստուծոյ օրէնքները. անիկա գիտուն և իմաստուն է:

13. Առանց զաւակի մեռած կնոջ մը ստացուածքին կէսը կը պատկանի ամուսինին. իսկ եթէ զաւակ կը թողու, մէկ քառորդ մասը կ'իյնայ ամուսինին, հրիտակը և պարագերը վճարելէ ետք:

14. Երբ ամուսին մը ստանց զաւակի մեռնի, կիները պիտի ստանան ժառանգութեան մէկ չորրորդը. իսկ եթէ զաւակ ձգած է, մէկ ութերորդը միայն, միշտ պարագերը և հրիտակը վճարելէ ետք:

15. Երբ մարդ մը հեռաւոր աղքականէ կամ աղքականուհիէ մը ժառանգութիւն մը ստանայ, և ելլայր մը

(1) «Իրենց աղքներուն մէջ կրակ մացուցած կ'ըլլան, և օր մը պիտի սպառին հրավառ բոցերէն» (թարգմ. Քաղիմիքոքի)

կամ քոյր մը ունի, անսնցմէ իւրաքանչիւրին պարտաւոր է տալ ժառանգութեան մէկ վեցերորդը. եթէ բազմաթիւ եղայրներ և քոյրեր կամ, ժառանգութեան մէկ երրորդը պիտի առնեն, հրիտակին և պարտքերուն օրինաւոր կարգադրութենէն յետոյ:

16. Զրլա՛յ որ այս պատուէրներուն դէմ շարժիք. զանոնք հրամայողը Աստուած է, զիտուն և զթած Աստուածը:

17. Ով որ այս պատուէրները գործադրէ և Մարգարէին հնազանդի, պիտի մտնէ պարտէզներու մէջ ուր գետերը կը հոսին, երանութեանց բնակավայրը, ուր պիտի ձաշակեն յաւիտանսական երջանկութիւնը:

18. Ով որ անհնագանդ ըլլայ Աստուածոյ և իր Մարգարէին, և այս օրէնքները կոխկատէ, կրակի վիճին մէջ պիտի գահավիժի, ուր յաւիտանսապէս որսը պիտի ըլլայ չարչորանքներուն և նախասանքներուն:

19. Երբոր ձեր կիներէն մէկը չնութիւն ընէ⁽¹⁾, չորս կլայ կանչեցէք, և երբոր անոնց վիրայութիւնները համաձայն ըլլան իրարու և ընդդէմ ձեր կինջ, զայն փակեցէք ձեր տունին մէջ մինչեւ անոր մահը, (կամ մինչեւ որ Աստուած անոր փրկութեան միջոց մը հայթայիթէ):

20. Ոճիրին մէջ բանուած մարգուն և կինջ պատիժ մը անմանեցէք⁽²⁾, և եթէ անոնք զզջալով ուզգեն ինքնինքնին, ներկացէք իրենց, որովհետեւ Աստուած ներուդամիտ և զթած է:

(1) Խումանկան կրօնքին հաստատման առաջին օրերուն յանցապարտ կինը պատի մէջ կը հիւսէին, բայց Քուրանը այդ աեսակ պատիժի մը խօսքը չ'ըներ:

(2) «Երբ ձեր մէջէն երկու հոգի խայտառակ գործ մը ընեն, երկորին աւ շարիք հասցուցէք» (Քաղիմիրոքի) «Ոճիրը» որուն կ'ակարկուի, Սոդոմականութիւնն է, որուն պատիժն էր հրազդակային կշտամբները և կամ հողաթափներով ձեծը:

21. Անոնք որ աղիտութեամբ մեղք մը գործելէ վերջ վշացեալ սրտով Աստուածոյ կը վերադառնան, իր գթութիւնը պիտի վայելեն, որովհետեւ զիտուն և խմաստուն է ան:

22. Զզջումը ո եւ է օգուտ չ'ունի անոնց համար որ ոճիրի մէջ ծերացած են⁽¹⁾ և գերեզմանին գուոր հասած ատեննին կը գոչեն՝ կը զզջամ: Զզջումը նաեւ ո եւ է օգուտ չ'ունի անոնց համար որ անհաւատութեան մէջ կը մեռնին: Այսպիշիներուն պատրաստած ենք սորսափելի չարչարանքներ:

23. Ով հաւատացեաչներ, ձեզի թոյլատրուած չէ ձեր կիններուն ժառանգորդը ըլլալ հակառակ անոնց կամքին. ոչ ալ արգիլել զանոնք կրկին ամեւմանալիէ (երբ զանոնք արձակած էք) որպէս զի կարենայիք իւրացնել մէկ մասն այն զրամօժիանի զոր տուած էիք. տարրեր ինդիր է եթէ անոնք յայսնի ոճիրով մը⁽²⁾ յանցաւոր են: Ձեր կինները ձեզի կապեցէք բարի գործերով, եթէ անոնց հետ խասութեամբ վարուիք⁽³⁾, կրնայ ըլլալ որ դուք ատէք զանոնք որ Աստուած ստեղծած էր զձնդ երջանիկ ընելու համար:

24. Երբոր արձակէք կին մը որուն կարեւոր զրամօժիտ մը⁽⁴⁾ տուած էիք, որպէս զի ուրիշ կին մը կարենաք առնել, առաջինին քով ձեւցէք ամբողջ զրամօժիտը: Պիտի ուզէիք անսարդարութեամբ (և անօրէնութեամբ) անկէ խլիլ ձեր առաստածեռնութեան պառուղը:

(1) «Որոնք շարունակ գէշ գործեր կը կատարէն» (Քաղիմիրոքի)

(2) «Անպատիւ գործով մը» (Քաղիմիրոքի)

(3) «Եթէ ձեր կիններուն մէջ կան պյնպիսիներ որոնց վրայ ձեր սիրտը սաք չէ» (Քաղիմիրոքի)

(4) «Հարիւր դենար» (Քաղիմիրոքի)

25. Եւ ինչպէս պիտի կրնայիք խել այն ընծան զոր ըրած էք անձի մը որուն հետ մտերմական կապերով միացած էք, և որ ձեր հաւատքը ընդունած է⁽¹⁾:

26. Մի՛ ամուսնանաք այն կիներուն հետ որոնք ձեր հայրերուն ամուսինները եղած են. ոճիր է այդ, ասիկա մոլորութեան ճամբան է⁽²⁾. բայց եթէ չարիքը գործուած է, պահեցէք զանոնք:

27. Չեզի արգիլուած է ամուսնանալ ձեր մայրերուն, աղջիկներուն, քոյրերուն, հօրաքոյրերուն և մօրաքոյրերուն հետ, նոյնպէս՝ ձեր եղբօր կամ քրոջ աղջիկներուն հետ, ձեր ստուաններուն, ձեր կաթընկերներուն, ձեր զոքանջներուն, ձեր ինսամքին յանձնուած աղջիկներուն հետ, եթէ անոնց մայրերը ձեր հարճերը եղած են. իսկ եթէ չեն եղած, ոճիր չէ անոնց հետ ամուսնալլը: Պէտք չէ ամուսնանաք ձեր հարսերուն հետ, ոչ ալ երկու քոյրերուն հետ: Եթէ ոճիրը գործուած է, Տէրը գիշած և բազում ողորմ է:

28. Չեզի արգիլուած է կարգուիլ ամուսնացած ոչ գերի կիներու հետ. տարբեր խոդիր է, եթէ պատերազմի մէջ անոնք ձեռքերնիդ գերի ինկած ըլլան: Ահա՛ Սատունոյ օրէնքները. բայց, ներկիլ է ձեզ այս արգելիներէն զատուրից բաներ ընկել, եթէ կը բաղձաք գործածել ձեր ստացուածքը, գանելու համար պարկեշտ և մաքրասուն կիներ: Ցոփութենէն զգուշացէք. խոստացած օժիտնիդ տուէք այն կիոջ որուն հետ կենակցած էք, օրէնքին համաձայն⁽³⁾.

(1) «Որոնք ձեր հանդիսաւոր երդումները ընդունած են:»
(Քաղիմիրսքի)

(2) «Չզուելի և գէշ արարք մըն է:»
»

(3) «Ասիկո հարկեցուցիչ բան մըն է:» (Քաղիմիրսքի)

Երբ այս պայմանները յարգէք, միասին կնքած համաձայնութիւննիդ օրինաւոր է: Սատուած զիտուն է և իւմաստուն:

29. Ան որ բաւական հարուստ չէ որ կարենայ կարգուիլ ոչ-գերի⁽¹⁾ հաւատացեալ կիներու հետ, պիտի առնէ իրը կին, հաւատացեալ գերուհիներ: Սատուած կը տեսնէ ձեր հաւատքը: Դուք իրարմէ կախում ունիք⁽²⁾: Գերուհիներուն հետ կարգուցեցէք միմիայն իրենց տէրերուն թոյլառութեամբը, անոնց օրինաւոր զրամօժխա տուէք. թող անոնք ըլլան պարկեշտ, ցոփութենէ զգուշանան և թող սիրահար չունենան:

30. Եթէ ամուսնանալէ ետք անոնք ցոփութեան մէջ իյնան, տուէք անոնց կէսն այն պատիմին⁽³⁾ զոր անօրինեցինք աղաս (ոչ-գերի) կիներուն զէմ: Այս օրէնքին հաստատուած է ի նպաստ անոր որ չնալէ կը վախնայ⁽⁴⁾: Բայց եթէ կարենաք ժումկալ մնալ, աւելի արժանավարձ գործ մը ըրած կըլլաք. Սատուած զիտած է և անիշխաչար:

31. Սատուած իր կամքը կը յայտնէ ձեզի. անիկա կ'ուզէ ձեզ տանիլ ձեր նախահարց օրէնքներուն տակ⁽⁵⁾ և իր զթութեանն ապացոյցները տալ. իմաստուն և գիտուն է Սատուած:

32. Անիկա կ'ուզէ ցայց տալ ձեզի իր զթութիւնը⁽⁶⁾. բայց անոնք որ կը հետեւին իրենց կիրքերու հեղեղին,

(1) «Պարկեշտ» (Քաղիմիրսքի)

(2) «Դուք տանքդ իրարմէ կը սերիք, և Ադամէն՝ որ ամեն հոյն է:» (Քաղիմիրսքի)

(3) Խարապանի յիսուն հարուած և 6 ամիս աքսոր:

(4) «Որ կը վախնաց թէ կը մեղանչէ ամուրի մնալով:»

(5) «Ձեր նախորդներուն ճամբուն մէջ:»

(6) «Աստուած կ'ուզէ ձեր զգուշմը ընդունիլ:»

կ'ուղեն ղձեղ անորոշողը գահավիժել, մինչ Աստուած կ'ուղէ որ իր լուծը թեթեւ ըլլայ, որովհետեւ մարդը տրկար ստեղծեց ան:

33. Ո՛վ հաւատացեալներ, մի՛ սպառէք ձեր ինչքը վախառութեամբ⁽¹⁾, փոխադարձ համաձայնութեամբ պայմանագրութիւն կնքեցէք: Ինքզինքնիդ մի՛ սպամնէք⁽²⁾, Աստուած կ'ողորմի ձեզի:

34. Այն ամբարիշար որ (անօրէնութեամբ և չարութեամբ) այսպէս կը գործէ, կրակին մէջ պիտի սպառենք. ասկէ զիւրին բան չկայ Աստուծոյ համար:

35. Եթէ զիսաւոր պատուէրները պահնէք, ձեր յանցանկները պիտի սրբուին. և ձեզի պիտի տանք պատուաոր տեղ մը⁽³⁾ արքայութեամն մէջ:

36. Մի՛ ցանկաք բնաւ նմանիլ անոր զրո Աստուած ձեղմէ վեր բարձրացուց: Իւրաքանչփւր ոք իր աշխատութեան պառուղին բաժինը պիտի ունենայ: Աստուծմէ (միւթեան) հայցեցէք ողորմութիւն. անիկա ամէն բան գիտէ:

37. Մենք ցոյց տուինք (իւրաքանչփւրին) ժառանակութիւները, որոնց պարասաոր էք թողուլ ձեր ծնողաց և գորդները, որոնց պարասաոր էք թողուլ ձեր ծնողաց և աղբականներուն ինչքները (և նաեւ ինչքը անոնց՝ որոնց հետ դաշինք ունիք.) կոտակարտին պայմանադրած յանձնառութիւնները կատարելու մէջ մի՛ թերանաք. Աստուած կը տեսնէ ձեր գործեցր:

38. Մարդիկ աւելի գերադաս են քան կիները, ուրովհետեւ Աստուած (անոնց տուած յատկութիւններովը) գերակիւր ըրած է զանոնք, և անոր համար որ մարդիկ

(1) « Ոնոտի բաներով. »

(2) « իրաք մի՛ սպամնէք. » (մեկնէները անհամաձայն են այս առջին հակասական իմաստին զբայ:)

(3) « Մուտք մը. »

իրենց ինչքը կը գործածեն կիները օժտելու: (Առաքինի) կիները հնազանդ (և կու) կ'ըլլան և պարտին պահել իրենց ամուսիններուն գաղտնիքները և իննամքով պահել այն՝ զոր (իրենց ամուսինն բացակայութեան միջոցին) Աստուած հրամացեց անազարտ պահել. իրենց կիներուն անհնազանդութենէն ասպազողով այրերը կրնան զանոնք պատժել, առանձին թողուլ անկողինին մէջ, և մինչեւ իսկ կրնան ծեծել: Բայց երբ ձեր կիները հնազանդութիւն յացտնեն, գէշ վարմունք մի՛ ունենաք իրենց հետ⁽¹⁾: Աստուած մեծ և գեսմէ է:

39. Երբ կը վախնաք որ այր և կնոջ միջեւ պառակառմ մը տեղի պիտի ունենայ, երկու կողմերէն մէջ մէկ իրաւարար կանչեցէք, և եթէ այր և կին կը հաւանին սիրով իրարու հետ ալրիդ, Աստուած խաղաղութիւնը տիրապետել պիտի տայ անոնց միջեւ, վասն զի իր գիտութենէն ոչինչ կը խուսափի:

40. Պաշտեցէք զԱստուած, իրեն հաւասար ոչ ոք չկայ, բարիք ըրէք ձեր ծնողին (ձեր ազգականներուն) որբերուն, աղքատներուն, ձեր արենակիցներուն, օտարականներուն, ձեր զինակից ընկերներուն, ճամբորդներուն և գերիններուն: Ամենակարողը կ'ատէ գոռող և հրամարտ մարդիկը.

41. (Զի սիրեր) ազանները, որոնք կ'ուղեն ազանութիւնը տարածել մարդոց մէջ. երկինքի տուած հարստութիւնը կը ծածկեն. անոնք, անհաւասաններուն հետ, անարդարից չարչարանքներու պիտի ենթարկուին.

42. (Զի սիրեր) զանոնք որ ցոյցի համար ողորմութիւն կուտան և չեն հաւասար Աստուծոյ (և վերջին

(1) « Կոիւ մի՛ հանէք: »

օրուան.) անոնց ընկերը Սատանան պիտի ըլլայ. թշուա՛ռ ընկեր :

43. Ի՞նչ պիտի կորսոյնէին, եթէ Աստուծոյ և վեր Ջին դատաստանին հաւատային, և եթէ աղքատին գոզը թափէին (Աստուծոյ չնորհած) հարստութիւնը. Բարձրեալը չպիտի՝ ճանչնար իրենց գործերը :

44. Աստուած ոչ ոք պիտի խարէ, ոչ իսկ հիւլէի մը չափ. բարի գործերուն փոխարէն կրկնապատիկ պիտի հաստուցանէ, և ինք իր ձեռքով փառաւոր վարձատրութիւն մը պիտի չնորհէ :

45. Ի՞նչ պիտի ընեն անհաւասները, երբ հաւաքնաք իրենց գէմ վկայութիւն տուող բարոր աղքերը, երբ՝ (իրենց գէմ) քու վկայութիւնդ պիտի ուղենք (ո՛վ Մուհամմէտ:) Անոնք (և Մարգարէին անհավանդ եղողները) այդ ահաւոր օրը պիտի ցանկացին փոշիի վերածուիլ (¹): Բայց իրենց արարքներէն և ո՛չ մին չպիտի կրնան ծածկել Աստուծմէ :

46. Ո՛վ հաւասացեալներ, մի՛ աղօթէք ընաւ երբոր գինով էք. սպասեցէք, որ ի վիճակի ըլլաք հասկընալու ձեր արտասասնած բառերը: Երբ աղտոտած էք, մինչեւ որ չի լուացուիք, մի՛ աղօթէք: Հիւանդութեան պարագային, կամ ճամփորդութեան միջոցին, երբ ընական պէտք մը գոհացուցած էք, կամ երբ կիներու հետյարաբերութիւն. ունեցած էք, չուր չգտած ատեւնիդ, աւազով շիեցէք գէմքերնիդ և ձեռքերնիդ: Աստուած գթած և անյիշաչար է:

47. Զէ՞ք դիտած Հրէաները (²). անոնք մոլորութիւնը

(1) «Պիտի ցանկոյին որ հողը իրենց հաւասար ըլլայ և ծածկէ զիրենք»:

(2) «Զէ՞ք դիտած անոնք որ սուրբ գիրքերուն մէկ մասն ընդունած են» (Քաղիմիքի)

կը ծախեն և կ'ուղեն որ զձեզ հեռացնեն շիտակ ճամբէն. բայց Աստուած կը ճանչնայ ձեր թշնամիները, իր հզօր պաշտպանութիւնը ապահով ապաստան մըն է ձեզի՝ անոնց չարամտութեան գէմ:

48. Անոնց (Հրէաներուն) մէջ կան մարդիկ որ սուրբ Գիրքերը կ'եղծանեն և կ'ըսեն՝ մինք զքեզ լսեցինք, բայց Համագույն գէմ քիր ցարդ և քննէ զմեզ. անոնք (իրենց լեզուով) կը միջնցնեն իրենց խօսքերուն իմաստը և կ'անպատուեն (Ճշմարիտ) կրօնքը:

49. Ինչու չեն ըսեր՝ մինք լսեցինք զքեզ և պիտի հնագունդինք. լոէ մեզ և մեր դատաւորը եղիր (³): Եթէ հնագունդութեան լեզուն գործածէին, ի՞նչ ասաւելութիւններ ձեռք պիտի ձգէին. բայց Աստուած անիծեց զանոնք, իրենց նենգամտութեանը համար. անոնց մէջ հաւատացեալները պղտիկ թիւ մը կը կազմնն միացն (⁴):

50. Ո՛վ Հրէաներ, հաւասացէք այն Գիրքին որ Հնգամատեանին ճշմարտութիւնը կը հասաւատէ, մինչ գէմքերուն այլակիրպութիւնը գեռ չէ կատարուած և երեսները հակառակ կողմ չեն դարձուած (⁵): Հաւատքի դարձէք, մինչ գեռ չենք անիծած զձեզ, ինչպէս անիծեցինք շարաթի հանգիստը աւրողները (⁶): Աստուծոյ հրամանը (անընթափակէս) կը գործադրուի:

(1) «Համած»: (2) «Եւ մեր գրայ ակնարկ մը նետէ»:

(3) Այսինքն, Հրէական ցեղին մէջէն փոքրամնանութիւն մը միայն ընդդրկած է Մուհամմէտի կրօնքը (Քաղիմիքի)

(4) Այսինքն, մինչ վեղերը այնպէս մը չեն պլարուած տակաւին գէմքերը կոնակին կողմը դառնան. առ պիտի ըլլայ աստուածամբժներուն պատիմը, կ'ըսեն իսլամ մեկնիչները:

(5) Տե՛ս ճանօթութիւն էջ 38.

51. Աստուած երբէք չպիտի ներէ կռապաշտներուն .
միւս մեղքերը պիտի ներէ որոնց որ ուղէ , բայց կռա-
պաշտութիւնը ⁽¹⁾ սճիրներուն ամէնէն մնջն է :

52. Դուք տեսաք այն մարդիկը որոնք ինքզինքնին
արդար կը գաւանին ⁽²⁾ : Բայց Աստուած պիտի արդա-
րացնէ միայն զանոնք որ ուղէ . անիկա ոչ ոքի դէմ ա-
նարդար պիտի չըլլայ ⁽³⁾ :

53. Չե՞ս տեսներ թէ ինչպէս սուտեր կը գարդնեն
Աստուծոյ մասին . այս ամբարշտութիւնը բաւական (մեծ)
ոճիր չէ արդեօք :

54. Չէ՞ք դիտած Հրէաներուն սխալը անոնք (սուրբ
գիրքերուն մէկ մասը ընդունելէ ետք) տակաւին կը հա-
ւատան ձիթի և թակուդի ⁽⁴⁾ և կը պնդեն թէ
(իրենց) անհաւատաներուն հիմնած կրօնքը աւելի ձշմարիտ
է քան հաւատացեալներուն կրօնքը :

55. Իրենք (են որ) ծածկուած են աստուծային ա-
նէծքով . ո՞վ կարող է պաշտպանել այն՝ զոր Աստուած
անիծած է :

56. Երկնային արքայութեան մէջ ⁽⁵⁾ բաժին մը պի-
տի ունենա՞ն իրենք՝ որ իրենց նմաններուն լումայ մը
տուած ըլլալուն համեր կը յաւին ⁽⁶⁾ :

(1) «Ուրիշ չաստուածներ Աստուծոյ հաւատար դնելը»

(2) «Որոնք ինքինքնին արդարացնել կը ջանան .

(3) «Մարդիկ շըւզի մը չափ անարդարութիւն չափուի կրեն . ,

(4) Կռապաշտ Արարներուն աստուածութիւններն էին ասոնք:

(5) «Աօխարիի կոյսութեան մէջ » կը թարգմանէ Քաղի-
մբաքի , յարելով թէ Հրէաները կը յաւան օր մը , Մեսիայի գա-
լուստի օրը , աշխարհի կայսութեան տիրանալ :

(6) «Իրենք որ արմաւի կուտին փութին մէջէն շիւլ մը իսկ
չեն տար :

57. Պիտի նախանձին այն բարիքներուն զորս Աստ-
ուած տուած է (ուրիշներուն:) եւ սակայն Ազրահամի
սերունդին տուինք սուրբ գիրքերը , իմաստութիւնը և մնջ
թագաւորութիւն մը :

58. Իրենցմէ ոմանք կը հաւատան Մարգարէին , իսկ
ոմանք ալ անհնազանդ են անոր ձայնին . բայց գեհնենին
կրակը բաւական է իրենց (գործած ոճիրներուն):

59. Անոնք որ մեր յայտնած ձշմարտութիւններուն
հաւատալ պիտի մերժեն , բոցերուն մէջ պիտի գանձավի-
ժենք . իրենց մորթը կրակին մէջ մոխիր ըլլալուն պէս ,
ուրիշ մորթ մը պիտի հաղցնենք , որպէս զի նոր չար-
չարանքներու զո՞ւ ըլլան : Աստուած հզօր է և իմաստուն :

60. Անոնք որ հոււտացեալ ըլլալով հանդերձ , բա-
րիք կը գործեն , պիտի մացուին պարտէզներու մէջ ուր-
գետեր կը հոսին , ու հոն պիտի բնակին յաւիտենական
երջանկութեամբ : Հոն պիտի գանեն մաքրագործուած կի-
ներ և հեշտալի հովանիներ :

61. Աստուած ձեզի կը հրամայէ իր տիրոջը վերա-
դարձնել ձեր քով ձգուած մէկ բանը , և արդարութեամբ
դատել ձեր նմանները : Անիկա ձեզի կը հրամայէ հնա-
զանդիլ այս պատուէրներուն ⁽¹⁾ որովհետեւ ամէն բան կը
տեսնէ և կը լոէ անիկա :

62. Ո՞վ հաւատացեալներ , հնազանդեցէք Աստուծոյ
և իր Մարգարէին , և ձեր մէջ հեղինակութիւն վայելող-
ներուն : Ձեր անհամաձայնութիւնները հարթելու համար
գացէք Աստուծոյ առջեւ ⁽²⁾ և Մարգարէին , եթէ Աստու-
ծոյ և վերջին զամաստանին կը հաւատաք : Ձեր անհա-

(1) «Աստուծոյ պատուէրածը գեղեցիկ գործ մըն է :

(2) Այսինքն Քուրանին , որ Աստուծոյ իօսքն է :

մաճայնութիւնները կարգադրելու ամենէն իմաստուն և յարմար հղանակը այս է :

63. Դուն չը դիտեցի՞ր զանոնք՝ որ կը վաստահացնեն թէ կը հաւատան Քուրանին (և քեզմէ առաջ դրկուած) սուրբ գիրքերուն, և ատկան կ'ուզեն գաստուիլ թակուզի առջեւ, հակառակ որ իրենց արգիրուած էր հաւատալ անոր. բայց Սատանան կը ջանայ թանձրացնել այն աղջամուզը ուր կը գտնուին անոնք (¹):

64. Երբ անոնց առաջարկէք երկինքէն իշխած Գիրքին վարդապետութեան անսալ և Մարգարէն խօսքը մտիկ ընել, զայրոյթով կը փախչին (որովհետեւ կեղծաւոր են:)

65. Երբար աղէտ մը, որ իրենց գէշ արարքներուն արդար գինն է, ծանրանայ իրենց վրայ, քեզի պիտի դիմեն և Աստուծոյ անունով պիտի երգնուն թէ՝ միայն բարի և հաշուարար գործեր փափաքեցան:

66. Աստուծ կը կարգայ անոնց սրտերուն խորը, հեռացի՛ր անոնցմէ. Խիստ յորդորներ ըրէ անոնց (և ըսէ անանկ խօսքեր որոնք անոնց հոգին մէջ կը միշտնուին:)

67. Մենք զրկեցինք մարգարէներ որպէս զի անոնց հնազանդիք. Կմէ մոլութեան մէջ ապլած մարգիկ քեզի վերադառնան, Կմէ Աստուծմէ ինպրեն իրենց մեղքներուն թողութիւնը, և Կմէ գուն անոնց համար միջնորդես, Աստուծ պիտի գթայ և պիտի ներէ անոնց:

68. Կ'երգնում յանուն քու Աստուծոյդ որ անոնք հաւատացեալ չպիտի ըլլան մինչեւ որ իրենց անհամաձայնութեանց հաշուարար չի կարգեն քեզի. Քու վժիոդ պիտի փարատէ անոնց կասկածները, և անոնք (ամրող ջովին) պիտի հնազանդին:

(1) «Սատանան կ'ուզէ ճշմարտութեան ճամփոյէն մոլուցնել զանոնք» :

69. Եթէ անոնց պատուիրած ըլլայինք ինքզինքնին զսել, կամ իրենց սասցուածքը (¹) լքել, քիչերը միայն պիտի գործադրէին այս պատուէրը, և ասկայն եթէ գործադրէին Աստուծոյ պատուէրը. արժանիք մը պիտի ունենային (²), և իրենց հաւատքը պիտի ամրապնդուէր:

70. Զանոնք պիտի վարձատրէինք հրաշալիօրէն, և փրկութեան ճամբուն մէջ պիտի առաջնորդէինք:

71. Անոնք որ կը հնազանդին Աստուծոյ և իր Մարգարէին, պիտի մտնեն մարգարէներուն, արգարներուն, մարտիրոսներուն և բարերարներուն փառաւոր ընկերութեան մէջ զոր Աստուծած ողողեց իր ամէնէն հազուագիւտ շընորհներովը:

72. Ահա այսպէս է Աստուծոյ առաստաձեռնութիւնը, իր գիտութիւնը բաւական է ամենուն:

73. Ո՞վ հաւատացեալներ, պատերազմի միջոցին զգոյշ եղէք, (և յառաջ գացէք) թէ՛ առանձին և թէ խրմբովին յարձակած միջոցնիդ:

74. Զեր մէջէն ոմանք (գանդաղութեամբ) ետ պիտի մնան. Երբ գուք ձախորդութիւն մը կրէք անոնք ինքզինքնին պիտի չնորհաւորեն և երկինքին չնորհակալ պիտի բլան որ կուտին չը մասնակցեցան:

75. Երբ Աստուծ ձեղի յաղթանակ մը զրկէ, պիտի ըսեն, (իրբե թէ Աստուծոյ և ձեր միջն բարեկամութիւն մը գոյութիւն չ'ունենար.) Երանի՛ թէ մնոնք ալ անոնց հետ պատերազմած ըլլայինք, հիմա հարուստ աւար մը ստացած կ'ըլլայինք:

76. Թո՛ղ անոնք, որ աշխարհազին կեանքը կը զոհեն հանդերձեալ կեանքին, Աստուծոյ գրօշին տակ շարուին.

(1) «Իրենց երկերը» (Քաղիմիրսպի)

(2) «Ատիկա աւելի օգտակար պիտի ըլլար իրենց» (Քաղիմիրսպի)

պատերազմի միջոցին մեռնին թէ յաղթական դուրս գան, փառաւոր վարձատրութիւն մը պիտի բնդունին (մեղմէ):

77. Ո՞վ կրնայ արդիլել զձեղ կռուելէ հաւատաքի համար (մինչ) ձեր մէջէն տկարները, կիները և տղաքները կը գոչեն. Տէր, ազատէ մեղ այս հարստանարիչներու քաղաքէն, քու կողմէդ պաշտպան մը զրկէ մեղի:

78. Հաւատացեաները երկինքի շահերը կը պաշտպանեն, խակ անհաւատները թակուդի զրօշին տակ կը կռուին. Սատանային մշակներուն դէմ մարտնչեցէք. անոր ռազմագիտութիւնը տկար է:

79. Դուք դիտած էք զանոնք որ ատեն մը կռուելէ ազատ ըլլալով պարտաւոր են ազօթել և ողորմութիւն տալ. յետոյ երբ անոնց հրաման եղած է կռիւը սկսիլ, մեծ մասը վախնալով անհաւատներէն (¹) այնքան՝ որքան կը վախնան Աստուծմէ — թերեւ ալ աւելին, գոչած են, Տէր, ինչո՞ւ պատերազմիլ կը հրամայես մնպի. ինչո՞ւ թոյլ չես տար որ մեր կեանքին վերջաւորութեանը համինք: Պատասխանէ անոնց. այս աշխարհի վայեկիները անցաւոր են. հանդերձեալ կեանքը լաւագոյն կեանքն է անոնց համար որ Աստուծմէ կ'երկնչին. հոն ոչ ոքի (շիւղի մը չափ իսկ) անարդարութիւն չպիտի ըլլայ:

80. Ուր որ ալ ըլլաք, մահր պիտի համին ձեզի. եթէ բարձր աշտարակներ ալ շինէք, մահուան հարուածներուն դէմ չպիտի կրնաք պաշտպանուիլ: Երբոր անհաւատները յաջողութիւն մը ձեռք ձգեն, կ'ըսմն. Աստուծ զրկեց սպիկա, երբոր ձախորդութիւն մը կրեն, կ'ըսեն. սպիկա քեզմէ կռւգայ ո՞վ Մուհամմէտ (²). ըսէ անոնց.

(1) «Մարդոցմէն» (Քաղիմիրաքի)

(2) Մէտինէի հրէաները Մուհամմէտին կը վերագրէին ուտեստի ողութիւնը, որովչետեւ երբ Մուհամմէտ Մէտինէ գնաց սոտւար բանակի մը հետ, բնականաբար ուտեստը սուղցաւ հոն:

ամէն բան Աստուծմէ կռւգայ, բայց դուք չեք հասկնար ձեզի բացատրուած բանը:

81. Երբ քեզի բարիք մը համին, Աստուծմէ է որ կը համին. իսկ չարփը քու անձէդ կը բղիսի, դուն (ո՞վ Մուհամմէտ) մեր Մարգարէն ես զոր զրկեցինք քու նմաններուդ. երկինք վկայ է քու առաքելութեանդ, անոր վրկայութիւնը բաւական է:

82. Ո՞վ որ Մարգարէն կը հաւատայ, Աստուծոյ կը հաւատայ. մենք զքեզ չը զրկեցինք որպէս զի պահապանըն ըլլաս անոնց որ քու ձայնիդ անհազանդ են:

83. Քու առջևել անոնք կ'ըսեն, մենք կը հնապանողինք: Հաղիւ թէ քեզմէ կը հեռանան, (մութին մէջ) իրենց խօսքերուն հակառակ ծրագիրներ կը շինեն, բայց Աստուծ դրի կ'առնէ անոնց մեքենայութիւնները. փախիր անոնցմէ. վատահութիւնդ մի՛ խախտեր Աստուծոյ վրայէն. անոր պաշտպանութիւնը ապահով ապաստանարան մըն է:

84. Միթէ անոնք իրենց աչքին առջեւ չունին Քուը ըանը. եթէ Աստուծմէ զատ ուրիշ մը ըլլար անոր հեղինակը, միթէ շատ մը հակառակ կամ կամ գտնը անոր մէջ:

85. Անմիջապէս որ անոնք ստանան զիրենք վատահացնող կամ տագնասպեցնող լուր մը, ասոր անոր կը յայտնին. եթէ յայտնէին Մարգարէն կամ իր փոխանորդներուն (¹), անոնք որ պիտի փափաքէին լուրը իմանալ, (այս վերջիններուն) բերնէն պիտի իմանային: Եթէ սաստուծացին գութը (և չորհը) ձեր վրայ չը հակէր, մեծ մասամբ պիտի իյնայիք Սատանային թակարդներուն մէջ:

86. Հաւատաքի համար կռուեցէք, միայն ինքզինք-

(1) «Կամ իրենց պետերուն» (Քաղիմիրաքի)

Նույգ համար աշխատեցէք⁽¹⁾: Հաւատացեաները պատեսրազմի մղեցէք, Աստուծոյ բաղուցը կրնայ կասեցնել անհաւատաներուն ռազմիկ հոանդը. աւելի հզօր է ան և իր պատիմները ահաւոր են:

87. Սն՝ որուն միջնորդութիւնը բարիք յառաջ կը բերէ⁽²⁾ պիտի վարձառորուի. իսկ ան որ աղետաբեր հետևանքներու համար կը միջնորդէ, պատիմը պիտի ստանայ, որովհետեւ Աստուած ամէն ինչ կը դիմէ:

88. Երբ մէկը բարեէ ձեզի, բարելը առէք նոյնքան կամ աւելի պարկեցտութեամբ. Աստուած կը հշոէ բոլոր արարքները:

89. Աստուած միակ է. անիկա զձեղ պիտի հաւաքէ յարութեան օրը. այս մասին չէք կրնար կասկածիլ. Աստուծոյ խօսքէն աւելի ճշմարիտ ի՞նչ կայ:

90. Չեր ի՞նչ փոլիթը թէ անհաւատները երկու հատուածի բաժնուեր են⁽³⁾, Աստուած զանոնք նետեց (անհաւատներուն մէջ, ի վարձ իրենց արարքին:): Դուք կ'ուզէք առաջնորդել զանոնք որ Աստուած մոլորեցուց. լոյս չիայ այլեւս անոնց համար որոնք մութին մէջ միաբնուած են Աստուծոյ ձեռքով:

91. Անոնք ուզեցին զձեղ անհաւատ դարձնել իրենց նման, և զձեղ իրենց ամբարշտութեան մասնակից

(1) «Ծանր գործերը միսն գուք կատարեցէք» (Քաղիմիրսք)

(2) «Ան, որուն նպատակը գովելի է»

(3) «Կեղծաւորներուն մասին ինչու երկու հատուածի բաժնուեր էք.» Քաղիմիրսքի, որ այսպէս կը թարգմանէ, կը յարէ թէ այս հատուածը ուզրուած է անոնց որ Մէտինէ հասնելէ առաջ ինդրեցին Մուհամետէտէն որ զիրենք արձակէ. ասոնք իրենց ճամբան շարունակեցին անջատօրէն, մինչեւ որ կատաշտներու հանգիպեցան. իօլամներէն ոմանք այս անջատուողները կեղծաւոր կամ անհաւատ կ'անուանէին. ոմանք ալ՝ ոչ:

ընել: Մի՛ հաստատէք անոնց հետ ո եւ է կապ, մինչեւ որ իրենց հայրենիքը թողուն Աստուծոյ հաւատաբը պաշտապանելու համար: Երբ (իրօք և խոստավանութեամբ) անհաւատութեան վերադառնան, բոնեցէք և մեռցուցէք զանոնք, ուր որ ալ գտնէք, անոնց մէջ ո՛չ բարեկամ ո՛չ ալ պաշտապան մի՛ ունենաք:

92. Այս օրէնքին բացառութիւն կը կազմեն անոնք, որ ձեր դաշնակիցներուն մէջ ապաստան կը փնտուն, և անոնք որ հարկադրուած են ձեզի դէմ պատերազմ մղել, կամ բուն իսկ իրենց ազգին դէմ կոռւիլ: Աստուած (եթէ ուզէք) կրնար անոնց գերակշիռ դիրք մը տալ ձեր վրայ, և անոնք (շարունակ) պիտի յաղթէին ձեզի: Երբ զարգին ձեզի դէմ կոռւելէ, և հաշտութիւն առաջարկեն, Աստուած կ'արգիլէ որ անոնց վրայ յարձակիք:

93. Կան ուրիշներ ալ, որոնք կ'ուզեն գաշնակից ընել ձեր և իրենց ազգին հաւատաբը⁽¹⁾: Անոնք անհնաւզանգութիւն ցոյց կուտան, ամէն անզամ որ այդ բանին հրաւիրուին⁽²⁾: Եթէ շարունակեն ձեզի դէմ զէնք բարձրացնել, եթէ ձեզի հաշտութիւն չառաջարկեն (և եթէ ձեզի դէմ կոռւելէ չհրաժարին) բոնեցէք զանոնք և սպաննեցէք ուր որ ալ գտնէք. ձեզի կուտանք բացարձակ իշխանութիւն մը՝ անոնց վրայ:

94. Իսրամի մը⁽³⁾ ներելի չէ սպաննել ուրիշ իսրամ մը: Եթէ սպաննութիւնը գործուած է ակամայ, մարդաբաննը պարտաւոր է հաւատացեալ զերիի մը փրկանքը⁽⁴⁾ և սպաննեալին ընտանիքին վճարել օրէնքին

(1) «Իրենց և ձեր ազգին վատահութիւնը շահիւ»

(2) «Ամէն անգամ որ անկարգութեան մէջ իյնան, պիտի յաղթուին:» (3) «Հաւատացեալի մը»

(4) «Պարտաւոր է հաւատացեալ զերիի մը աղատութիւն տալւ»

սահմանած (արեան) գինը⁽¹⁾։ տարբեր խնդիր է, եթէ սպանեալին ընտանիքը բաշխէ այս գումարը (իբր ողորմութիւնը)։ Հաւասացեալի մը մահուան փոխարէն, եթէ նոյն խակ անիկա թշնամի ազգի մը պատկանի, գերիի մը ազատութիւն պէտք է տալ։ Խակ երբ սպանեալը դաշնակից ազգի մը կը պատկանի, հաւասացեալ գերիի մը ազատութիւն պէտք է չնորհել և մեռեալին ընտանիքին վճարել օրէնքով սահմանուած գումարը։ Ան որ արձակելիք գերի մը չդժոնէ, երկու ամիս շարունակարար ծով պիտի բռնէ։ այս պատիժները սահմանած է Աստուած, որ գիտուն և իմաստուն է։

95. Ան որ կամաւ սպաննէ հաւասացեալ մը, զըժոխքը պիտի ստանայ իբր վարձք։ հնա յաւիտենապէս պիտի բնակի։ Աստուած, զայրացած անոր գէմ, պիտ անիծէ և սուկալի տանջանքներու պիտի դատապարտէ զայն։

96. Ո՛վ հաւասացեալներ, երբ կոխի ձեռնարկէք նուիրական պատերազմին համար կշռեցէք ձեր քայլերը⁽²⁾։ աւարին ծարաւը թող կարծել չտայ թէ անհաւատ մըն է ձեզի խաղաղութեամբ բարեւ տուողը⁽³⁾։ Աստուած տէր է անսահման հարստութեանց։ անցեալին մէջ այսպէս բաներ ըրիք։ Աստուած ներեց ձեզի գործի սկրսելէ առաջ (ծշրտութեամբ) տեղեկացէք։ Աստուած ձեր արարքները կը տեսնէ։

(1) Այս գումարը 100 սուղան գինն էր, կըսէ ձեւալէտին։

(2) «Ճշգրիտ տեղեկութիւններ առէք»։

(3) Այս պատուէրը Մուհամմէտ ուղղած է իր կրօնքին յարողներէն անոնց, որ իբրնց հանդիպած մարդիկը կը սպանէին ւանչաւատ է» ըսելով, մինչ բուն գրդապատճառը կողոպուտն էր։

97. Այն հաւասացեալները որոնք առանց ստիպուած ըլլալու տուներնին կը մնան, նոյն բաղդը չպիտի ունենան, իրենց ինչքը և անձը զո՞տղ կրօնքի պաշտպաններուն հետ։ Աստուած այս վերջիններուն տուած է աւելի բարձր տեղ մը քան առաջիններուն, ամենքն ալ գերագոյն բարդիքը պիտի ստանան⁽¹⁾ բայց անոնք որ նուիրական պատերազմը կը մղնն, աւելի փառաւոր վիճակ մը պիտի ունենան (քան անոնք՝ որ տուներնին կը մնան)

98. Եւ Աստուածոյ քով աւելի բարձր աստիճանի մը վրայ պիտի կանգնին։ աստուածացին գութը և չնորհը իրենց բաժննը պիտի ըլլայ։ Աստուած գթած և անյիշաչար է։

99. Հրեշտակները հարցուցին այն յանցաւորներուն, զորս մահուամբ պատժեցին (իրենց գէմ անօրէնութեամբ վարուած ըլլալուն համար)։ ո՞ր կրօնքին կը պատկանիք⁽²⁾։ անոնք պատասխաննեցին։ մենք կուսպաշտ երկրի մը տկար բնակիչներն էինք։ Հրեշտակները հարցուցին կրկին։ (Աստուածոյ) աշխարհը ըստ բաւականին ընդարձակ չէ։ չէիք կրնար թողուլ այն տեղը ուր կը բնակէիք (և ուրիշ տեղ մը պատասխն փնտուել)։ Ահա այս պատճառով անոնց բնակավայրը պիտի ըլլայ գժոխքը, չարչարանքներու բնակավայրը⁽³⁾։

100. Թէ՛ մէկ և թէ՛ միւս սեռին պատկանող տկար արարածները, օգնութենէ և գասափարակութենէ զուրկ

(1) «Ամենուն ալ գեղեցիկ խոստումներ ըրած է»

(2) «Ի՞նչ ըրած էք» (Քաղիմիքը)

(3) Այս խօսքերը ուղղուած են այն Արաբներուն, որոնք իսլամական կրօնքը ընդունելէ ետք Մէքքէէն չի հեռացան, մինչ պէտք էր հեռանալ կուսպաշտներուն հետ ամէն կապ խզելու համար։

հնացած հայրերը⁽¹⁾ պիտի վայելին (թերեւո) Աստուծոյ օգնութիւնը, որովհետև անիկա զթած և անյիշաչար է:

101. Ան՝ որ իր հայրենիքը թողարկ կ'երթայ պաշտամնել նուրբական կրօնքը, պիտի գտնէ առաստութիւն և մեծ թուով ընկերներ (որոնք միեւնոյն բանը կընեն.) այն հաւատացեալը որ իր ընտանիքը թողարկ կ'երթայ կոռուիլ Աստուծոյ և իր Մարգարէին զրօշին տակ, և հոն կը մեռնի, զթած և անյիշաչար Աստուծոյ ձեռքէն ոլիտի սասնայ իր վարձատրութիւնը:

102. Դուք յանցաւոր պիտի չսեպուիք պնաւ, երբ ձեր ազօթքը կարծեցնէք ճամբորդութեան միջոցին, եթէ կը վախնաք որ անհաւասները պիտի համնին ձեր ետեւէն, անոնք բացէ ի բաց ձեր թշնամիներն են:

103. Երբ բանակին զլուխը կեցած ես, և ազօթքի պիտի հրաւիրես, զինուորներուն մէկ մասը թո՛ղ զէն ի ձեռին ազօթէ քեզի հետ. այնուհետեւ, ազօթքնին ընտները թող ես քաշուին, և միւսները յաջորդեն անոնց. միշտ զգուշական միջոցներ թող ձեռք առնեն ազօթած ատենին և զինուած ըլլան: Անհաւասները պիտի ցանկացին որ ձեր զէնքերը և գոյքերը միասին առած չըլլացիք, որպէս զի ամենքը մէկանց ձեր վրայ խուժէին: Եթէ անձրեւին և հիւանդութեան պատճառով հարկադրութիւնի վէնքերներ վար դնել, ոճիր չպիտի համարուի այս բանը, այսուհետեւ միշտ զգուշ եղէք: Աստուծագործութելի չարշարանքներ պատրաստած է անհաւատներուն:

104. Ազօթքնիդ վերջացնելէ ետք, կրկն խորհեցէք Աստուծոյ վրայ, խնդիր չէ թէ սոքի կեցած, կամ նըս-

(1) «Այն տղաքը որ անկարող են հնարք մը յօրինել, անհաւատութենէ խուսափելու համար» (Քաղիմբրաք)

տած, կամ պառկած ըլլաք. երբ ինքզինքնիդ ապահովութեան մէջ զդաք, ազօթքնիդ լիակատար կերպով ըրէք, հաւատացեալներուն պատուիրուած որոշ ժամերուն:

105. Անհաւասները⁽¹⁾ հալածած ասոեննիդ մի՛ դանւ գաղիք բնաւ նեղութեանց վրայ խորհելով. (եթէ դուք նեղուիք) անոնք ալ ունին իրենց վիշտերը. և դուք անոնց վրայ սա առաւելութիւնն ունիք որ զիտուն և իմաստուն Աստուծոյ վրայ յոյսերնիդ կրնաք դնել:

106. Մենք քեզի երկինքէն զրկեցինք (ով Մոհամեծու) Գիրքը՝ որ ծամբառութիւնը կը պարունակէ, որպէս զի մարդիկը գատես ինչպէս Աստուծած սրպեցուց քեզի. նենգամիտներուն հետ մի՛ վիճարանիր բնաւ, այլ հայցէ Աստուծոյ զթութիւնը. անիկա ողորմած և անյիշաչար է:

107. Զըլլայ որ ստանձնես պաշտպանութիւնն անոնց որ իրենք իրենց կուրացած են. որովհետեւ Աստուծած կ'ատէ նենգամիտները և ամբարիշաները:

108. Անոնք (իրենց ծրագիրները) կը ծածկեն մարդոց նայուածքէն. բայց Յաւիտենականին աչքէն չպիտի կրնան ծածկել բնաւ. անոնց քովն ի վեր կեցած է Աստուծած, երբ, զիշերուան ստուերներուն մէջ, անոնք կ'արտասանեն իրեն անհածոյ խօսքեր. իր զիտութեամբը կ'ընդուրկէ անոնց բոլոր արարքները :

109. Ա՛ն, դուք կը պաշտպանէք անոնց դատը՝ այս կեանքին մէջ⁽²⁾, բայց ո՞վ պիտի համարձակի պաշտպանել անոնց դատը՝ Բարձրեալին առջեւ. յարութեան օրը ո՞ր պաշտպանը պիտի գտնեն:

110. Ան՝ որ մոլութեան ճամբէն ընթանալէ ետք

(1) «Թշնամիները»

(2) «Դուք ինձի հետ կը վիճարանիք այս աշխարհի մէջ անոնց ի նպաստ:»

(Կամ իր իսկ անձին դէմ անօրէնութեամբ վարուելէ յետոյ) Աստուծոյ գութը հայցէ, թողութիւն պիտի գտնէ:

111. Անօրէնութիւն մը գործողը իր հոգին կորուսոք կը պատրաստէ. Աստուծած գիտուն է և խմաստուն:

112. Ան՝ որ յանցանք մը կամ անարդարութիւն մը (ակամայ) գործելէ ետք անմեղի մը վրայ կը նետէ, զրպարտիչ մըն է և խայտառակ ոճիր մը գործած կըլլայ:

113. Անհաւասներուն մէջէն ոմանք վճռած էին զքեղ մոլորեցնել, բայց իրենք են որ կորառեցան (որովհետեւ) աստուծալին բարութիւնը կը հակէր կեանքիդ վրայ. անոնք չկրցան վնասել քեզի. Աստուծած քեզի վրեկեց Գիրքը և խմաստութիւնը. քեզի սորվեցուց այն բանը զոր կ'անգիտանայիր, և զքեղ ողողեց իր չնորհներովը:

114. Իրենց բազմաթիւ (1) խօսակցութեանց նիւթը քիչ անդամ բարի է: Ան՝ որ կը յանձնարարէ ողորմութիւն տալ, արդարութիւն ի գործ գնել, մարդոց միջեւ համերաշխութիւն պահել և որ իր պարտականութիւնը կը լրացնէ Աստուծոյ հաճոյ ըլլալու ցանկութեամբ, (անտարակոյս) չքեղ պարզեւ մը պիտի ստանայ (մեղմէ):

115. Ան՝ որ Մարդարէէն զասուի յորմէնեաէ ուղիղ ձանապարհը յայտնուեցաւ իրեն, ան՝ որ հաւատացեաներուն հետևեած ձամբէն չեղի, պիտի ստանայ իր փափաքածը (2). գեհենին բոցերը իրեն բաժին պիտի մնան. (Բնչ անուելի վերջաւորութիւն մը):

116. Աստուծած երբէք չպիտի ներէ կռապաշտաներուն. (ուրիշ յանցաւորներէ) անոնց որ ուղէ՝ պիտի ներէ, բայց կռապաշտաները ոչինչ պէտք է յուսան իր գթութենէն:

(1) « Քաղաքնի »

(2) « Իրեն պիտի դարձնենք մեր կռնակը, ինչպէս ինքը մեզի դարձուց իր կռնակը. »

Բարձրեալին հաւասար ուրիշ չաստուծներ դնելը լրումն է կուրութեան:

117. Անոնք Աստուծոյ տեղ չաստուծուհիներ կը պաշտեն (1). բայց (փոխանակ Աստուծոյ) Սատանան է իրենց պաշտամունքին առարկան:

118. Աստուծոյ անէծքը անոր վրայ է. Սատանան ըստու. քու հետեւորդներուդ մէկ մասը պիտի զրաւեմ, զանոնք պիտի մոլորեցնեմ, անսոնց մէջ կիրքեր պիտի ծնցնեմ. հրաման պիտի ընեմ որ (կարգ մը) կենդանիներու ականջները կտրեն և Աստուծոյ ստեղծած էակներուն դէմքը այլափոխեն (2). այսպէս խօսեցաւ Սատանան, բայց այն հաւատութացը որ իր Տէրը լքերով, Սատանային պաշտպանութեանը կ'ապաւինի, թշուառականի պէս պիտի կորսուի:

119. Սատանան զինքը պաշտղները կը շացնէ խօսառմեներով, անոնց սիրափին մէջ կիրքերու կրակը կը վառէ. բայց իր խօսառմեներուն արդիւնքը խարեւայութիւնը միայն պիտի ըլլայ (3):

(1) Արաքները՝ դեռ մահմէտական չեղած՝ անանկ կը հաւատային թէ հրեշտակները Աստուծոյ աղջիկներն են և անսոնց աստուծավայել պատիւներ կ'ընծայէին. Մէքքէի Արաքները մասնաւութաբար կը պաշտէին կաթա, Օզա և Մէնաթ անուն երեք չաստուծուչիներ :

(2) Եացեա մեկնիչը կը կարծէ թէ Մուհամմէտ իր այս խօսքերով կը ձազկէ աւելորդապաշտութիւնը Մէքքէցիներուն, որոնք էդ ուղտի մը ծնած տասներորդ ձագին ականջը կը կարէին և նուիրական կենդանի մը կը համարէին զայն: Իսկ ուրիշ մեկնիչներ կը հաւասաբն թէ Մուհամմէտ Կուզէ դաստապարտել գերիներուն վրայ ի գործ դրուած մալումը, անսոնց գէմքին և մարմին վրայի խարանումները, և մարդոց ու կիներու միջեւ կատարուող հակաբնական յարաբերութիւնները :

(3) « Բայց անեկա կը խօսանայ միայն կուրցնելու համարւա (Բաղիմիրսքի)

120. Այսպիսիներուն բնակավայրը գեհենը պիտի ըլլաց . ու անոնք դուրս ելելու ճամբան չպիտի զանեն :

121. Այն հաւատացեալները որ առաքինի գործեր կը կատարեն , Աստուծոյ խոստումով պիտի մտնեն գետերով ոռոգուած պարտէղներու մէջ , ու հնա պիտի բնակին յաւիտենապէս . Աստուծոյ խոստումները նշմարիտ են . իր խօսքն աւելի անսխալական ի՞նչ կայ :

122. Բայց այս բանը չի կրնար ըլլալ ձեր փափաքներուն համաձայն , ոչ ալ այն ձեւով որ Քրիստոնեաները⁽¹⁾ կը մաղթեն : Ո՛վ որ չարիք գործէ՝ չարիք պիտի ստանայ , և Աստուծոյ քով ո եւ է պաշտպանութիւն չպիտի գտնէ :

123. Անոնք որ (այր ըլլան թէ կին) բարիք գործեն և միեւնոյն ժամանակ խալամական հաւատքը ընդունած են , արքայութիւն պիտի մտնեն ու չպիտի խարսխին (իւրենց արուելիք վարձարութեանը ամենափոքր չիւզի մը չափ իսկ) :

124. Իսլամութենէն⁽²⁾ աւելի սրբազն կրօնք մը կա՞յ . ի՞նչ բան աւելի հաճելի է Աստուծոյ քան ճականիս դարձնել դէպ իրեն , բարիք գործել , հետեւելի հաւատքին Սքրանամի որ պաշտեց միակ Աստուածը և արժանի եւ զաւ անոր բարեկամութեան :

125. Աստուած երկնքի և երկրի վեհապեան է . իր անահամանութեամբը կ'ընդգրկէ ամբողջ տիեզերքը :

126. Քեզի խորհուրդ պիտի հարցուի կանանց վրայով . ըսէ . Աստուած անոնց հանդէպ ձեր ունեցած պարտականութեանց մասին պատուերներ տուած է . Քուրա-

(1) «Ա. Գրոց մարդիկը» (Քաղիմիրաքի)

(2) «Ինքզինքը ամբողջովին Աստուծոյ նուերելու կրօնէն»
(Քաղիմիրաքի)

նին մէջ ան կուտայ պատուէրներու որբուհիներու մասին որոնց չէք հասուցաներ ինչ որ օրէնքը սահմանած է , և զորս կութիւնն առնել կը մնրմէք⁽¹⁾ : Աստուած պիտի ուսուցանէ ձեզ թէ ինչպէս պէտք է վարուիլ պզափկ արզոց հանդէպ , որպէս զի արդարութիւն ընէք անոնց . ինչ բարիք որ գործէք Աստուած պիտի գիտնայ :

127. Երբ կինը իր ամուսնոյն ատելութենէն և կարծրասրատութենէն կասկածի թէ պիտի արձակուի , պարտաւոր է ջանալ որ զայն հաշտեցնէ⁽²⁾ . փոխազարձ համերաշխութիւնը ամենէն իմաստուն կերպն է . մարզը ագահութեան կը ձգտի . բարի եղէք և զգուչացէք անօրէնութիւն գործելէ : Աստուած կը տեսնէ ձեր գործերը :

128. Հակառակ ձեր ջանքերուն , չէք կրնար ունենալ հաւատար սէր մը ձեր բարոր կիներուն համար . բայց կիտոր մէկ կողմ մի՛ հակեցնէք , ոչ ալ վարանքի մէջ ձրգեցէք զայն⁽³⁾ . արզոր եղէք և վախցէք Աստուածէ որպէս զի իր գթութեան չնորհներուն արժանանաք :

129. Եթէ այր և կին բամնուած են , Աստուած (ըստ բաւականի հարուստ ըլլալով) պիտի հարաստացնէ թէ այրը և թէ կինը⁽⁴⁾ :

(1) Քաղիմիրաքի կ'ըսէ թէ այս տողը կը թարգմանուի նաեւ սապէս . «Որոնց չէք հասուցաներ այն՝ որ օրէնքը սահմանած է , և զորս իբր կին ունենալ կ'ուղղէք :

(2) Այսինքն ամուսնոյն թողուլ դրամօժիտը ամըողջութեամբ կամ մասսմբ :

(3) Քաղիմիրաքի կ'ըսէ թէ՝ Մուհամմէտի պատուէրին համաձայն , մէկէ աւելի կիներ ունեցող ույըերը պէտք չէ այնքան շատ սիրեն մէկ հատը որ միւներուն երեսը չի նային . ի պատիժ սա սպառնալիքը եղած է իրենց . «Ո՛վ որ երկու կին ունի և մնքզինքը ամբողջովին մէկ հատին կուտայ , վերջին դատաստանի օրը իր յետողքին երկու մասերը անհաւատար պիտի ըլլան :

(4) Այսինքն՝ ամուսնոյն դանեւլ պիտի տայ կին մը որ աւելի հաճոյ թուի իրեն , և կնոջ՝ ամուսնին մը որ զինքը արձակողին պատճառած կորուստը դարմանէ :

130. Երկինքի և երկրի մէջ ամէն ինչ որ կայ, Աստուծոյ սեպհականութիւնն է, մենք ձեզմէ առաջ նուիրական մատեանները ընդունողներուն պատուիրեցինք և ձեզի ալ կը պատուիրենք Աստուծմէ երկնչիլ (և անհաւատ չլլալ.) եթէ անհաւատ էք, գարձեալ Աստուծած վեհապեան է երկինքի և երկրի. մեծասուն է անիկա և դովեալ:

131. Տիեզերքը իր սեպհականութիւնն է. իր պաշտպանութիւնը բաւական է:

132. Ո՞վ մահկանացուներ. եթէ Աստուծած ուզէր, կինար զձեզ բնաջնջ ընել և ձեր տեղը ուրիշ մարդիկ ծնեցնել. այս հրաշքը երբէք իր կարողութենէն վեր չէ:

133. Կը փափաքի՞ք ունենալ աշխարհային վարձարութիւններ. ասոնք ձեր ձեռքին մէջն են, ինչպէս նաև հանգերձեալ կեանքի պարզեւները. անիկա ամէն բան կը տեսնէ և կը լսէ:

134. Ո՞վ հաւասացեալներ (երբ Աստուծոյ առջեւ վկայութիւն կուտաք) արդարութիւնը կէտ առ կէտ յարգեցէք, եթէ մինչեւ իսկ հարկագրուիք վկայել ընդդէմ ձեր անձին, կամ ընդդէմ ձեր ծնողքին. ազգականներուն, հարուստին և աղքատին. Աստուծած անոնց (հարուստին և աղքատին) աւելի մօտ է քան դուք. թո՛ղ կիրքը երբէք չմոլորեցնէ զձեզ ճշմարտութեան ճամբայէն. եթէ մերմէք առաջ ձեր վկայութիւնը, գիտցէք որ Աստուծած կը տեսնէ ձեր արարքները:

135. Ո՞վ հաւասացեալներ, հաւասացէք Աստուծոյ, իր Մարգարէին, Գիրքին որ անոր դրկուած է և իրմէ առաջ երկինքէն իջած նուիրական մատեաններուն: Անոր չի հաւասար Աստուծոյ, իր հրեշտակներուն, Քուրա-

նին, Մարգարէին և վերջին դատաստանին, կուրութեան մէջ միացնուած :

136. Այս հաւասացեալը որ անհաւաստութեան մէջ կ'իյնայ և անիկէ գուրս կ'ելլէ կրկին անդամ աւելի խորացէս անհաւաստութեան մէջ իյնալու համար, այլեւս Աստուծմէ թողութիւն գտնելու յոյս չունի բնաւ. Աստուծած (շխակ ճամբուն մէջ) չպիտի առաջնորդէ զայն այլեւս:

137. Կեղծաւորներուն իմաց տուք թէ վշտաչարչար տառապանքներու պիտի ենթարկուին:

138. Անոնք՝ որ իրենց բարեկամները փոխանակ հաւասացեալներուն մէջ վնասուելու, անհաւաստներուն մօտ կը փնտուն, արգեօք կը կարծեն թէ նեցուկ մը պիտի գանեն այս վերջններուն ոյժին մէջ. ամէն տեսակ ոյժ Աստուծմէ կուգայ:

139. Աստուծած կանխապէս յայտնած է ձեզ Քուրանին մէջ, թէ երբ իր վարգապետութիւնը մեկնարաններու ելլէք, մեծ մասը չպիտի հաւատայ և ծաղրէ պիտի. ուրեմն չլլայ որ այսպիսիներու նետ նստիք ելլէք, մինչեւ որ փոխին (իրենց խօսակցութեան նիւթը.) այլապէս, եթէ յաճախէք անոնց մօտ, պիտի նմանիք անոնց, և Աստուծած գժոխքին մէջ միասին պիտի գնէ ամրարիշտը և անհաւատը:

140. Անոնք՝ որ ձեր ձեռնարկներուն արդիւնքին կը սպասն, պիտի ըսեն, երբ Աստուծած յաղթութիւն մը չնորմէ ձեզի. միթէ անոնց պէս միեւնոյն հաւատքը չունինք: Իսկ երբ անհաւատները տանին յաղթանակը, անոնց սա լեզուն կը բանեցնեն. միթէ ձեր վրայ զերաւ կրշտութիւն չունինք և զձեզ չի՞նք պաշտպանած հուատացեալներուն դէմ: Յարութեան օրը Աստուծած պիտի

դատէ զձեղ և թող չպիտի տայ որ կռապաշտները (1) խլամներուն վրայ յաղթանակ տանին :

141. Ամբարիշտները կը ցանկան խարել զԱստուած . բայց անոնք իրենց խարերայութեան զոհը պիտի ըլլան (2) : Երբ աղօթքի միսին , ցուցամոլութեամբ (3) կ'աղօթեն . կը ջանան մարդոց ակնարկը իրենց վրայ դարձնել , բայց իրենցմէ քիչերը Աստուծոյ վրայ կը մտածեն (4) :

142. Անոնք կը տատանին մէկ և միւս հաւատքին միջեւ , և ոչ մէկուն կը կառչին . ան՝ զոր Աստուած կը մոլորեցնէ , այլեւս չպիտի կրնայ գտնել փրկութեան համբան :

143. Ո՞վ հաւատացեալներ , ձեր բարեկամները վնասուցէք միմիայն հաւատացեալներուն մէջ . պիտի ու զէիք Աստուծոյ տալ անհերքելի ապացոյց մը՝ ընդդէմ ձեղի :

144. Ամբարիշտները կրակի անդունդին ամենէն վարի մասին մէջ պիտի նետուին , և ուեւէ մէկը օգնութեան չպիտի համնի իրենց :

145. Բայց անոնք , որ զղջում յայտնելէ և ինքնինքնին ուզգելէ ետք Աստուծոյ կը յարին հաստատորէն , և անկեղծ հաւատք մը ցոյց կուտան , պիտի դաստոին (վերստին) հաւատացեալներու կարգին մէջ և Աստուած շքեղ պարզեներ պիտի տայ անոնց :

146. Աստուած ինչու պատի՛տ անօրինէ ձեղի , եթէ երախտապարտ և հաւատացեալ էք . ինքն իսկ երախտաշէտ է և ամէն բան գիտէ :

(1) «Անհաւատները» (Քաղմիրաքի)

(2) «Բայց Աստուած է որ զանոնք պիտի խարէ ամենէն առաջ»

(3) «Նուլութեամբ»

(4) «Բայց Աստուծոյ վրայ շատ քիչ կը մտածեն : »

147. Աստուած չուղեր բնաւ որ գէշ գործերը հրապարակ հանեք . արթրեր խնդիր է , եթէ զուք զոն էք այդ գէշ արարքին . անիկա ամէն բան գիտէ և կ'իմանայ :

148. Զեր գործած բարիքը ծածկէք թէ հրապարակէք , ձեր կրած չարիքը թէ որ ներէք , Աստուած ներողամիտ և հզօր է :

149. Անոնք՝ որ անհավանդ են Աստուծոյ և իր մարգարէներուն , անոնք՝ որ զԱստուած և մարգարէները իրարմէ զատել կ'ուզեն , մէկ մասին հաւատարով և միւսներուն ոչ և կամայական կրօնք մը կը կազմեն ,

150. Ասոնք ճշմարտապիս անհաւատներ են , որոնք նախատալից չարչարանքներու ենթակայ պիտի ըլլան :

151. Բայց անոնք որ Աստուծոյ և իր մարգարէներուն կը հաւատան և անոնց միջև տարբերութիւն չեն գրներ , պիտի վսրձատրուին , որովհետեւ Տէրը զթած է և անցիշչայր :

152. Հրէաները պիտի ըսեն . երկինքէն դիրք մը իշեցուր մեղլի , անոնք Մովսէէն բան մը աւելի պահանջած էին երբ կ'ըսէին . յայտնի կերպով ցոյց տուր մեղլի զԱստուած : Կայծակը մոխիր դարձուց ժամփաները (1) : Այսուհետեւ այս նենդամիտ ժողովուրդը հորթ պաշտեց , հակառակ որ Ամենակարողին հրաշքները տեսած էր : Բայց մենք ներեցինք իրենց և Մովսէսին տուինք հրաշք գործելու զօրութիւնը :

153. Մինա լեռը մենք բարձրացուցինք (անոնց գըլուխին վեր) ի նշան մեր գաշինքին . մենք անոնց հրամայեցինք մտնել սուրբ քաղաքին մէջ զԱստուած պաշ-

(1) «Բայց առսկալի փոթորիկ մը պայթեցաւ անոնց վրայ ի պատի՛տ իրենց չարութեան» (Քաղմիրաքի)

տեղով և շաբաթը պահել. անոնք մեզի հետ հանդիսաւոր ուխտ կնքեցին:

154. Բայց չի պահեցին իրենց ուխտը և մերժեցին հաւատալ աստուածային վարդապետութեան, անիրաւ տեղը սպաննեցին մարդարէները և ըսին՝ մեր սիրաերը անթրիատ են: Աստուած անոնց ճակատին (⁽¹⁾) վրայ դրաւ իրենց խարերայութեան կնիքը. անոնց մէջ միայն քիչ թիւով հաւատացեալներ կան:

155. Իրենց անհաւատութեան միացուցին (^(ասրաւ փելի) զրաբարտութիւն մը Մարիամին դէմ:

156. Անոնք ըսին, մենք մեռցուցինք զՅիսուս, Մեսիան, Մարիամի որդին, Աստուծոյ առաքեալը: Բայց ոչ, անոնք երբէք չը սպաննեցին զայն, երբէք չը խաչեցին զայն. Երեւակայական մարդ մը խարեց անոնց բարբարութիւնը (⁽²⁾): Անոնք որ այս մասին կը վիճաբանին կասկածներ միայն ունին. ճշմարիտ գիտութիւնը բնաւ չի լուսաւորեր զանոնք, ու եւ է կարծիքի մը կը հնաւեին. անոնք Յիսուսը չառաննեցին, Աստուած իր մօտ բարձրացուց զայն, որովհետեւ իմաստուն և հզօր է:

157. Բոլոր Հրէաները և Քրիստոնեաները պիտի հաւատան անոր իրենց մանէն առաջ. յարութեան օրը իրենց դէմ վկայ պիտի ըլլայ անիկա (⁽³⁾):

(1) « Սիրաբն » (Քաղիմիբաբի)

(2) « Յիսուսի նմանող մարդ մը անոր տեղ խաչը հանուեցաւ »
(Քաղիմիբաբի)

(3) Այս տունին իմաստը երկու ձեւով կը մեկնուի, ոմանք կը ունի թէ Մուհամմէտ բան ուզած է որ ամէն Քրիստոնեայ և Հրէայ իր հոգեվարքի միջացին հարցաքննուած ատենը պիտի խոռափակնի թէ կը հաւատայ Յիսուսի: Ոմանք ալ կը մեկնէն թէ Յիսուս կրկնի աշխարհ պիտի գայ նեաը սպաննելու համար և պիտի ամբողջ աշխարհ պիտի հաւատայ իրեն:

158. Ի պատիժ իրենց չարութեան և ուրիշները փրկութեան ճամբէն հեռացնելնուն համար, մենք ետ ամինք Հրէաներուն մեր տուած չնորհները (⁽¹⁾):

159. (Որովհետեւ) անոնք վաշխառութիւն ըրին, հակառակ իրենց արգիլուած ըլլալուն, և ուրիշներուն ժառանգութիւնը անարդար կերպով սպառեցին (⁽²⁾). մենք ահաւոր պատիժներ պատրաստած ենք իրենց մէջէն անոնց որ անհաւատ են:

160. Բայց այն Հրէաները (⁽³⁾) որոնք հաստատ կը մընան իրենց հաւատքին մէջ, կը հաւատան Քուրանին, Հնգամատեանին, որոնք աղօմք կ'ընեն և ողորմութիւն կուտան, և որոնք կը հաւատան Աստուծոյ ու վերջին դատաստանին. շքեղ վարձատրութիւն մը պիտի ստանան:

161. Մենք քեզի ներչնչեցինք, ինչպէս ներչնչած էինք Նոյը, (անկէ վերջ ապրող) մարդարէները, Աբրահամը, Իսմայէլը, Իսահակը, Յակոբը, տասներկու ցեղերը, Յիսուսը, Յորը, Յովնանը, Անարանը և Սոլոմոնը, Դաւիթին ալ Սալմոնները տուինք:

162. Մենք քեզի ճանչցուցինք մեր մարդարէներուն մէկ մասը. ուրիշներ ալ կան զոր քեզի չպիտի գիտցնենք. Աստուծ (իրապէս) խօսեցաւ Մովսէսին:

(1) « Մենք անոնց արգիլեցինք այն համեղ անունդները, զորսի սկզբան տուած էինք իրենց »

(2) « Ուրիշներուն ստացուածքը սին բաներու համար ծախսեցին », կը թարգմանէ Քաղիմիբաբի և կը յարէ թէ Մուհամմէտ կ'ակնարկէ Հրէաներուն տուած կաշառքին՝ դատաւորները շահելու համար :

(3) « Բոյց անոնց մէջ հաստատ գիտութեան տէր մարդիկը » կը թարգմանէ Քաղիմիբաբի և կ'աւելցնէ թէ Մուհամմէտ կ'ակնարկէ սուրբ գրոց քաջատեղեակ մէկ քանի Հրէաներու որոնք իր բարեկամներն էին, թէև իր կրօնքը ընդունած չէին :

163. Մենք զանոնք զրկեցինք խոստումներով և սպառնալիքներով, որպէսզի մարդիկ այլևս չ'ունենան ո և է չքմնղանք իրենց յանցանքներուն, հզօր և խմաստուն Աստուծոյ առջեւ :

164. Աստուած ինքն իսկ վկայ է այն Գիրքին զոր զրկեց քեզի իր գիտութեան մէջէն. հրեշտակները վկայ են այս բանին, բայց Աստուծոյ վկայութիւնը բաւական է անոր վաւերականութեանը համար :

165. Ով որ մերժէ հաւատալ և Աստուծոյ ճամբէն մոլորի⁽¹⁾ ճշմարիտ ճամբէն բոլորովին պիտի հեռանայ :

166. Աստուած չպիտի ներէ երբէք ոճիրով ամբաստանուած անհաւատներուն. շիտակ ճամբան ցոյց չպիտի տայ անոնց .

167. Այլ ցոյց պիտի տայ գիհենին ճամբան, ուր անոնք պիտի բնակին յաւիտենապէս. տափկա գիւրին է Աստուծոյ համար :

168. Ո՞վ մահկանացուներ, Մարգարէն⁽²⁾ ձեզի կուզայ աւեսել երկնային ճշմարտութիւնները, հաւատացէք, ձեր երջանկութիւնը այսպէս կը ստանանջէ, եթէ անհաւատ մնաք, ան երկնաքի և երկրի վեհապետն է (կը բնայ ձեզի երես դարձնել.) իմաստութիւնը ևւ գիտութիւնը իրեն սեպհականութիւնն է :

169. Ո՞վ դուք, որ սուրբ գիրքերը ընդունեցիք, ձեր կրօնքին մէջ արդար ստհմանէն անդին մի՛ անցնիք⁽³⁾.

(1) « Ով որ ուրիշները կը մոլորեցնէ Աստուծոյ ճամբէն »
(Քաղիմիրաքի)

(2) « Մարգարէ մը »

(3) Մուհամմէտ ըսել կուզէ. Հրէանե՛ր, հաւատացէք Յիսուսի առաքելութեան և դուք, Քրիստոնեանե՛ր, զսյն մի՛ դնէք Աստուծոյ տեղ, ճշմարտութեան մէջ սահմանափակուեցէք :

Աստուծոյ մասին ճշմարտութիւնը միայն խօսեցէք: Յիսուս Մարիամի որդին է, Աստուծոյ և իր Բանին առաքեալը, Աստուած իր Խօսքը Մարիամին վրայ իջեցուց, իր շունչն է հաւատացէք Աստուծոյ և իր մարգարէներուն, և մի՛ բաէք թէ Աստուծոյ մէջ երբորդութիւն կայ: Աստուած մէկ է. այսպէս հաւատալը ձեզի աւելի նպաստաւոր է. փառք իրեն, ինչպէս կրնայ մէկ որդի մը ունենալ. երկնաքի և երկրի վրայ ամէն ինչ որ կայ իրեն կը պատկանի, անիկա ինքվինքին բաւական է⁽¹⁾:

170. Յիսուս Աստուծոյ ծառան ըլլալու չ'ամչնար, ո՞չ ալ իր հրեշտակները՝ որոնք իր գահը կը շրջապատեն և կը հնազանդին իրեն:

171. Այն գոռոգները որոնք կ'արհամարհեն Աստուծոյ պաշտամունքը, որ մը իր ատեանին առջեւ պիտի ելեն:

172. Անոնք որ հաւատացեալ են և բարի գործեր կ'ընեն, Աստուծմէ պիտի ստանան (ձիշդ ու ձիշդ) իրենց վարձքը. երկնաքի չնորհներով պիտի ողողուին անոնք: Իսկ անոնք որ գոռողութեամբ Աստուծոյ հնազանդիլ կը մերժեն, իմուտ չարչարանքներու պիտի երթարկուին.

173. Աստուծոյ դէմ ո՞չ պաշտաման և ոչ ալ նեցուկ պիտի գտնեն:

174. Ո՞վ մահկանացուներ. Աստուած ձեզի իր նըշները յայտնեց. ճշմարիտ լոյսը երկնաքէն իջեցուց ձեզի համար. իր չնորհները պիտի թափէ այն հաւատացեալներուն վրայ՝ որոնք հաստատ կերպով իրեն կը յարին. իրկութեան ճամբուն մէջ պիտի առաջնորդէ զանոնք:

(1) « Իր պաշտամանութիւնը բաւական է. զԱստուած պաշտաման ունենալը հերկ է: » (Քաղիմիրաքի)

175. Քեզի խորհուրդ պիտի հարցնեն . ըսէ անոնց .
 Աստուած ձեզ կ'ուսուցանէ թէ ինչպէ՞ս պէտք է վարուիլ
 հեռաւոր ազգականներու հանգէպ . երբ մարդ մը մեռնի
 առանց զաւակ ձգելու , եւ եթէ քոյր մը ունի , քոյրը
 իր ժառանգութեան կէօը պիտի ստանայ . եղբայրը պիտի
 ըլլայ քրոջ ժառանգորդը , երբ այս վերջինը զաւակ
 թողուր : Եթէ մեռնող մարդը երկու քոյրեր ունի Ժ
 ռանգութեան երկու երրորդը պիտի բաժնեն . եթէ
 բայրներ և քոյրեր ունի , եղբայրները քոյրերուն կրկէ
 պիտի ստանան . Աստուած այսպէս կը յայտնէ ձեզի իւ
 օրէնքները յատակօրէն , որպէս զի չը մոլորիք . իր գի-
 տութիւնը անսահման է :

ՎԵՐՋ Դ . ԳԼՈՒԽԻ

PP99520/44-1

Քուրանի Հայերէն բարգմանուրինը պիտի
բաղկանայ ընդ ամենայն 50 պրակներէ (800 էջ)
կամ 160 էջնց 5 հատուներէ :

Ամբողջ զործին համար կընդունինք

ԿԱՆԽԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիս և գաւառները	15	Մբ.
Եւրոպա	1	Փրանք
Ամերիկա	1	Առլար
Բուռնասան	2	Բաւարի

Ա.ՄԷՆ ՄԷԿ ՀԱՏՈՐ ԿԸ ՇԱԽՈՒԽԻ

4 դր. ի , կամ մէկ մետր , կամ 25 սէնք

Կը գանուի բոլոր դրավաճառներուն մետ .

ԿԵԳՐՈՆԱՏԵՂԻՒՆ է

Յ. Առաստարեան և Որդիք Տպարանը

Կ. Պոլիս , Պապպ-Ալի ճառաշէսի , թիւ 52

Imprimerie A. Assadourian et Fils.

52, Avenue Bab Ali

CONSTANTINOPLE.